

**«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
13 (1)**

Երևան 2025

Ցեղասպանագիտական հանդես

Գլխավոր խմբագիր

Հարություն Մարության, պ.գ.դ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Գլխավոր խմբագրի տեղակալ

Նարինե Մարգարյան, պ.գ.թ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Խմբագրական խորհուրդ

Մելինե Անույան, պ.գ.թ., Արևմտահայոց հարցերի ուսումնասիրությունների կենտրոն,
Հայաստան

Արսեն Ավագյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Ռայմոնդ Գևորգյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
արտասահմանյան անդամ, Ֆրանսիա

Անդրանիկ Դաքեայան, քաղաքագիտության դոկտոր, Հայկազյան համալսարան,
Լիբանան

Ռոբերտ Թաթոյան, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ, Հայաստան

Վահե Թաշճյան, պատմագիտության դոկտոր, «Հուշամատյան» ծրագիր, Գերմանիա

Վալերի Թունյան, պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան

Անահիտ Խոսրոնա, պ.գ.թ., հրավիրված պրոֆեսոր, Հարվարդի համալսարան, ԱՄՆ

Աշոտ Հայրունի, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Էլկե Հարթման, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Բեռլինի ազատ համալսարան,
Գերմանիա

Սևանե Ղարիբյան, հրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ժնևի համալսարան,
Շվեյցարիա

Հայկ Մարտիրոսյան, պ.գ.թ., Լեփսիուսհաուս, Պոտսդամ, Գերմանիա

Վահրամ Շեմսայան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի պետական
համալսարան, Նորթրիջ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Պետրոս Տեր-Մաթոսյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Նեբրասկա-Լինքոլնի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ռուբինա Փիրումյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Միրանուշ Կեսոյան, ր.գ.թ., հայերենի խմբագիր

***Ts'eghaspanagitakan handes* (“Journal of Genocide Studies”)**

Editor in Chief:

Dr. Harutyun Marutyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Associate Editor:

Dr. Narine Margaryan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Editorial Board

Dr. Meline Anumyan, Research Center on Western Armenian Studies, Armenia

Dr., Prof. Arsen Avagyan, Yerevan State University, Armenia

Dr. Antranik Dakessian, Haigazian University, Lebanon

Dr., Prof. Bedross Der Matossian, University of Nebraska-Lincoln, USA

Dr., Prof. Elke Hartmann, Free University Berlin, Germany

Dr., Prof. Ashot Hayruni, Yerevan State University, Armenia

Dr., Prof. Sévane Garibian, University of Geneva, Switzerland

Dr., Prof. Raymond Kevorkian, foreign member of National Academy of Sciences of the Republic of Armenia, France

Dr. Anahit Khosroeva, Visiting Professor, Harvard University, USA

Dr. Hayk Martirosyan, Lepsiusshaus, Potsdam, Germany

Dr., Prof. Rubina Peroomian, University of California, Los Angeles (UCLA), USA

Dr., Prof. Vahram Shemmassian, California State University, Northridge, USA

Dr. Vahé Tachjian, Houshamadyan Project, Germany

Dr. Robert Tatoyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Dr. Valery Tunyan, Institute of History, National Academy of Sciences of the Republic of Armenia

Dr. Miranush Kesoyan, Armenian language editor

Цехаспанагитакан андес (“Журнал исследований геноцида”)

Главный редактор

Арутюн Марутян, доктор ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,”
Армения

Заместитель главного редактора

Нарине Маргарян, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,”
Армения

Редакционная коллегия

Арсен Авагян, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Ашот Айруни, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Мелине Анумян, канд. ист. наук, Центр изучения западноармянских вопросов, Армения

Элке Артманн, доктор истории, профессор, Свободный университет Берлина, Германия

Севанэ Гарибян, доктор права, профессор, Женевский университет, Швейцария

Раймонд Геворгян, доктор истории, профессор, иностранный член Национальной академии наук Республики Армения, Франция

Андраник Дакесян, доктор политологии, Айказян университет, Ливан

Айк Мартиросян, канд. ист. наук, дом-музей Лепсиуса (Лепсиусаус), Потсдам, Германия

Рубина Пирумян, доктор филологии, профессор, Калифорнийский университет в Лос-Анджелесе, Соединённые Штаты Америки

Роберт Татоян, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,”
Армения

Ваге Ташчян, доктор истории, проект “Ушамадян,” Германия

Петрос Тер-Матосян, доктор истории, профессор, Университет Небраски-Линкольна, Соединённые Штаты Америки

Валерий Тунян, доктор ист. наук, профессор, Институт истории Национальной академии наук Республики Армения

Анаит Хосроева, канд. ист. наук, приглашённый профессор, Гарвардский университет, США

Ваграм Шеммассян, доктор филологии, профессор, Калифорнийский государственный университет в Нортридже, Соединённые Штаты Америки

Мирануш Кесоян, канд. фил. наук, редактор армянского языка

Ցեղասպանագիտական հանդեսը (ISSN 1829-3980) գրախոսվող պարբերական է և լույս է տեսնում տարին երկու անգամ՝ մայիսին և դեկտեմբերին, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի կողմից (Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի խճուղի 8/8, հեռ.՝ (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am): Հանդեսը Հայաստանում ցեղասպանագիտության ոլորտի հիմնական պարբերականն է, որի նպատակն է ցեղասպանությունների ուսումնասիրությունը՝ պատմական, սոցիալ-հոգեբանական, ժողովրդագրական, կրոնական, մարդաբանական, իրավական, սեռային, մշակութաբանական և այլ գիտակարգերի տեսանկյունից՝ Հայոց ցեղասպանության շեշտադրմամբ: *Ցեղասպանագիտական հանդեսում* տպագրված հոդվածները, գրախոսությունները և այլ նյութերն արտահայտում են հեղինակների մոտեցումները, որոնք կարող են չհամընկնել «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի մոտեցումներին: «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը որևէ իրավական պատասխանատվություն չի կրում հեղինակների սխալների և բացթողումների համար: *Ցեղասպանագիտական հանդեսն* ինդեքսավորվում է Գիտական հղման հայկական ցուցչի (ԳՀՀՑ) մատենագիտական շտեմարանում: Հոդվածները և գրախոսությունները կարելի է ներկայացնել տպագիր կամ ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ handes@genocide-museum.am:

Ts'eghaspanagitakan handes (“Journal of Genocide Studies”) (ISSN 1829-3980) is a peer-reviewed journal and published twice a year in May and December by the Armenian Genocide Museum-Institute Foundation (8/8 Tsitsernakaberd highway, 0028 Yerevan, Republic of Armenia, (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). *Journal of Genocide Studies* is the main forum for scholarship in the field of genocide studies in Armenia and features articles, reviews and other relevant materials related to the study of genocides from historical, social-psychological, demographic, religious, anthropological, legal, gender, cultural and other scientific fields with a special emphasis on the Armenian Genocide. Articles, reviews and other materials published in the *Journal of Genocide Studies* reflect the opinion of the authors and may not necessarily coincide with the approaches of the Armenian Genocide Museum-Institute Foundation. The Armenian Genocide Museum-Institute Foundation cannot accept any legal responsibility for the errors and omissions made by the authors. *Journal of Genocide Studies* is indexed/abstracted in the Armenian Science Citation Index (ASCI). Articles, reviews, and other relevant materials can be presented in print or sent to the following address: handes@genocide-museum.am.

Цехаспанagitakan андес (“Журнал исследований геноцида”) (ISSN 1829-3980) – рецензируемое издание, выходит в свет два раза в год, в мае и декабре. Журнал издается фондом “Музей-институт Геноцида армян” (Республика Армения, г. Ереван, 0028, Цицернакабердское шоссе 8/8, (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). Это единственное в Армении периодическое издание в области геноцидоведения, целью которого является научное изучение геноцидов с исторической, социально-психологической, социологической, этнографической, религиозной, антропологической, юридической, гендерной, культурной и других точек зрения с акцентированием на исследование Геноцида армян. Статьи, обзоры и другие материалы, опубликованные в “Журнале исследований геноцида,” отражают мнение авторов и могут не совпадать с подходами фонда “Музей-институт Геноцида армян.” Фонд “Музей-институт Геноцида армян” не несет юридической ответственности за ошибки, допущенные авторами. “Журнал исследований геноцида” индексируется в Армянском индексе научного цитирования (АИНЦ). Статьи, обзоры и другие материалы могут быть представлены в печатном виде или отправлены по следующему электронному адресу: handes@genocide-museum.am.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Ռոբերտ Թաթոյան

*Հայոց ցեղասպանության հիմնական փուլի ընթացքում (1915-1916 թթ.) զոհված հայերի թվաքանակի հաշվումները 1915-1923 թվականներին. աղբյուրներ, տվյալներ և մեթոդներ.....*8

Ինեսա Ստեփանյան

*«Դիմադրություն» եզրույթի ձևավորումը և գործածումը ցեղասպանությունների համատեքստում.....*46

Արծվի Բախչինյան

*Ոչ միայն Ֆրանց Վերֆելը. Հայոց եղեռնապատումն օտարազգի գրողների քիչ ծանոթ երկերում.....*64

*Էթիկայի կանոններ.....*92

*Ցուցումներ հեղինակներին.....*93

CONTENT

ARTICLES

Robert Tatoyan

*Calculations of the Armenian Death Toll During the Main Phase of the Armenian Genocide (1915–1916): Sources, Data, and Methods, 1915–1923.....*8

Inesa Stepanyan

*Formulation and Use of the Concept of “Resistance” in the Context of Genocides.....*46

Artsvi Bakhchinyan

*Not Only Franz Werfel: The Lesser-Known Works of Foreign Writers on the Armenian Genocide.....*64

*Ethical Guidelines.....*92

*Instructions for Authors.....*93

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

Роберт Татоян

*Подсчеты численности жертв основного этапа Геноцида армян (1915–1916 гг): источники, данные и методы, 1915–1923 гг.....*8

Инеса Степанян

*Формирование и использование понятия “Сопротивление” в контексте Геноцидов.....*46

Арцви Бахчинян

*Не только Франц Верфель: малоизвестные произведения зарубежных писателей о геноциде армян.....*64

*Правила этики.....*92

*Руководство для авторов.....*93

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈԽԼԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ (1915-1916 թթ.) ԶՈՀՎԱԾ ՀԱՅԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎՈՒՄՆԵՐԸ 1915-1923 թՎԱԿԱՆՆԵՐԻՆ. ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՏՎՅԱԼՆԵՐ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ

Ռոբերտ Թաթոյան

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Հայոց ցեղասպանության զոհերի թվաքանակի վերաբերյալ տվյալներ սկսեցին ի հայտ գալ արդեն 1915 թ. վերջերին - 1916 թ. սկզբներին, երբ հայերի բնաջնջման ծրագիրը տակավին ընթացքի մեջ էր: Չոհերի թվաքանակի հաշվումներն այդ ժամանակ հետապնդում էին գործնական քաղաքական ու մարդասիրական նպատակներ՝ աղետի չափերը ներկայացնելու միջոցով օսման կառավարության ոճրի մասին իրազեկել միջազգային հանրությանը, կասեցնել հայերի դեմ հալածանքները, վերապրած հայերին օգնելու նպատակով կազմակերպել հանգանակություններ:

Հայ զոհերի թվաքանակի հարցը շարունակեց արծարծվել նաև Առաջին աշխարհամարտից անմիջապես հետո՝ Հայկական հարցի առնչությամբ դիվանագիտական բանակցությունների շրջանում: Այդ ժամանակ այն առաջին հերթին կարևորվում էր հայ ժողովրդի կրած մարդկային և նյութական կորուստների համար փոխհատուցում սահմանելու համատեքստում:

Ըստ 1916-1923 թթ. ընթացքում կատարված հաշվումների՝ Հայոց ցեղասպանության հիմնական փուլի ընթացքում (1915-1916 թթ.) զոհված հայերի թիվը մոտ մեկ միլիոն էր: Ըստ ավելի մանրամասն հաշվումներ պարունակող աղբյուրների (Ա. Թոյնթի, Յ. Լեփսիուս և դրանցից սերվող աղբյուրներ)՝ այդ մեկ միլիոնից մոտ 600 հազարը զոհվել էին 1915 թ.՝ տեղահանության և կոտորածների ընթացքում, 400 հազարը՝ 1916 թ. Սիրիայի և Միջագետքի համակենտրոնացման ճամբարներում սովից ու համաճարակներից, այնուհետև՝ ճամբարների լուծարմանը հետևած գործողություններից:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, զոհերի թիվ, վիճակագրություն, Առնոլդ Թոյնթի, Յոհաննես Լեփսիուս, Կ.Պոլսի հայոց պատրիարքարան:

Հոդվածը ներկայացվել է՝ 09.04.2025: Ընդունվել է տպագրության 06.06.2025:

The article was submitted on 09.04.2025 and accepted for publication on 06.06.2025.

Статья поступила 09.04.2025 и была принята к публикации 06.06.2025.

Ինչպես հղել՝ Ռոբերտ Թաթոյան, «Հայոց ցեղասպանության հիմնական փուլի ընթացքում (1915-1916 թթ.) զոհված հայերի թվաքանակի հաշվումները 1915-1923 թվականներին. աղբյուրներ, տվյալներ և մեթոդներ», *Ցեղասպանագիտական հանդես* 13, no. 1 (2025), 8-45.

How to cite: Robert Tatoyan, “Calculations of the Armenian Death Toll during the Main Phase of the Armenian Genocide (1915–1916): Sources, Data, and Methods, 1915–1923,” *Ts’eghaspanagitakan handes* 13, no. 1 (2025): 8–45 .

Как ссылаться: Роберт Татоян, “Подсчёты численности жертв основного этапа Геноцида армян (1915–1916 гг.): источники, данные и методы, 1915–1923 гг.,” *Цехаспанагитакан андес* 13, no. 1 (2025): 8–45.

Ներածություն

Հայոց ցեղասպանության՝ Օսմանյան կայսրությունում հայ բնակչության բնաջնջման աղետի չափի ու ծավալների մասին ամբողջական պատկերացում կազմել հնարավոր չէ առանց դրա վիճակագրական բաղադրիչի, այն է՝ ողբերգության զոհերի թվաքանակի մասին տվյալների:

Նման տվյալներ և այդ տվյալների հիման վրա հաշվումներ սկսեցին ի հայտ գալ արդեն 1915 թ. վերջերին - 1916 թ. սկզբներին, երբ հայերի բնաջնջման ծրագիրը տակավին ընթացքի մեջ էր: Հաշվումներն այդ ժամանակ հետապնդում էին առաջին հերթին գործնական քաղաքական ու մարդասիրական նպատակներ՝ աղետի չափերը ներկայացնելու միջոցով օսմանյան կառավարության ոճրի մասին իրազեկել միջազգային հանրությանը, կասեցնել հայերի դեմ հալածանքները, վերապրած հայերին օգնելու նպատակով կազմակերպել հանգանակություններ:

Հայ զոհերի թվաքանակի հարցը շարունակեց արծարծվել նաև Առաջին աշխարհամարտից անմիջապես հետո՝ Հայկական հարցի առնչությամբ դիվանագիտական բանակցությունների շրջանում: Այդ ժամանակ այն առաջին հերթին կարևորվում էր հայ ժողովրդի կրած մարդկային և նյութական կորուստների համար փոխհատուցում սահմանելու համատեքստում:

1923 թվականից հետո, երբ Հայկական հարցը դուրս մնաց միջազգային դիվանագիտության օրակարգից, Հայոց ցեղասպանության զոհերի թվաքանակի հարցը տեղափոխվեց պատմագիտական ուսումնասիրությունների հարթակ: Պայմանավորված այն բանով, որ հանրապետական Թուրքիայի իշխանությունները շարունակաբար ժխտում են Հայոց ցեղասպանության իրողությունը՝ դրա համար օգտագործելով նաև ժողովրդագրական-վիճակագրական փաստաթղթեր, հարցի շուրջ գիտական բանավեճը դարձել է քաղաքական նպատակներով շահարկման առարկա¹:

Ներկա ուսումնասիրության շրջանակներում մենք ներկայացնելու ենք և քննության ենթարկելու Հայոց ցեղասպանության հիմնական փուլի՝ 1915-1916 թթ. ընթացքում զոհված հայերի թվաքանակի վերաբերյալ 1915-1923 թթ. ընթացքում ի հայտ եկած առավել կարևոր, սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող տվյալները, հաշվումները և հաշվման մեթոդները²:

Նշված ժամանակաշրջանին վերաբերող նյութն ուսումնասիրության առարկա ընտրելը կարևոր է հատկապես հետևյալ նկատառումներով.

1. Հաշվումներն արվել էին թարմ հետքերով, երբ հայերի բնաջնջման գործողությունը տակավին ընթացքի մեջ էր, այսինքն՝ հիմնված են իրավիճակի թարմ ընկալման և գնահատման վրա:

1 Մարկամասն տե՛ս Ռոբերտ Թաթոյան, «Արևմտահայության թվաքանակի և Հայոց ցեղասպանության զոհերի թվի հարցերի նկատմամբ թուրքական պատմագրության որոշ նոր մոտեցումների մասին», *Յեղասպանագիտական հանդես* 2, no. 2 (2014), 90-99:

2 1915-1916 թթ. ընթացքում էին Օսմանյան կայսրության երիտթուրքական իշխանությունները կազմակերպել արևմտահայերի տեղահանության և բնաջնջման հիմնական գործողությունները, ուստի հենց այդ ժամանակաշրջանին ու գործողություններին են վերաբերում ցեղասպանության զոհերի առաջին և հիմնական հաշվումները:

2. Այդ հաշվումները, հաշվումների հիմքում ընկած տվյալները և հաշվման մեթոդները սկզբնաղբյուր են ծառայել հետագա ուսումնասիրողների համար:

Չոհերի թվաքանակի վերաբերյալ 1915-1923 թթ. ընթացքում արձանագրված տվյալների ուսումնասիրությունը թույլ է տալիս դրանք ըստ ծագման աղբյուրի պայմանականորեն բաժանել չորս հիմնական խմբի.

1. Անգլո-ամերիկյան հաշվումների խումբ: Այս խումբը ներառում է Հայերի և ասորիների օգնության ամերիկյան կոմիտեի (հետագայում՝ Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտե) (1916 թ.), Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դիվանագետների (Հենրի Մորգենթաու և ուրիշներ), Ջեյմս Բրայսի և Առնոլդ Թոյնբրիի «Կապույտ գրքի» (1916 թ.), դրանցից սերող և դրանց հիման վրա ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի արտգործնախարարությունների, արևմտյան փորձագետների, կառույցների և հեղինակների՝ արդեն Առաջին աշխարհամարտի ավարտից հետո արած հաշվումները:

Հայկական և սիրիական օգնության ամերիկյան կոմիտեի՝ Չոհերի թվաքանակի հաշվման հիմնական նպատակը մարդասիրական էր՝ վերապրած հայերին օգնելու նպատակով հանգանակություններ կազմակերպելը: «Կապույտ գիրքը» հետապնդում էր աղետի չափը ներկայացնելու միջոցով օսմանյան կառավարության ոճրի մասին միջազգային հանրությանն իրազեկելու նպատակ: Առաջին աշխարհամարտից հետո ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքական գերատեսչությունների հաշվումներն ածանցված են Օսմանյան կայսրության տարածքի ճակատագրի որոշման ծրագրերին:

2. Գերմանական հաշվումների խումբ: Այս խմբում ընդգրկված են Օսմանյան կայսրությունում Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաշվումներն ու գնահատականները, դրանց և այլ տվյալների հիման վրա Յոհաննես Լեփսիուսի հաշվումները: Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաշվումների նպատակը ողբերգության ծավալի մասին սեփական կառավարություններին իրազեկելն էր: Յոհաննես Լեփսիուսի աշխատանքն ուղղված էր հայերի դեմ հալածանքների կասեցմանը, հետագայում Հայկական հարցի հայանպաստ լուծմանը:

3. Օսմանյան հաշվումների խումբ: Այս խմբում կարելի է ներառել Հայոց ցեղասպանությունը ծրագրողներից և իրականացնողներից մեկի՝ ներքին գործերի նախարար Մեհմեդ Թալեաթի՝ Առաջին աշխարհամարտի ժամանակ տեղահանված և տեղահանությունը վերապրած հայերի թվաքանակի հաշվումները, Առաջին աշխարհամարտից հետո օսմանյան նոր կառավարության տվյալը, օսմանյան խորհրդարանի պատգամավորների հնչեցրած թվերը: Թալեաթի հաշվումների հիմնական նպատակը, ըստ երևույթին, հայերի բնաջնջման գործողության արդյունքների ամփոփումն էր: Օսմանյան հաջորդ իշխանությունները տվյալներ են ներկայացրել որպես Առաջին աշխարհամարտում պարտության հետևանք՝ երիտթուրքերի հանցավոր քաղաքականության դատապարտման համատեքստում:

4. Հայկական հաշվումների խումբ: Այս խմբում ներառված են Առաջին

աշխարհամարտից հետո Փարիզի հաշտության վեհաժողովին և հետագա միջազգային այլ խորհրդաժողովների զոհերի թվաքանակի վերաբերյալ հայկական պատվիրակության ներկայացրած տվյալները, ինչպես նաև Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի հաշվումները: Արևմտահայության կրած մարդկային և նյութական կորուստները վիճակագրելու նպատակով Կ.Պոլսի հայոց պատրիարքարանը Օսմանյան կայսրության՝ այդ ժամանակ գործող հայկական թեմեր է ուղարկել լրացման ենթակա համապատասխան հարցարաններ և վիճակացույցի թերթեր: Հասկանալի պատճառներով այդ նախաձեռնությունն ավարտին չի հասցվել, և հավաքված տվյալներն ամբողջական չեն եղել, բայց և այնպես դրանց հիման վրա կատարվել են զոհերի թվաքանակի հաշվումներ, և կազմվել վերապրածների վիճակագրական ցուցակներ: Հայկական պատվիրակությունը և Կ.Պոլսի հայոց պատրիարքարանը Հայոց ցեղասպանության զոհերի թվաքանակի հարցը կարևորում էին առաջին հերթին հայ ժողովրդի կրած մարդկային և նյութական կորուստների համար տարածքային, դրամական և այլ փոխհատուցումներ ստանալու համատեքստում:

Այժմ փորձենք առանձին-առանձին անդրադառնալ վերոնշյալ չորս խմբերում հավաքված տվյալներին:

1. Անգլո-ամերիկյան տվյալների խումբ

ա. Զոհված հայերի թվաքանակի հաշվումներն Առաջին աշխարհամարտի ժամանակ

Արևմտահայության տեղահանության և կոտորածների զոհերի մասին առաջին տվյալները անգլո-ամերիկյան աղբյուրներում ի հայտ են գալիս արդեն 1915 թ. աշնանը: Այսպես՝ լորդ Ջեյմս Բրայսը 1915 թ. հոկտեմբերի 6-ին Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատում ունեցած իր ելույթում արձանագրում էր, որ, ըստ տարբեր աղբյուրներից իրեն հասած տեղեկությունների, Հայաստանում զոհվածների թիվը շատ մեծ է՝ մոտ 800 000³: Լորդ Ջ. Բրայսի այս տվյալը, որի աղբյուրը, ըստ երևույթին, ամերիկյան դիվանագիտական ներկայացուցիչների և միսիոներների գնահատականներն էին, հատկապես՝ Հայկական վայրագությունների հարցով կոմիտեի (Armenian Atrocities Committee) 1915 թ. հոկտեմբերի 4-ի մամլո հաղորդագրությունը⁴, լայնորեն շրջանառվում է ժամանակի անգլալեզու մամուլում⁵:

3 Տե՛ս Arnold Joseph Toynbee, *Armenian Atrocities, the Murder of a Nation* (London, 1915), 6 (քնազիրը՝ “I am grieved to say that such information as has reached me from several quarters goes to show that the number of those who have perished in Armenia is very large. It has been estimated at the figure of 800 000”):

4 Տե՛ս *British Parliamentary Debates on the Armenian Genocide, 1915-1918*, ed. by Ara Sarafian (London: Gomidas Institute, 2003), 28-29, 61-90:

5 Տե՛ս, մասնավորապես, ամերիկյան հեղինակավոր «Նյու Յորք թայմս» պարբերականի 1915 թ. հոկտեմբերի 7-ի համարում «800 000 հայեր հաշվվում են որպես ոչնչացված: Վիկտոր Բրայսը հայտնել է Լորդերի պալատում, որ սա թուրքերի զոհերի հավանական թիվն է» վերնագիրը կրող հոդվածը (տե՛ս “800,000 Armenians Counted Destroyed. Viscount Bryce Tells House of Lords That is the Probable Number of Turk’s Victims,” *The New York Times*, 7 October 1915):

Ձոռների թվաքանակի՝ անգլո-ամերիկյան տվյալների խմբին վերաբերող առաջին մանրամասն հաշվումն իրականացվել է Հայերի և ասորիների օգնության ամերիկյան կոմիտեի կողմից և ներկայացված է կազմակերպության հինգերորդ տեղեկագրում: Այն կազմվել է 1916 թ. մայիսի 24-ին, երբ բռնագաղթի ճանապարհը վերապրած հայերի՝ Սիրիայի և Միջագետքի անապատների համակենտրոնացման ճամբարներում բնաջնջումը, տակավին ընթացքի մեջ էր: Ըստ տեղեկագրի տվյալների՝ 1915 թ. հունվարի դրությամբ հայերի թիվն Օսմանյան կայսրությունում 1 600 000-2 000 000-ի միջակայքում էր: Նշվում է, որ վիճակագրական ճշգրիտ տվյալներ չկան. թուրքական կառավարության տվյալները իրականից չափազանց ցածր են, իսկ Հայոց պատրիարքարանինը՝ երբեմն չափազանց բարձր, ինչը վկայում է մի դեպքում հայ բնակչության թվաքանակը փոքր ցույց տալու, մյուս դեպքում՝ այն չափազանցնելու միտումի մասին:

Այնուհետև տեղեկագրում արձանագրվում է, որ 1916 թ. հունվարի դրությամբ Թուրքիայի հայերի մեկ երրորդից կեսը տեղահանության, հիվանդությունների սովի կամ զանգվածային սպանությունների զոհ է դարձել, և ներկայացվում է վերապրած հայերի վիճակագրությունը. Հալեպ, Դամասկոս, Դեր-Զոր տեղահանված հայեր՝ 486 000, Թուրքիայի այլ շրջաններում ապաստանած հայ փախստականներ՝ 300 000, ռուսական Կովկասում ապաստանած փախստականներ՝ 182 800, Թուրքիայի՝ Ռուսաստանի նվաճած շրջաններում մնացած հայեր՝ 12 100, Սալմաստում (Պարսկաստան) ապաստանած հայեր՝ 9 000, ընդամենը՝ 989 900: Նշվում է, որ եթե այս թվերին ավելացվի Կոստանդնուպոլսի և Զմյուռնիայի չտեղահանված հայ բնակչության թվաքանակը՝ մոտ 150 000, ապա հնարավոր է վերապրածների ընդհանուր թիվը գնահատել մոտ 1 150 000:

Հաշվումն ամփոփվում է հետևյալ կերպ. «Եթե ընդունենք այն տվյալը, որ Թուրքիայի հայ բնակչությունը 1915 թ. սկզբին 1 600 000-2 000 000 էր, ապա զոհերի թիվը պետք է հաշվենք 450 000-850 000-ի սահմաններում: Հավանաբար կարող ենք որոշակի ապահովությամբ ասել, որ զոհված հայերի թիվն առնվազն 600 000 է»⁶:

Հայոց ցեղասպանության զոհերի թվի ավելի մանրամասն հաշվում է պարունակում «Հայաստանի պատմության ամփոփ նկարագրություն մինչև և ներառյալ 1915 թվականը» ծավալուն ակնարկը⁷, որը ներառված է 1916 թ. օգոստոսին Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության կազմած «Հայերի վիճակն Օսմանյան կայսրությունում 1915-1916 թթ.» փաստաթղթերի ժողովածուում («Կապույտ գիրք»): Ակնարկի հեղինակը՝ երիտասարդ պատմաբան Առնոլդ Թոյնբին, որն այդ ժամանակ արտգործնախարարության աշխատակից էր, նաև զոհերի հաշվման մեթոդաբանություն

6 *The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-16. Documents Presented to Viscount Grey of Fallodon, Secretary of State for Foreign Affairs by Viscount Bryce. With a Preface by Viscount Bryce* (London: Printed under the Authority of His Majesty's Stationery Office by Sir Joseph Causton and Sons, limited, 1916), 664. Տե՛ս նաև James Bryce and Arnold Toynbee, *The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-16: Documents Presented to Viscount Grey of Fallodon by Viscount Bryce [Uncensored Edition]*, edited and with an introduction by Ara Sarafian (London: Gomidas Institute, 2005, 2nd ed.), 645-647:

7 Տե՛ս *The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-16*, 590-667: Տե՛ս նաև Bryce and Toynbee, *The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-16*, 595-662:

է սահմանում, որը հետագայում որդեգրում են հարցին անդրադարձած այլ ուսումնասիրողներ⁸:

Նախ՝ Ա. Թոյնբին ընդգծում է խնդրի բարդությունը՝ նշելով, որ հայ բնակչությանը ոչնչացնելու կանխամտածված, համակարգված այս փորձի արդյունքները վիճակագրական տեսքով նույնիսկ մոտավորապես ներկայացնելը հեշտ չէ: Միակ մարդիկ, որոնք կարող էին ճշգրիտ արձանագրել տուժածների թիվը, հենց օսմանյան իշխանության ղեկավարներն էին, բայց քիչ հավանական է, որ նրանք դա արել են, և ավելի քիչ հավանական է, որ նրանք երբևէ այդպիսի թվեր կներկայացնեին քաղաքակիրթ աշխարհի ուշադրությանը⁹:

Արդ, Ա. Թոյնբին արձանագրում է, որ ստիպված է իր հաշվումները կատարել՝ հիմնվելով առանձին անհատների տվյալների վրա, որոնք ի գործու չեն եղել մանրամասն հետաքննություն անցկացնելու պետական պաշտոնյաների կասկածամտության պատճառով և հազվադեպ են հնարավորություն ունեցել հետևելու իրադարձություններին սահմանափակ տարածքից դուրս (այստեղ ուսումնասիրողն ըստ երևույթին ակնարկում է հատկապես տեղում ԱՄՆ-ի և այլ չեզոք երկրների դիվանագետներին ու միսիոներներին): «Մենք պետք է կատարենք մեր հաշվումները՝ միավորելով մասնավոր աղբյուրներից ստացված այս ցաքուցրիվ տվյալները, և քանի որ արևելյան թվաբանությունը հայտնի է իր անճշտությամբ, մենք կօգտագործենք միայն չեզոք պետությունների օտարերկրյա ականատեսների վկայությունները, - նշում է ուսումնասիրողը: - Նման ականատեսները համեմատաբար հեռու են չգիտակցված չափազանցություններից և բոլորովին հակված չեն միտումնավոր խեղաթյուրելու փաստերը, և մենք կարող ենք զգալի վստահությամբ ընդունել նրանց վկայությունները»¹⁰: Այս նախագգուշացումից հետո հեղինակն անցնում է բուն հաշվումին՝ որպես դրա առաջին քայլ նշելով Օսմանյան կայսրության տարածքում տեղահանությունների սկսվելու պահին հայ բնակչության թվի որոշումը, քանի որ ի վերջո մյուս բոլոր թվերը կախված են հենց դրանից: Բայց այդ թիվը, ըստ հեղինակի, շատ դժվար է պարզել, քանի որ դրա անկախ օտարերկրյա հաշվումներ չկան, իսկ ներքին տվյալների միջև անհամապատասխանությունը ծայրահեղ մեծ է¹¹:

Հաջորդիվ Ա. Թոյնբին ներկայացնում է Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի 1912 թ. վիճակագրության և օսմանյան կառավարության տվյալները, որոնց համաձայն՝ Օսմանյան կայսրության հայ բնակչության թիվը համապատասխանաբար 2 100 000 և 1 100 000 է՝ նշելով, որ երկու կողմերն էլ քաղաքական տեսանկյունից հավասարապես շահագրգռված են իրենց թվերը հաղորդելու հարցում, բայց հայերը հավանաբար ավելի

8 Ա. Թոյնբին անդրադարձել է գոհերի թվաքանակի հարցին դեռևս 1915 թ. նոյեմբերին լույս տեսած «Հայկական սարսափներ: Մի ազգի բնաջնջումը» երկում, որում նա ներկայացրել է մի քանի շրջանների գոհված հայերի թվի վերաբերյալ տվյալներ, սակայն խուսափել է գոհերի ընդհանուր հաշվում կատարելուց (տե՛ս Toynbee, *Armenian Atrocities, the Murder of a Nation*, 93-105 («Զոհերի թիվը» («The Toll of Death») գլուխը)):

9 Տե՛ս *The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-16*, 648:

10 Նույն տեղում:

11 Տե՛ս նույն տեղում:

շատ են հարգում ճշգրտությունը կամ գոնե ավելի լավ են գիտակցում կեղծիքների անօգուտ լինելը: Այս պայմաններում, ըստ Ա. Թոյնքիի, առավել «չեզոք» լուծումը որպես միջին թիվ պայմանականորեն 1 600 000-ն ընդունելն է՝ այն գիտակցմամբ, որ իրական թիվը, անշուշտ, այդ թվի և 2 000 000-ի միջակայքում է և հավանաբար ավելի մոտ է վերջինին¹²:

Ա. Թոյնքիի երկրորդ քայլը տեղահանությունից խուսափած հայերի թիվը հաշվելն է: Այս հարցում հիմնվելով Հայերի և ասորիների օգնության ամերիկյան կոմիտեի հինգերորդ տեղեկագրի տվյալների վրա՝ նա ստանում է հետևյալ պատկերը. ռուսական Կովկասում՝ 182 000 հայ, Եգիպտոսում (Մուսա լեռան դիմադրության շնորհիվ փրկվածները)՝ 4 200, Զմյուռնիայում և Կոստանդնուպոլսում՝ 150 000, Թուրքիայի՝ Ռուսաստանի նվաճած շրջաններում՝ 12 100: Այս համագումարին՝ մոտ 350 000, ավելացնելով իբր չտեղահանված հայ կաթոլիկ և բողոքական բնակչության թվաքանակը՝ մոտ 250 000, ինչպես նաև իսլամ ընդունած հայերի թիվը՝ նա հանգում է այն եզրակացությանը, որ տեղահանությունից խուսափած հայերի ընդհանուր թիվը մոտ 600 000 է¹³: Սա, ըստ Ա. Թոյնքիի, թույլ է տալիս որպես տեղահանության և կոտորածի ենթարկվածների ընդհանուր թիվ ընդունել «առնվազն 1 000 000-ը, անգամ հնարավոր է, որ լինի 1 200 000 կամ նույնիսկ ավելի»¹⁴:

Շախբան տեղահանությունը Օսմանյան կայսրության հայ բնակչության թիվը, տեղահանությունից զերծ մնացածների և տեղահանության ենթարկվածների թիվը հաշվելուց հետո Ա. Թոյնքին անցում է կատարում այն հարցին, թե տեղահանվածների որ մասն է զոհվել: Նշելով, որ որոշ նահանգներում ընդհանրապես տեղահանություն չի եղել, այլ միայն կոտորածներ (Վան, Բիթլիս), այլ շրջաններում տեղահանությունը համարժեք է եղել կոտորածի, այսինքն՝ քարավանները համակարգված կերպով ոչնչացվել են ճանապարհի ընկնելուց անմիջապես հետո (Էրզրում, Տրապիզոն, Անգորա), իսկ Կիլիկիայում հայերը տեղահանության ժամանակ կորուստ են ունեցել միայն հիվանդության և հյուծվածության հետևանքով, նա արձանագրում է, որ նույնիսկ այնտեղ, որտեղ ճանապարհին զանգվածային կոտորած չի եղել, հայերի քարավանը կարող էր աստիճանաբար ոչնչացվել, ինչպես, օրինակ, Մամուրեթ-ուլ-Ազիզից և Սեբաստիայի նահանգից տեղահանված հայերի դեպքում է եղել: Ամփոփելով վերև ասվածը՝ Ա. Թոյնքին նշում է, որ իրականությանը մոտ կարելի է համարել այն գնահատականը, որ կոտորածի և տեղահանության ենթարկվածներից զոհվել է առնվազն կեսը¹⁵:

Ի հիմնավորումն իր այս հաշվումի՝ Թոյնքին ներկայացնում է Ամերիկյան օգնության կոմիտեի 1916 թ. ապրիլի 5-ի տեղեկագրից քաղված տվյալ, ըստ որի՝ այդ ժամանակ Դեր-Զորի, Դամասկոսի և Հալեպի շրջաններում հայ տարագիրների ընդհանուր թիվը մոտ 500 000 էր: Այս թվին նա ավելացնում է մոտ 100 000՝ նրանց, ովքեր 1916 թ. մարտի դրությամբ դեռ արքորի ճանապարհին էին և կամ տեղահանվել էին

12 Տե՛ս նույն տեղում, 649:

13 Տե՛ս նույն տեղում, 650:

14 Նույն տեղում:

15 Տե՛ս նույն տեղում:

Մոսուլ՝ այդպիսով տեղահանության ենթարկվածների հավանական թիվը հասցնելով 1 200 000-ի¹⁶։

Վերոնշյալից ելնելով՝ նա եզրակացնում է, որ 1915 թ. տեղահանությունից փրկվել, տեղահանության ու կոտորածի զոհ են դարձել և տեղահանությունն ու կոտորածը վերապրել են մոտավորապես հավասար թվով հայեր, «և մենք շատ չենք սխալվի, եթե կլորացված թվերով այս կատեգորիաներից յուրաքանչյուրը հաշվենք 600 000 մարդ»¹⁷։

Այստեղ ևս պետք է ընդգծել, որ Ա. Թոյնթին այս հաշվումն արել էր նախքան Միրիայի աքսորակայաններում հայերի բնաջնջման մասին տվյալների ստացումը։ Արդեն 1916 թ. դեկտեմբերի 21-ին՝ «Կապույտ գրքի» լույսընծայումից մեկ ամիս անց, Մեծ Բրիտանիայի փոխարտգործնախարար Ռոբերտ Սեսիլը նշում էր, որ տվյալներ են ստացվել տեղահանված հայերի նոր կոտորածի մասին¹⁸։ Նույնպես և 1917 թ. մարտի 16-ին Մեծ Բրիտանիայի խորհրդարանի Համայնքների պալատում ներկայացնելով տեղահանված հայերի մասին «Կապույտ գրքի» տվյալները՝ նա հավելում է. «Մտավախություն ունեմ, որ նրանք [Միրիա տեղահանված հայերը – Ռ. Թ.] այժմ մահացած են»¹⁹։

Արդեն 1916 թ. վերջերին – 1917 թ. այլ հեղինակներ, որոնք օգտվել են Ջ. Բրայսի և «Կապույտ գրքի» տվյալներից, հարկ են համարել մատնանշել տեղահանված հայերի կոտորածները՝ զոհվածների թիվը հասցնելով մեկ միլիոնի։ Այսպես՝ ամերիկացի հայտնի միսիոներ և լրագրող Հերբերտ Ադամս Գիբբոնսն իր «Նոր պատմության ամենասև էջը։ Իրադարձությունները Հայաստանում 1915 թվականին» պրակտում, ակնարկելով Ջ. Բրայսի 1915 թ. հոկտեմբերի 6-ի ելույթը, նշում է. «Լորդ Պրայս 800 000 զոհեր կ'ենթադրէ։ Լսւ ալժմ ալդ թիւը մէկ միլիոնի հասած ըլլալու է»²⁰։

Ռուս դիվանագետ, միջազգային իրավունքի մասնագետ Անդրեյ Մանդելշտամը, 1917 թ. երկրորդ կեսին ֆրանսերեն հրատարակած իր «Օսմանյան կայսրության ճակատագիրը» մեծածավալ գրքում ներկայացնելով զոհված հայերի թվաքանակի վերաբերյալ Ա. Թոյնթիի հաշվումը, նշում է. «Ակնհայտ է, որ այդ թվերը 1917 թ. հուլիսի դրությամբ արդեն ցածր են իրական թվերից, քանի որ այդ ժամանակից ի վեր բազմաթիվ հայեր են զոհվել տեղահանության վայրերում»²¹։ Մեկ այլ տեղում նա արդեն տալիս է զոհերի թվաքանակի սեփական գնահատականը. «.... Երիտթուրք կառավարությունը դիտավորությամբ որոշեց օգտվել Մեծ պատերազմից՝ «լուծելու» Հայկական հարցը Արդուլ Համիդ II-ի մեթոդներից ավելի արմատական մեթոդներով հա-

16 Տե՛ս նույն տեղում, 651։

17 Նույն տեղում։

18 Տե՛ս *British Parliamentary Debates on the Armenian Genocide, 1915-1918*, 28-29։

19 *War speeches, 1914-1917*, collected by Benedict William Ginsburg (Oxford, New York, The Clarendon press, 1917), 187 (“I am afraid they are dead now, because this was written some months ago”).

20 Herbert Adams Gibbons, *The Blackest Page in Modern History: Events in Armenia in 1915* (New York-London: G. P. Putnam's Sons, 1916), 28, թարգմանությունը՝ Հրապրդ Էտրմզ Կիպիսզ, *Ժամանակակից պատմութեան սեւագոյն էջը։ 1915ի հայկական դէպքեր* (Նիո Եորք, «Հայկ տպարան», 1916), 37։

21 André N. Mandelstam, *Le sort de l'Empire ottoman* (Lausanne-Paris: Librairie Payot et Cie, 1917), 284.

յերին ոչնչացնելու միջոցով: Կառավարությունը, «Իթթիհադ»-ը (երիտրուքների կոմիտեն) և հատկապես Էնվերն ու Թալեաթը մեղավոր են մոտ մեկ միլիոն հայերի կազմակերպված կոտորածի մեջ՝ այն ծածկագրելով որպես «տեղահանություն»²²:

Այս մեկ միլիոն թիվն ըստ երևույթին ի հայտ է եկել 1916 թ. ընթացքում սովի, համաճարակների, ինչպես նաև կոտորածների հետևանքով զոհված հայերի թիվը 350-400 հազարի սահմաններում գնահատելու հետևանքով: Հալեալում ԱՄՆ հյուպատոս Ջեսսի Ջեքսոնը, որը 1916 թ. փետրվարի 8-ին հաշվում էր գաղթի ճանապարհը վերապրած և Սիրիայի արքորակայաններ հասած հայերի թիվը մոտ 486 000²³, արդեն 1918 թ. մարտի 4-ի իր գեկուցագրում նշում էր, որ ամերիկյան օգնություն ստացող վերապրած հայերի թիվը մոտ 100 000 է²⁴:

Հայկական աղբյուրները հաղորդում են, որ Սիրիայի և Միջագետքի համակենտրոնացման ճամբարներում միայն կոտորածների հետևանքով զոհվել է 300 000–350 000 մարդ: Այսպես, Արամ Անտոնյանի տվյալներով, 1916 թ. Ռաս-ուլ-Այնում զոհվել է 70 000, Իսթիվլիում՝ 50 000, Դեր-Չորում՝ 200 000 հայ (ընդամենը՝ 320 000)²⁵: Դեր-Չոր արքայական Միհրան Աղազարյանն իր հուշերում խոսում է միայն Դեր-Չորում զոհված 170 000 հայի մասին, որից 110 000-ը՝ կոտորածների, 60 000-ը՝ սովի և համաճարակի հետևանքով²⁶: Ըստ Երվանդ Եպս. Փերտահյանի՝ Բաբում սպանվել է 80 000, Մեսքենում՝ 100 000, Ռաս-ուլ-Այնում՝ 35 000, Դեր-Չորում՝ 120 000 հայ (ընդամենը՝ 335 000)²⁷: Եթե այս տվյալին ավելացնենք սովի և համաճարակների հետևանքով զոհված հայերի թիվը, ապա արդյունքը կարող է հասնել 400 000–450 000-ի:

1916-1918 թթ. անգլո-ամերիկյան տարբեր աղբյուրներ ևս հայ զոհերի ընդհանուր թիվը սկսում են հաշվել մեկ միլիոնի սահմաններում: Դեռևս 1915 թ. օգոստոսի 19-ին

22 Նույն տեղում, 409:

23 Այդ թվում՝ Դամասկոս՝ 100 000, Համա՝ 12 000, Հոնս՝ 20 000, Հալեալ՝ 7 000, Մաարա՝ 4 000, Բաբ՝ 8 000, Մամբիջ՝ 5 000, Ռաս-ուլ-Այն՝ 20 000, Ռաքքա՝ 10 000 և Դեր-Չոր՝ 300 000 (տե՛ս *United States Official Documents on the Armenian Genocide. Volume I. The Lower Euphrates*, Compiled and introduced by Ara Sarafian (Watertown, Massachusetts: Armenian review, 1993), 113, տե՛ս նաև *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917*, Compiled with an introduction by Ara Sarafian (Princeton, London: Gomidas Institute, 2004), 490):

Արքորակայաններ հասած հայերի մոտ 500 000 թիվը լայնորեն տարածված և ընդունված էր: Այսպես՝ ֆրանսիական «Թեմպս» («Tempes») թերթի Բագելի թղթակիցը, հղում կատարելով «պաշտոնական» տվյալներին, հաղորդում էր, որ 1916 թ. սկզբներին Մոսկովի, Դիարբեքիրի, Հալեալի, Դամասկոսի և Դեր-Չորի շրջաններում կար 492 000 տեղահանված հայ (տե՛ս Faiz El-Ghusein, *Martyred Armenia* (London: C. Arthur Pearson Ltd, 1917), 49-50):

24 Տե՛ս *United States Official Documents on the Armenian Genocide. Volume I. The Lower Euphrates*, 158: Տե՛ս նաև *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917*, 591:

25 Տե՛ս Արամ Անտոնյան, *Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա* (Պոսթըն, տպարան «Պահակ»-ի, 1921), 18:

26 Տե՛ս Միհրան Աղազարեան, *Արքորակայանի յուշեր* (Ատանա, տպարան «Հայ ձայն»-ի - թիվ 5, 1919), 39:

27 Տե՛ս Արքորակայանի եպիսկոպոս, «Վտարեալ հայութեան խաչի ճամբան», *Կոչնակ* 18 (Նիւ Եորք), № 16, 20 ապրիլ 1918, 2004:

Հալեպում ԱՄՆ հյուպատոս Ջեսսի Ջեքսոնը տեղեկացնում էր Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուին, որ Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Մամուրեթ-ուլ-Ազիզի, Անգորայի և Սեբաստիայի նահանգներում հայերն արդեն գործնականում բնաջնջված են, և զոհերի թիվը, նույնիսկ ըստ պահպանողական գնահատականների, գերազանցում է 500 000-ը²⁸։ Մեկ ամիս անց՝ 1915 թ. սեպտեմբերի 29-ին, Ջ. Ջեքսոնը տեղեկացնում էր, որ տեղահանությունը վերապրել է հայերի միայն 15%-ը, և անհետացած հայերի թիվը, ըստ երևույթին, մոտ 1 000 000 է²⁹։ Չոհերի թիվը մեկ միլիոն նշում է նաև դեսպան Հենրի Մորգենթաուն իր հուշերում³⁰։

բ. Հոկված հայերի թվաքանակի հաշվումներն Առաջին աշխարհամարտի ավարտից հետո

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Օսմանյան կայսրության տարածքներում տիրող վիճակն ուսումնասիրելու, այդ պետության առնչությամբ ԱՄՆ-ի քաղաքականությունը որոշելու նպատակով ամերիկյան կառավարությունը տարածաշրջան է ուղարկում երկու հանձնախումբ կամ առաքելություն, որոնք հայտնի են իրենց ղեկավար անձանց՝ Քինգ–Քրեյնի³¹ և Հարբորդի անուններով³²։ Այս հանձնախմբերն իրենց աշխատանքների հիման վրա զեկույցներ են պատրաստում, որոնցում կա նաև անդրադարձ զոհերի թվաքանակի հարցին։

Այսպես՝ Քինգ–Քրեյնի հանձնախմբի զեկույցում նշվում էր, որ հայերն իրավունք ունեն թուրքական տարածքի որոշակի չափի նկատմամբ՝ հաշվի առնելով նրանց կո-

28 St'u *United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917*, 208:

29 St'u նույն տեղում, 307:

30 St'u Henry Morgenthau, *Ambassador Morgenthau's story* (Garden City, New York: Doubleday, Page & Company, 1918), 322 («Հայերի տառապանքների համեմատությամբ բոլոր հալածանքները մթագնում են. սպանվեց առնվազն 600.000 հայ, թեև այդ թիվը կարող է հասնել մեկ միլիոնի»), 385 («Հայերին ոչնչացումից փրկելու իմ անկարողությունը թուրքիան իմ աչքին վերածեց սոսկ սարսափի մի վայրի, և ես հասկացա, որ այլևս ի վիճակի չեմ ամենօրյա հարաբերություններ ունենալ այն անձանց հետ, ովքեր, որքան էլ բարյացակամ ու քաղաքավարի լինեին ԱՄՆ դեսպանի հանդեպ, միևնույն է գարշահոտություն էին արձակում մեկ միլիոն զոհերի արյունից») (մեջբերված տեքստի հայերեն թարգմանությունը՝ ըստ Հենրի Մորգենթաու, *Դեսպան Հենրի Մորգենթաուի պատմությունը* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2012), 241 և 287):

31 Հանձնախմբի երկու ղեկավար անդամներն էին աստվածաբան Հենրի Քինգը և ԱՄՆ-ի դեմոկրատական կուսակցության գործիչ Չարլզ Քրեյնը։ Այն իր աշխատանքները սկսել է 1919 թ. հունիսին և պատրաստել է իր զեկույցը 1919 թ. օգոստոսի 28-ին։ Քինգ–Քրեյնի հանձնախմբի գործունեության մասին մանրամասն տե՛ս James B. Gidney, *A Mandate for Armenia* (Kent State University Press, 1967), 136-167:

32 Հարբորդի զինվորական առաքելությունը, որի կազմում կար ավելի քան 50 մարդ, գլխավորել է ամերիկյան բանակի գեներալ Ջեյմս Հարբորդը։ Առաքելությունն այցելել է Թուրքիա (Կիլիկիա, Դիարբեքիր, Սեբաստիայի, Խարբերդի և Էրզրումի նահանգներ), Հայաստանի առաջին հանրապետություն, ինչպես նաև Թիֆլիս, Բաքու, Բաթում։ Առաքելության գործունեության արդյունքներն ամփոփվել են «Մերձավոր Արևելքի իրավիճակը» զեկույցում, որը ներկայացվել է ԱՄՆ-ի նախագահին 1919 թ. հոկտեմբերի 23-ին և հանձնվել է ԱՄՆ-ի Կոնգրեսին քննարկման համար 1920 թ. ապրիլին (առաքելության գործունեությանը հայաստանյան պատմագրության անդրադարձներից տե՛ս Ա. Ջ. Սողոմոնյան, «Հարբորդի զինվորական առաքելությունը և Հայաստանի մանդատը», *Լրաբեր հասարակական գիտությունների* 9 (1985), 13-23):

րուստները 1894-1896, 1908-1909 և 1915-1916 թթ. կոտորածների ժամանակ՝ մոտ մեկ միլիոն³³:

Ձեկույցի մեկ այլ մասում նշվում է, որ պատերազմի ընթացքում հայերի կորուստների գործոնը հաշվի առնելով Թուրքիայից հայկական պետության անցնող տարածքների չափը որոշելիս անհրաժեշտ է այդ տարածքի բնակչության թվին ավելացնել զոհված հայերի թիվը՝ մեկ միլիոն³⁴:

Հարբոդի առաքելության զեկույցում զոհերի թվաքանակի հարցին անդրադարձն ավելի ծավալուն է: Համաձայն զեկույցի՝ պահպանողական գնահատականներով 1914 թ. «Ասիական Թուրքիայում» (Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի տարածքները՝ առանց Կ.Պոլսի և Արևելյան Թրակիայի) հայերի թիվը գերազանցում էր 1 500 000-ը: 1915 թ. գարնանը կազմակերպվեցին համակարգված կոտորածներ և տեղահանություններ: Թուրքական կառավարության պաշտոնական զեկույցները փաստում են, որ տեղահանվել է մոտ 1 100 000 հայ: Զանգվածային կոտորածների հետևանքով մահացածների թիվը տարբեր գնահատականներով կազմում է 500 000-ից ավելի քան մեկ միլիոն, առավել արծարծվող թիվը մոտ 800 000-ն է³⁵:

1917 թ. գարնանը Մեծ Բրիտանիայի արտգործնախարարությունը պատերազմից հետո հաշտության վեհաժողովին նախապատրաստվելու աշխատանքների շրջանակում ստեղծում է հատուկ բաժին, որի պարտականությունը պետք է լիներ տեղեկատվություն տալ բրիտանացի պատվիրակներին խնդրո առարկա տարբեր երկրների աշխարհագրության, տնտեսության, պատմության, սոցիալական, կրոնական և քաղաքական ոլորտների վերաբերյալ: Բաժնի պատրաստած բազմաթիվ տեղեկագրերից մեկը (լույս է տեսել 1920 թ.) վերաբերում է Արևմտյան Հայաստանին՝ կրելով «Հայաստան և Քուրդիստան» վերնագիրը: Տեղեկագրի «Բնակչություն» ենթաբաժինը անդրադարձ է պարունակում զոհված հայերի թվաքանակի հարցին: Տեղեկագրում նախ բերվում են Ջ. Բրայսի ու Ա. Թոյնթրիի («Կապույտ գիրք») տվյալները, որոնց համաձայն՝ նախքան պատերազմը Թուրքիայում ապրող մոտ 1 800 000 հայերից 600 000-ը սպանվել են, 600 000-ը՝ տեղահանվել, 300 000-ը մնացել են Հայաստանում, 300 000-ը՝ Կոստանդնուպոլսում, Չմյուռնիայում և Թուրքիայի այլ վայրերում կամ այլ տարածքներում որպես փախստականներ, այնուհետև նշվում է, որ 1915 թ. Միջագետք

33 Տե՛ս United States Department of State, *Papers Relating to the Foreign Relations of the United States, The Paris Peace Conference, 1919*, Vol. XII (U.S. Government Printing Office, 1947), 821:

34 Տե՛ս նույն տեղում, 826:

35 Տե՛ս Conditions in the Near East. Report of the American Military Mission to Armenia, by Maj. Gen. James G. Harbord, U.S. Army (Appendix only) (Washington: Govt. printing office, 1920), 7 (“The dead from this wholesale attempt on the race are variously estimated from 500,000 to more than a million, the usual figure being about 800,000”): Տե՛ս նաև 1920 թ. փետրվարի 22-ին «Նյու Յորք թայմս» թերթում հրապարակված Ջ. Հարբոդի «Պարզ փաստեր Փոքր Ասիայի և Անդրկովկասի մասին» հոդվածը, որում նա ևս, խոսելով Առաջին աշխարհամարտի ընթացքում տարածաշրջանի բնակչության կորուստների մասին, հայ զոհերի թիվը նշում է 800 հազարից 1 մլն («Այս կորուստներին ավելացրե՛ք մեկ միլիոնից ավելի կոտորված ու տեղահանված հայերին, պահպանողական գնահատմամբ՝ զոհվածների թիվը 800 000 է» (“To these losses add over a million Armenians massacred and deported, a conservative estimate of those who perished being 800,000”)) (James G. Harbord, “Plain Facts About Asia Minor and the Trans-Caucasus,” *The New York Times*, February 22, 1920):

տեղահանված 600 000 հայերից, ըստ Հալեպից ստացված վերջին տվյալների (1918 թ. դեկտեմբեր), ողջ են մնացել ընդամենը 90 000-ը³⁶: Սրանով ակնարկվում է, որ գոհված հայերի ընդհանուր թիվը մեկ միլիոնից ավել է:

Հոհերի մեկ միլիոն թիվը նշված ժամանակաշրջանում շրջանառվում էր նաև բրիտանական խորհրդարանում: Այսպես՝ Լորդերի պալատում 1920 թ. մարտի 11-ին Հայկական հարցի քննարկման ժամանակ լորդ Ջ. Բրայսը կոչ էր անում վերջ տալու «Հայաստանում և Կիլիկիայում» թուրքական իշխանությանը՝ նշելով, որ հայերի կոտորածների քաղաքականությունը վերսկսվում է թուրքական ամեն հաջորդ կառավարության օրոք, և եթե Արդուլ Համիդը սպանել է մոտ 100 000, ապա երիտասարդ թուրքերը՝ 1 000 000 հայ³⁷:

Հետագայում անգլո-ամերիկյան աղբյուրներն այլևս նոր հաշվումներ չեն կատարել, և գոհված հայերի մեկ միլիոն թիվը մնացել է առավել ընդունված: Այսպիսով, համաձայն անգլո-ամերիկյան խմբի տվյալների, 1915-1916 թթ. ընթացքում գոհվել է մոտ մեկ միլիոն հայ, որից 600 000-ը՝ 1915 թ. տեղահանության և կոտորածների ժամանակ, 400 000-ը՝ Սիրիայի և Միջագետքի համակենտրոնացման ճամբարներում սովի, համաճարակների և կոտորածների հետևանքով: Հոհերը կազմել են նախատեղեղայան մոտ 1 800 000-2 000 000 հայ բնակչության 50-55%-ը:

2. Գերմանական տվյալների խումբ

ա. Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաշվումները

Հայերի տեղահանության և կոտորածների գոհերի՝ գերմանական աղբյուրների առաջին հաշվումները վերաբերում են 1915 թ. աշնանը: Մասնավորապես, Հայկական հարցի վերաբերյալ Գերմանիայի բողոքական շրջանակների՝ վարչապետ Բեթման Հոլվեգին 1915 թ. հոկտեմբերի 15-ին ներկայացրած նամակում (նամակի հեղինակը, ամենայն հավանականությամբ, Յոհաննես Լեփսիուսն է) նշվում էր հետևյալը. «Հազիվ թե հնարավոր լինի ճշգրիտ տվյալներ ներկայացնել տարագիրների և ջարդի գոհերի վերաբերյալ: Ըստ Հայոց պատրիարքարանի վիճակագրության՝ տեղահանությունից տուժած նահանգների հայ բնակչության թիվը 1 200 000 է (խոսքն Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Փոքր Ասիայի նահանգների մասին է՝ առանց Կ.Պոլսի, Հայդուսի և եվրոպական Թուրքիայի շրջանների – Ռ. Թ.): Նույնիսկ եթե ընդունենք, որ բնակչության մի մասն ի վիճակի է եղել փախչել լեռներ ու խուլ շրջաններ և դրանով փրկվել, միևնույնն է, մնում են մեկ միլիոն հայ քրիստոնյաներ, ովքեր ենթարկվել են տեղահանության և կոտորածի: Արդյոք նրանցից կեսը կամ թե քանիսն են սպանված, թե արդյոք իսլամացված ընտանիքների թիվը հաշվվում է հազարներով թե տասնյակ հազարներով, տվյալ պահին ոչ ոք չի կարող ասել»³⁸:

36 St'a *Armenia and Kurdistan* (London: H.M. Stationery Office, 1920), 8-9:

37 St'a United Nations Library & Archives Geneva. S356/21/3 - League of Nations - Turkish minorities, 159:

38 Վոլֆգանգ Գուստ, *Հայերի ցեղասպանությունը 1915-1916* (Երևան, Հայագիտակ, 2008), 419: St'a նաև *The Armenian Genocide: Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916*, edited by Wolfgang Gust (New York-Oxford: Berghahn Books, 2013), 447-448:

Ալեքսանդրեթում Գերմանիայի փոխհյուպատոս Հերման Հոֆմանը հայկական տեղահանություններին ու ջարդերին նվիրված 1915 թ. նոյեմբերի 8-ի գեկուցագրում մինչև հոկտեմբերի վերջը զոհերի թիվը հաշվում էր առնվազն 600 000³⁹:

Հալեպում Գերմանիայի հյուպատոս Վալտեր Ռյոպերը, իր 1915 թ. դեկտեմբերի 20-ի գեկուցագրում մեկնաբանելով բրիտանական մամուլում շրջանառվող հայ զոհերի մասին տվյալը՝ 800 000, նշում էր, որ այն անհավանական չէ. զոհվածների թիվը չափազանց մեծ է: Վկայակոչելով և ըստ երևույթին իրականությանը մոտ, հավաստի համարելով անանուն հայկական աղբյուրից ստացած տվյալներ՝ նա Թուրքիայի հայ բնակչության ընդհանուր թիվը հաշվում է 2 500 000, որից 1 200 000-ը՝ «արևելյան վիլայեթներում» (Էրզրում, Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբեթ և Սեբաստիա): Ըստ հյուպատոսի՝ Փոքր Ասիայում մոտավորապես կես միլիոնը չի տեղահանվել, մոտ կես միլիոնը հասել է Սիրիա և Միջագետք: Հյուպատոսն առանձնացնում և հաշվի մեջ չի ներառում Վանի նահանգն իր 150 000-200 000 չտեղահանված հայ բնակչությամբ, քանի որ այն պատերազմական գոտի էր: Նա նշում է, որ Սիրիա և Միջագետք հասած հայերի շրջանում մահացության գործակիցը չափազանց բարձր է և կշարունակի մնալ այդպիսին որպես տեղահանության ուղղակի հետևանք, որն ամենևին էլ չի ավարտվել: Այս հանգամանքներում նույնիսկ կարելի է հնարավոր համարել, որ զոհերի թիվը 800 000-ից բարձր է:

Հյուպատոսը եզրափակում է իր հաշվումը՝ արձանագրելով, որ եթե ընդունենք այլ աղբյուրների տվյալները, որոնց համաձայն՝ Թուրքիայի հայ բնակչությունն ընդամենը մեկուկես միլիոն է, վերոնշյալ բոլոր թվերը համապատասխանաբար կնվազեն, սակայն սպանվածների տոկոսային հարաբերակցությունը կմնա նույնը⁴⁰:

Մեկ տարի անց՝ Դեր Զորի համակենտրոնացման ճամբարներում հայերի բջնաջնջման ավարտից հետո, գերմանական աղբյուրներում այլևս սկսում է շրջանառվել զոհերի մեկ միլիոն թիվը: Այսպես՝ Հալեպի գերմանական տեխնիկական դպրոցի ուսուցիչ Մարտին Նիպագեն իր գեկույցում (1916 թ. օգոստոս) նշում է, որ, գերմանացի հյուպատոսների կարծիքով, մինչ այդ պահը մոտ մեկ միլիոն հայ է զոհվել: Նա հավելում է, որ այդ զոհերի առնվազն կեսը կանայք և երեխաներ են, որոնք կամ սպանվել են, կամ մահացել սովից⁴¹:

Վ. Ռյոպերն իր 1916 թ. նոյեմբերի 5-ի գեկույցում ներկայացնում է այդ պահի դրությամբ Սիրիայում և Միջագետքում ողջ մնացած հայերի մանրամասն վիճակագրությունը: Հյուպատոսի տվյալներով՝ վերապրած աքսորյալ հայերի թիվը 106 420 էր, որոնք բաշխվում էին հետևյալ կերպ. Մարաշում՝ 4 500, Ալեքսպում և շրջակա գյուղերում՝ 8 000 (այդ թվում՝ 4 200 գաղթական), Ուրֆայում՝ 700 (բոլորը՝ գաղթական), Բիրեջիկում և Ջերաբլուում՝ 2 000, Մոսուլում՝ 4 000, Հալեպ քաղաքում՝ 17 220, Եփ-

39 Տե՛ս Գուստ, *Հայերի ցեղասպանությունը 1915-1916*, 481: Տե՛ս նաև *The Armenian Genocide: Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916*, 510:

40 Տե՛ս Գուստ, *Հայերի ցեղասպանությունը 1915-1916*, 469: Տե՛ս նաև *The Armenian Genocide: Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916*, 497:

41 Տե՛ս Martin Niepage, *The Horrors of Aleppo* (London: T. Fisher Unwin LTD, 1916), 14: Տե՛ս նաև *The Armenian Genocide: Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916*, 633:

րատ գետի երկայնքով՝ Մեսքենեի և Դեր-Չորի միջև ընկած բնակավայրերում՝ 15 000, Դամասկոսում՝ 10 000, Հուրանի շրջանում (Դամասկոսից հարավ)՝ 30 000, Համայում և Սելիմիեում՝ 15 000⁴²: Այսինքն, եթե հաշվի առնենք 1915 թ. դեկտեմբերի դրությամբ Սիրիա և Միջագետք հասած հայ արքայալների՝ Վ. Ռյուսերի նախորդ տվյալը՝ 500 000, ապա զոհերի թիվը կլինի 400 000:

Չոհված հայերի թվաքանակի հարցին ծավալուն անդրադարձ է պարունակում Կ.Պոլսում գերմանական դեսպանության՝ կրոնական հարցերով գլխավոր պաշտոնյա (քարոզիչ) կոմս Զիգֆրիդ ֆոն Լյուբիխաուի՝ հայերի և Հայկական հարցի վերաբերյալ 1918 թ. ամռանը պատրաստած զեկույցը: «Ճգնաժամի մասշտաբները» վերնագիրը կրող ենթաբաժնում հեղինակը մասնավորապես ներկայացնում է կորուստների թվաքանակի վերաբերյալ հյուպատոս Վ. Ռյուսերի և Մալաթիայում գերմանական անկելանոցի վարիչ Էռնեստ Քրիստոֆելի տվյալները՝ համապատասխանաբար մեկ միլիոն և երկու միլիոն⁴³՝ նշելով, որ դրանց արժեքը մեծ չէ, քանի որ Թուրքիայում հայ բնակչության ընդհանուր թվաքանակի վերաբերյալ երբեք ճշգրիտ տվյալներ չեն եղել: Դրանից ելնելով՝ հեղինակն իրականությանը մոտ է համարում զոհերի թվաքանակի՝ Խարբերդում գերմանական բողոքական կայանի ղեկավար Յոհաննես Էհմանի հաղորդած տվյալը՝ մեկուկես միլիոն:

Այնուհետև հեղինակը նշում է, որ ավելի կարևոր է ոչ թե զոհերի ընդհանուր թիվը, որը դժվար է ստուգել, այլ յուրաքանչյուր շրջանում սպանվածների տոկոսային հարաբերակցությունը: Արևելյան նահանգներում հայ բնակչության 80-90%-ը ոչնչացվել է, ընդ որում՝ տղամարդկանց 98%-ը: Ընդհանուր առմամբ Օսմանյան կայսրության հայերի առնվազն 80%-ը, այդ թվում՝ կաթոլիկ և բողոքական հայերը, բնաջնջվել է⁴⁴: «Ողջ մնացածների թիվը» բաժնում հեղինակը կրկնում է հյուպատոս Վ. Ռյուսերի՝ 1916 թ. վերջի դրությամբ Սիրիայի և Միջագետքի տարածք տեղահանված հայերի մնացորդների վերաբերյալ տվյալը՝ 100 000՝ նշելով, որ այդ ժամանակից ի վեր շատերը սպանվել կամ մահացել են սովից, այնպես որ նրանց թիվը 1918 թ. ամռան դրությամբ պետք է զգալիորեն ցածր լինի: Նա արձանագրում է, որ Բիթլիսի վիլայեթում գրեթե հայ չի մնացել, Էրզրումի վիլայեթում միայն առանձին ցրված խմբեր են, իսկ Վանի մասին նրան չի հաջողվել տեղեկություն ստանալ: Դիարբեքիի, Խարբերդի և Սեբաստիայի վիլայեթներում 10 000 հայ կա, Մալաթիայում՝ մոտ 4 000, իսկ ամենից շատ հայեր կան հավանաբար Հալեպում՝ առնվազն 20 000: Թուրքական տներում տեղավորված որբ երեխաների թիվը հնարավոր չէ հաշվել: Նաև լեռներում դեռ կան հայերի ցրված խմբեր⁴⁵: Չոհերի թվաքանակի մասին տեղեկություններ են հաղոր-

42 Տե՛ս Գուստ, *Հայերի ցեղասպանությունը 1915-1916*, 621: Տե՛ս նաև *The Armenian Genocide: Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916*, 674:

43 Քրիստոֆելի տվյալը վերցված է նրա 1917 թ. մարտի 26-ի նամակից (տե՛ս *The Armenian Genocide: Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916*, 714), սակայն տեքստից պարզ չէ՝ հեղինակը նկատի ունի ընդհանուր տուժածների, թե կոնկրետ զոհերի թիվը:

44 Տե՛ս Գուստ, *Հայերի ցեղասպանությունը 1915-1916*, 682: Տե՛ս նաև *The Armenian Genocide: Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916*, 739-740:

45 Տե՛ս Գուստ, *Հայերի ցեղասպանությունը 1915-1916*, 683: Տե՛ս նաև *The Armenian Genocide: Evidence*

դում նաև Օսմանյան կայսրությունում ավստրոհունգարական դիվանագետները և դեսպանատան հետ հաղորդակցվող Օսմանյան կայսրությունում կաթոլիկ եկեղեցու սպասավորները (նրանք գտնվում էին Ավստրո-Հունգարիայի դիվանագիտական պաշտպանության ներքո): Այսպես՝ Կ.Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպանատան՝ արտգործնախարարություն ուղարկված 1915 թ. հոկտեմբերի 26-ի գեկուցագրերում հաղորդվում է, որ Փոքր Ասիայում կաթոլիկ եկեղեցիների տնօրեն հայր Դունկելը հաշվում է զոհված հայերի թիվը մեկ միլիոն⁴⁶:

Էրզրումում կաթոլիկ պատվիրակ հայր Նորբերտ Հոֆերը 1915 թ. հոկտեմբերի 26-ով թվագրված հուշագրում ամփոփում է հայերի տեղահանության և կոտորածների ընթացքը հետևյալ տողերով. «Հարկ է ընդգծել, որ թուրքերն իրենք գնահատում են կոտորածների կամ գրկանքների հետևանքով մահացած հայերի թիվը 500 000, իսկ տեղահանվածների թիվը՝ 900 000»⁴⁷:

Կ.Պոլսում ավստրոհունգարական դեսպանատնից արտգործնախարարություն հասցեագրված 1915 թ. դեկտեմբերի 2-ի գեկուցագրում նշվում էր, որ, ըստ քաջատեղյակ անձերի, հայ զոհերի թիվը մոտ մեկ միլիոն է⁴⁸:

Վիեննայի արքեպիսկոպոս կարդինալ Ֆրիդրիխ Գուստավ Պիֆֆլը Ավստրո-Հունգարիայի արտգործնախարարությանն ուղղված 1916 թ. մարտի 7-ի նամակում, ներկայացնելով հայերի վիճակը, նշում էր, որ, ըստ իրեն հասած տեղեկությունների, մինչ այդ պահը զոհերի թիվը հաշվվում է մեկ միլիոն⁴⁹:

բ. Յոհաննես Լեփսիուս

Գերմանական հաշվումների խմբում առանձնահատուկ են Յոհաննես Լեփսիուսի տվյալները: Գերմանացի գործիչը զոհերի թվաքանակի հարցին անդրադարձել է 1915-1916 թթ. տեղահանությանը և կոտորածներին նվիրված իր գրեթե բոլոր աշխատանքներում (1916 թ. գաղտնի հրատարակված «Հաղորդագրություն Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին» աշխատանքը⁵⁰ (1919 թ. լույս տեսած երկրորդ՝ լրացված հրատարակությունը վերնագրված է «Հայ ժողովրդի մահվան երթը»⁵¹), 1919 թ. հրատարակված «Գերմանիան և Հայաստանը. 1914-1918» փաստագրական աշխատությունը⁵² և այլն):

from the German Foreign Office Archives, 1915-1916, 740-741:

46 Տե՛ս Artem Ohandjanian, K. u. K. - *Dokumente Armenien in Österreichischen Archiven (Fotokopien), Band II. 1915-1917* (Wien, 1988), 1068: Տե՛ս նաև Artem Ohandjanian, *Armenia 1915. Austro-Hungarian Diplomatic Reports Prove the Genocide* (Vienna, 2011), 151:

47 Ohandjanian, K. u. K. - *Dokumente Armenien in Österreichischen Archiven (Fotokopien)*, 1086. Տե՛ս նաև Ohandjanian, *Armenia 1915*, 151:

48 Տե՛ս Ohandjanian, K. u. K. - *Dokumente Armenien in Österreichischen Archiven (Fotokopien)*, 1253:

49 Տե՛ս նույն տեղում, 1349:

50 Տե՛ս Johannes Lepsius, *Berichtes über die Lage des armenischen Volkes in der Türkei* (Potsdam, 1916):

51 Տե՛ս Johannes Lepsius, *Der Todesgang des armenischen Volkes: Bericht über das Schicksal des armenischen Volkes in der Türkei während des Weltkrieges* (Potsdam, 1919):

52 Տե՛ս Johannes Lepsius, *Deutschland und Armenien 1914-1918: Sammlung diplomatischer Aktenstücke*

Այս հոդվածի շրջանակներում նպատակահարմար ենք գտնում ներկայացնել զոհված հայերի թվաքանակի հարցին «Գերմանիան և Հայաստանը. 1914-1918» աշխատանքի առաջաբանում Յ. Լեփսիուսի անդրադարձը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն ամփոփում և թարմացնում է 1916 թ. հաշվումները⁵³: Նախ Յ. Լեփսիուսը ներկայացնում է զոհված հայերի թիվը ըստ գերմանական փաստաթղթերի տվյալների՝ նշելով, որ, ըստ համընդհանուր կարծիքի, որն ընդունում են նաև գերմանացի հյուպատոսները, թուրքահայ զոհերի թիվը հաշվվում է մեկ միլիոն, այդ թվում՝ կես միլիոն կանայք և երեխաներ: Այս թվին Լեփսիուսը հարկ է համարում ավելացնել կովկասահայերի զոհերի թիվը՝ 50 000-100 000⁵⁴:

Ի հիմնավորումն իր այս տվյալի՝ Յ. Լեփսիուսը ներկայացնում է, թե ինչպես էր աճում զոհերի թիվը 1915-1916 թթ. ընթացքում ըստ գերմանական դիվանագետների: Եթե 1915 թ. աշնանը այն կազմում էր մոտ 500 000, ապա մեկ տարի անց զոհվածների թիվը հաշվվում էր 800 000-ից մեկ միլիոն⁵⁵:

Այնուհետև Յ. Լեփսիուսը զոհերի թվաքանակի մեկ այլ հաշվում է կատարում. հիմք ընդունելով Հալեպում հավաքված հայ որբերի շրջանում նրանց ծնողների ու հարազատների վերաբերյալ կատարած հարցումները՝ նա գտնում է, որ ընդհանուր առմամբ անհետացել է (իմա՝ սպանվել) տեղահանված հայերի մոտ 78.5%-ը՝ նշելով, որ եթե տեղահանված հայերի ընդհանուր թիվը ընդունենք կյոք մեկուկես միլիոն, ապա ողջ մնացածների թիվը կլինի մոտ 322 000⁵⁶: Սրանով հանդերձ՝ Լեփսիուսը չի պնդում այդ վերջին տվյալը՝ իր ամփոփիչ հաշվումում հիմք ընդունելով ու թարմացնելով դեռևս 1916 թ. «Հաղորդագրություն Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին» պրակում ներկայացված տվյալները: Լեփսիուսը, որպես աղբյուր նշելով Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի վիճակագրությունը, Օսմանյան կայսրության հայ բնակչության թիվ է ընդունում 1 845 450-ը⁵⁷: Նա նշում է, որ եթե հաշվենք այն հայերին, որոնք փախել են Կովկաս և Ալեքսանդրիա՝ 244 400, ինչպես նաև չտեղահանվածներին՝ 204 700, ապա տեղահանության ենթարկվածների թիվը կհասնի 1 396 350-ի: Արաբա-

(Potsdam, 1919):

53 Հետագա մեջբերումները՝ ըստ աշխատանքի հայերեն թարգմանության (տե՛ս *Գերմանիան և Հայաստանը. 1914-1918: Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու: Հատոր I: Հրատարակությունը և ներածությունը՝ Յոհաննես Լեփսիուսի*, թարգմ. գերմ.՝ Վ. Մինայան (Երևան, «Գրական հայրենիք» («Հայաստան»), 2006)):

54 Տե՛ս նույն տեղում, 74:

55 Տե՛ս նույն տեղում:

56 Տե՛ս նույն տեղում, 76:

57 Այս տվյալը Լեփսիուսը վերցրել է Մադաքիա արք. Օրմանյանի «Հայոց եկեղեցի» աշխատությունից, որը 1910 թ. լույս էր տեսել ֆրանսերեն Փարիզում, այնուհետև՝ թարգմանվել հայերեն և անգլերեն (արևմտահայության վիճակագրությունը տե՛ս Malachia Ormanian, *L'Eglise Armenienne. son histoire, sa doctrine, son régime, sa discipline, sa liturgie, sa littérature, son présent* (Paris: Ernest Leroux, 1910), 181-187): 1913 թ. ֆրանսերեն հրատարակվել էր և այդպես Լեփսիուսին կարող էր հասանելի լինել նաև Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի 1912 թ. վիճակագրությունը, որի համաձայն՝ արևմտահայության թիվը 2 100 000 էր (տե՛ս Marcel Leart, *La question Armenienne a la lumière des documents* (Paris: Challamel, 1913)), սակայն նա ըստ երևույթին նախընտրել է օգտագործել Մ. Օրմանյանի տվյալները, քանի որ դրանք ավելի մանրամասն են՝ տալիս են հայ բնակչության բաշխումն ըստ թեմերի, որոնք նա վերախմբավորել է ըստ նահանգների:

կան անապատներում ողջ մնացած հայերի թիվը, ըստ թարմ տվյալների, հասնում է 150 000-200 000-ի: Բացի այդ, եթե ընդունենք, որ իսլամացված, առևանգված կանանց, աղջիկների և երեխաների թիվը հասնում է 200 000-ի, ապա կարելի է հանգել հետևյալ արդյունքին. 1 845 000 հայերից կլոր մեկ միլիոնը զոհվել են, և 845 000-ը դեռ կենդանի են, որոնցից մոտավորապես 200 000-ը մնացել են իրենց հայրենի բնակավայրերում, 200 000-ը ցրված են, 250 000-ը փախել են Կովկաս, և 200 000-ը՝ որպես «սովատանջ մուրացիկներ», մնացել են համակենտրոնացման ճամբարներում: Նկատի ունենալով, որ ցիրուցան եղածների և համակենտրոնացման ճամբարներում ողջ մնացածների մեծ մասն իսլամացվել է, իսլամացված հայերի թիվը կարելի է հաշվել 250 000-300 000: Կովկասի հայերի և Կովկասում ապաստանած արևմտահայ փախստականներին շրջանում կորուստները հաշվվում են 50 000-100 000-ի սահմաններում⁵⁸:

Գիտական բարեխղճությունը ստիպում է Յ. Լեփսիուսին եզրափակել վերը բերված հաշվումը նշումով, որ այն չունի և չի կարող ունենալ վիճակագրական ճշգրիտ հիմք, և որոշ չափով վստահելի տվյալներ կարելի է ստանալ միայն այն դեպքում, եթե անցկացվի թուրքահայերի ու կովկասահայերի մարդահամար, և դրա արդյունքները համեմատվեն բնակչության թվաքանակի նախկին տվյալների հետ⁵⁹:

Չոհերի մեկ միլիոն թիվը Լեփսիուսը վերահաստատում է 1919 թ. հրատարակված «Հայ ժողովրդի մահվան երթը» աշխատությունում, որում նա նշում է, որ գերմանական իշխանությունները հենց այդքան են հաշվել հայկական կոտորածների զոհերի թիվը⁶⁰:

Յ. Լեփսիուսի տվյալներին ածանցյալ են գերմանացի քաղաքական և հասարակական գործիչ, Գերմանա-հայկական ընկերության նախագահի տեղակալ Պաուլ Ռոբբախի հաշվումները: Ըստ հեղինակի՝ Օսմանյան կայսրությունում պատերազմի նախօրեին հայերի թվաքանակի վերաբերյալ ամենից հաճախ հիշատակվող գնահատականը մոտ 1 850 000-ն է: Նրանցից մոտ 250 000-ը փախել կամ փրկվել էին ռուսական զորքերի առաջխաղացման շնորհիվ, մոտ 200 000-ը մնացել էին Կոստանդնուպոլսում, Զմյուռնիայում և այլ վայրերում, որտեղ նրանք անհրաժեշտ էին որպես արհեստավորներ և բանվորներ կամ էլ ընդունել էին իսլամ և այդպիսով խուսափել հալածանքներից: Հետևաբար մոտ 1 400 000 հայ ենթարկվել է տեղահանության: Գնահատականների համաձայն՝ նրանցից մոտ 250 000-ը՝ հիմնականում կանայք և երեխաներ, ողջ են մնացել, հաճախ՝ ծայրահեղ ծանր պայմաններում: Ավելի քան մեկ միլիոն հայ՝ հայ ժողովրդի ավելի քան կեսը, 1915-1918 թթ. ընթացքում կամ զանգվածաբար սպանվել է թուրքական կառավարության կողմից, կամ մահացել սովից, ցրտից, հիվանդություններից և հյուծումից տեղահանության ճանապարհին ու կոտորածների վայրերում⁶¹:

58 Տե՛ս *Գերմանիան և Հայաստանը. 1914-1918*, 76-77:

59 Տե՛ս նույն տեղում, 77:

60 Տե՛ս Lepsius, *Der Todesgang des armenischen Volkes*, 297: Տե՛ս նաև Սողոմոն Թեփլիրյանի դատավարության ժամանակ Լեփսիուսի վկայությունը, որտեղ ևս գերմանացի գործիչը ներկայացրել է զոհերի թվաքանակի վերաբերյալ իր հաշվումները (տե՛ս *Դատավարութիւն Թալէաթ-փաշայի: Մղագրական զեկոյուն* (Վիեննա, Մխիթարեան տպարան, 1921), 89-94):

61 Տե՛ս Paul Rohrbach, *Armenien: Beiträge zur armenischen Landes und Volkskunde* (Stuttgart: J.

Հայ գոհերի՝ Յ. Լեփսիուսի հաշվումներն ընդունել է նաև Ազգերի լիգայում փախստականների հարցով գլխավոր հանձնակատար Ֆրիտյոֆ Նանսենը⁶²:

Այսպիսով, գերմանական հաշվումների խմբի տվյալների գերակշիռ մասի համաձայն ևս, 1915-1916 թթ. գործողությունների հետևանքով զոհվել է մոտ մեկ միլիոն հայ:

3. Օսմանյան տվյալների խումբ

1916 թ. սկզբներին Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար, Հայոց ցեղասպանության իրականացումը համակարգող Մեհմեդ Թալեաթը տեղահանված հայերի թիվը գնահատում էր մոտ 800 000՝ նշելով, որ նրանցից «վերջին մի քանի ամիսների ընթացքում» մահացել են 300 000-ը⁶³:

1916 թ. օգոստոսի 24-ին և 1917 թ. փետրվարի 11-ին Օսմանյան կայսրության նահանգներ ուղարկված գաղտնի հեռագրերով Թալեաթը պահանջում էր մանրամասն տեղեկատվություն տվյալ վարչական միավորում հայերի թվաքանակի վերաբերյալ՝ «տեղացի» և «օտար» (այսինքն՝ այլ շրջաններից տվյալ վարչական միավոր տեղահանված) հայերի առանձին նշումով: Արդյունքներն ամփոփվել են 1918 թ. սկզբներին կազմված տեղեկագրում, որում աղյուսակով ներկայացվում է Օսմանյան կայսրության հայ բնակչության թիվը 1914 և 1917 թթ. դրությամբ՝ ըստ առանձին վարչական միավորների: Առանձին աղյուսակով տրվում է տեղահանված հայերի թիվը՝ ըստ նահանգների⁶⁴:

Ըստ Թալեաթի տեղեկագրի՝ 1914 թ. Օսմանյան կայսրության առաքելադավան և կաթոլիկ հայերի թիվը 1 256 403 էր, տեղահանության էր ենթարկվել 924 158 հայ⁶⁵, իսկ 1917 թ. դրությամբ կայսրության տարածքում փաստացի հաշվառվել էր 284 157 հայ⁶⁶: Օսմանյան պաշտոնյաները, որոնք պատրաստել էին այս փաստաթուղթը, ծանոթագրության կարգով նշում են, որ նպատակահարմար է այս թվերը մեծացնել 30%-ով⁶⁷: (Թուրք հետազոտող Թաներ Աքչամը, ով օգտվել է նշված տվյալներից, հանգում է այն եզրակացությանը, որ եթե օհետևենք այս ցուցումին և ավելացնենք տվյալները 30%-ով, ապա տեղահանված հայերի թիվը մոտավորապես 1.2 միլիոն է կազմելու, որը

Engelhorn nachf, 1919), 17:

62 Տե՛ս Fridtjof Nansen, *Armenia and the Near East* (London: G. Allen & Unwin Limited, 1928), 317-318:

63 Տե՛ս Faiz El-Ghusein, *Martyred Armenia*, 50 (հեղինակը հղում է կատարում Եգիպտոսում (Կահիրե) հրատարակվող «Էլ-Մուքաթամ» թերթին):

64 Փաստաթղթերը Թալեաթի այրիից ստացել և հրատարակել է թուրք պատմաբան Մուրատ Բարդակչին (տե՛ս Murat Bardakçi, *Talat Paşa'nın Evrak-i Metrukesi: Sadrazam Talat Paşa'nın 'özel arşivinde bulunan Ermeni tehciri konusundaki belgeler ve hususi yazışmalar* (Istanbul: Everest Publications, 2008)), անգլերեն հրատարակությունը՝ Ara Sarafian, *Talaat Pasha's Report on the Armenian Genocide* (London: Gomidas Institute, 2011):

65 Տե՛ս Bardakçi, *Talat Paşa'nın Evrak-i Metrukesi*, 77: Տե՛ս նաև Sarafian, *Talaat Pasha's Report*, 68:

66 Տե՛ս Bardakçi, *Talat Paşa'nın Evrak-i Metrukesi*, 109: Տե՛ս նաև Sarafian, *Talaat Pasha's Report*, 21:

67 Տե՛ս Bardakçi, *Talat Paşa'nın Evrak-i Metrukesi*, 110: Տե՛ս նաև Sarafian, *Talaat Pasha's Report*, 20:

մոտ է Ա. Թոյնքիի և Յ. Լեփսիուսի տվյալներին՝ համապատասխանաբար 1.2 միլիոն և 1.3 միլիոն)⁶⁸:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից և երիտթուրքական կառավարության պարագլուխների փախուստից անմիջապես հետո ձևավորված նոր կառավարության ներքին գործերի նախարար Մուստաֆա Արիֆը 1918 թ. դեկտեմբերին ստեղծում է հայերի կորուստները հետաքննող հանձնաժողով, որի հավաքած տվյալների հիման վրա 1919 թ. գարնանը ներքին գործերի նախարարությունը հանրայնացնում է հայ զոհերի թիվը՝ 800 000: Հետագայում տարբեր առիթներով այս թիվը

կրկնում է Օսմանյան կայսրության մեծ վեզիր (վարչապետ) Դամաթ Ֆերիդը⁶⁹: Ըստ օսմանյան («Ալեմդար», «Իկդամ», «Վակիտ», 15 մարտի 1919 թ.) և արևմտահայ⁷⁰ մամուլի՝ այս թվում ներառված չէին տասնյակ հազարավոր հայ զորակոչիկները, որոնք սպանվել էին զինակիցների և սպանների կողմից պատերազմի ժամանակ օսմանյան բանակում ծառայության ընթացքում, երիտասարդ աղջիկները և կանայք, որոնք հարկադրված դարձել էին հարճեր կամ հայտնվել հարեմներում, ինչպես նաև հայ որբերը, որոնք հավաքվել և մեծացվել էին որպես մուսուլմաններ⁷¹:

1919 թ. հոկտեմբերին ԱՄՆ-ի պատվիրակության ղեկավար գեներալ Հարբորդի հետ հանդիպման ժամանակ 800 000 սպանված հայերի մասին է խոսել նաև Մուստաֆա Քեմալը⁷²:

Հայերի տեղահանության ու կոտորածների հարցը բարձրացվել է նաև օսմանյան խորհրդարանում: Այսպես՝ 1918 թ. նոյեմբերի 4-ի նիստի ժամանակ հույն երեսփոխաններ Վանգելը, Էմանուելիդիսը և Տոկինիդիսը հանդես են եկել երիտթուրքական կա-

68 St' u Taner Akcam, *The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire* (Princeton, New Jersey: Princeton University Press, 2012), 258:

69 St' u Vahakn N. Dadrian, "Documentation of the Armenian Genocide in Turkish Sources," in *Genocide: A Critical Bibliographic Review*, Vol. 2, ed. Israel W. Charny (London: Mansell Publishing, New York: Facts on File, 1991): St' u նաև Vahakn N. Dadrian, "The Documentation of the World War I Armenian Massacres in the Proceedings of the Turkish Military Tribunal," *International Journal of Middle East Studies* 23, no. 4 (1991): 550-551 (Վահագն Դադրյանը նաև ներկայացնում է այս տվյալի առնչությամբ թուրք գործիչների արձագանքները), Taner Akcam, *Armenien und der Völkermord. Die Istanbul Prozesse und die türkische Nationalbewegung* (Hamburg: Hamburger Edition, 1996), 76, Vahakn N. Dadrian and Taner Akcam, *Judgment at Istanbul: The Armenian Genocide Trials* (New York – Oxford: Berghahn Books, 2011), 47:

70 St' u «800.000 հայեր ջարդուած են», *Ճակատամարտ*, օրաթերթ (Կ.Պոլիս), 15 մարտ 1919, 1 (Լուրից մի հատված. «Ներքին գործոց նախարար Ճեմալ պէյ հետեւեալ յայտարարութիւնները ըրած է. – Իթթիհատը՝ սահմանադրութեան սկիզբէն իր ձեռքը առաւ երկրին ճակատագիրը՝ իջեցնելու զայն ներկայ վիճակին: Ան ջարդել տուաւ 800.000 հայեր եւ տարագրեց 400.000 յոյներ» (ընդգծումը բնագրային է – Ռ. Թ.)):

71 St' u Dadrian, "Documentation of the Armenian Genocide in Turkish Sources," 108:

72 Ըստ աղբյուրի՝ Մուստաֆա Քեմալի խոսքերն էին. «Ամերիկայում, Ֆրանսիայում և Անգլիայում նույնպես բազմաթիվ մարդիկ են սպանվում, և կատարվում են այլ հանցագործություններ, սակայն ոչ մի ազգ չի մեղադրվում: Միայն թուրքերին են պատասխանատվության ենթարկում իրենց սեփական ժողովրդի՝ 800 000 հայերի ջարդի համար» (նույն տեղում, 131): 1920 թ. ապրիլի 24-ին՝ Թուրքիայի խորհրդարանի բացման հաջորդ օրը, Մուստաֆա Քեմալն անդրադարձել է «հայերի կոտորածներին»՝ որակելով դրանք որպես «ամոթալի արարք» (տե՛ս Dadrian, "The Documentation of the World War I Armenian Massacres in the Proceedings of the Turkish Military Tribunal," 551):

ռավարության գործունեությունը քննելու միջնորդությամբ՝ ներկայացնելով իրթի-հաղական կուսակցության գործած ոճիրները: Ոչ իսլամադավանների նկատմամբ երիտթուրքերի հանցագործությունների շարքում առաջինը նշվում էր մեկ միլիոն հայերի բնաջնջումը: Մասնավորապես արձանագրվում էր, որ «հայ ազգին պատկանել է զատ ուրիշ ոչ մեկ յանցանք ունեցող մեկ միլիոն հոգի, առանց բացառելու կիները և երեխաները, սպաննուեցան և փճացան»⁷³:

Երիտթուրքերի մեկ այլ պարագլուխ, Առաջին աշխարհամարտի տարիներին ռազ-մածովային ուժերի նախարար և Սիրիայում գործող թուրքական 4-րդ բանակի հրա-մանատար Ահմեդ Ջեմալն իր հուշերում (հրատարակվել են 1922 թ. անգլերեն), առանց աղբյուր նշելու, գուցե հիմնվելով «Կապույտ գրքի» տվյալի վրա, հայ զոհերի թիվը հաշվում է մոտ 600 000⁷⁴:

4. Հայկական տվյալների խումբ

ա. Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի հաշվումները

Հայկական աղբյուրների՝ զոհերի առաջին ամբողջական հաշվումը շրջանառու-թյան մեջ է դրվել արդեն 1915 թ. օգոստոսին: Այդ տվյալներով՝ մինչև օգոստոսի 1-ը Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի նահանգներից կոտորվել, անհետացել, իս-լամացվել և աքսորվել է 835 600 հայ (այդ թվում՝ Նիկոմիդիա՝ 65 000, Արմաշ՝ 5 000, Պրուսա՝ 25 000, Բանդիրմա՝ 15 000, Կեսարիա՝ 40 000, Սեբաստիա՝ 81 000, Եվդո-կիա՝ 23 000, Ամասիա՝ 25 000, Շապին-Գարահիսար՝ 25 200, Սամսոն՝ 20 000, Տրա-պիզոն՝ 32 700, Կարին՝ 75 000, Երզնկա՝ 25 500, Բաբերդ՝ 17 000, Բասեն՝ 10 500, Դեր-ջան՝ 15 000, Քեմալի՝ 10 000, Խարբերդ՝ 45 000, Քդի՝ 25 000, Սդեդդ՝ 25 000, Տիգրա-նակերտ՝ 55 000, Ակն՝ 10 200, Արաբկիր՝ 19 500, Չմշկաձագ՝ 9 000, Հալեպ՝ 15 800, Սիս-Հաճն՝ 30 300, Զեյթուն և Փոնուզ՝ 28 000, Տիվրիկ՝ 11 300, Բաղեշ-Մուշ՝ 51 500)⁷⁵: Այս տվյալները Պոլսից Բուլղարիայի ազգային-եկեղեցական կառույցներին էր հաղորդել դաշնակցական գործիչ, մտավորական Շավարշ Միսաքյանը, ով այդ ժամանակ թաքնվում էր, որ չձերբակալվի, և ապրում էր ընդհատակում⁷⁶: Բուլղարիայի թեմի

73 Վահագն Տատրեան, *Հայկական ցեղասպանությունը Խորհրդարանային և Պատմագիտական Քննարկումներով* (ԱՄՆ, «Պայքար», 1995), 8: Ըստ հույն պատգամավորների երիտթուրքերի իշխա-նության տարիներին ոչ մուսուլմանների նկատմամբ գործած մյուս ոճիրներն էին՝ Օսմանյան կայսրու-թյունից 250 000 հույների արտաքսումն ու նրանց ունեցվածքի բռնագրավումը, Առաջին աշխար-համարտից առաջ տարբեր ծովափնյա և ներքին շրջաններում 550.000 հույների կոտորածն ու նրանց գույքի բռնագրավումը, ոչ մուսուլմանների համար առևտրային որոշակի գործունեությամբ զբաղվելու արգելքը, հայ պատգամավորներ Գրիգոր Զոհրապի և Վարդգես Սերինգուլյանի սպանությունը, աշխատանքային գումարտակների 250 000 զինծառայողներին, որոնց մեծամասնությունը ոչ մուսուլ-մաններ էին, սովամահության հասցնելը (տե՛ս Pelin Doygun, «The Others» in Politics During the Era of the Young Turks: Ottoman Greeks in the Parliament (1908-1918), *Espacio Tiempo y Forma. Serie V. Historia Contemporánea* 34 (2022): 113):

74 Տե՛ս Djemal Pasha, *Memories of a Turkish Statesman, 1913-1919* (London: Hutchinson & Co., 1922), 280, 299:

75 Տե՛ս «Հաւոր թիւեր», *Հայաստան* (Սոֆիա), 19 օգոստոս 1915, 1:

76 Տե՛ս Ռ. Լեոնեան, «Մեծ աղէտի օրերուն», *Հայրենիք* (Բոստոն), թիւ 8 (68), յունիս, 1928, 111: Պոլսից հեռանալու և Բուլղարիայում ապաստանելու փորձի ժամանակ՝ 1915 թ. աշնանը, Շ. Միսաքյանն ի

առաջնորդ Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանն այդ թիվը փոխանցվել է Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին⁷⁷: Այն սկսել է շրջանառվելնաև բուլղարահայ և դրա միջոցով այլ երկրների⁷⁸ հայկական մամուլում:

Հայերի տեղահանության և կոտորածների առնչությամբ արտասահմանում գտնվող հայկական կառույցներին, Օսմանյան կայսրությանը դաշնակից և չեզոք պետությունների դեսպանատներին ուղղված իր ահազանգերում զոհերի թվաքանակի վերաբերյալ տվյալներ է ներկայացրել նաև Կ.Պոլսի հայոց պատրիարք Զավեն արք. Եղիայանը: Այսպես՝ արդեն Բուլղարիայի թեմի առաջնորդ Ղևոնդ եպ. Դուրյանին ուղղված 1915 թ. հունիսի 30-ի (հուլիսի 13) նամակում պատրիարքը նշում էր. «Կը տեսնեք Թուրքիոյ Հայութիւնը իր կեանքին վերջին օրերը կ'ապրի,քանի մը ամիսէն յետոյ մէկուկէս միլիոն հայութենէն»⁷⁹ շատ քիչ բան պիտի մնայ, փճացումը անխուսափելի է»⁸⁰:

1915 թ. օգոստոսի 2 (15)-ին՝ նույն հասցեատիրոջն ուղղված նոր նամակում պատրիարքը նշում է. «Կարնոյ, Տրապիզոնի, Սեբաստիոյ, Խարբերդի, Բաղէշի եւ Տիգրանակերտի նահանգներուն մէջ հայ չէ մնացած բնաւ, այդ միլիոնի մը չափ ժողովուրդը իրենց հայրենիքէն յանկարծական տեղահան եղած եւ դէպի հարաւ քշուած է»⁸¹:

Կ.Պոլսում Գերմանիայի դեսպան կոմս Վոլֆ ֆոն Մետերնիխին հասցեագրված 1915 թ. նոյեմբերի 10-ի նամակում պատրիարք Զավեն Տեր-Եղիայանը, ներկայացնելով տեղահանության և կոտորածների ընթացքն ու հետևանքները, մասնավորապես նշում է, որ «այս աննախընթաց հալածանքները հայ ժողովուրդին արժած են 800 000 էւ 1 000 000 կեանքերու կորուստը: Այժմ ազգին մնացեալ մասը ցրուած է Միջագետքի եւ Սիրիոյ անապատներուն մէջ եւ դատապարտուած՝ անտարակոյս՝ անգութ բնաջնջումի»⁸²:

1915 թ. վերջերին – 1916 թ. սկզբներին օսմանյան իշխանությունները հետևողականորեն աշխատանք տարան Կ.Պոլսի հայոց պատրիարքին մեկուսացնելու և լռեցնելու ուղղությամբ: Այս աշխատանքներն ավարտին են հասնում 1916 թ. օգոստոսի 10-ին

վերջո ձերբակալվել և բանտարկվել է (տե՛ս «Հայ հրապարակագրութեան անգերազանցելի վարպետը Շաւարշ Միսաքեան հանկարծամահ եղավ Փարիզի մէջ», *Ազդակ* (Բեյրութ), թիւ 277, 29 յունուար 1959, 1):

77 Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, «Մի քանի վավերագրեր Մեծ եղեռնի արյունոտ օրերից», *Էջմիածին, Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռ Սրբոյ Էջմիածնի* ԼԷ, no. Դ (1980), 54-55: Տե՛ս նաև Մ. Ա. Ավետիսյան, Ջ. Ա. Հովհաննիսյան, «Փաստաթղթեր 1915 թ. ցեղասպանության վերաբերյալ», *Լրաբեր հասարակական գիտությունների*, no. 1 (1995), 217-218:

78 Տե՛ս «Результаты турецких зверств», *Армянский вестник*, № 2, 8 февраля 1916, 10:

79 Այս թիվն ըստ երևույթին արտացոլում է միայն Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Փոքր Ասիայի հայ բնակչության թվաքանակը:

80 Զաւէն արքեպս., *Պատրիարքական յուշերս. վաւերագրեր եւ վկայութիւններ* (Գահիրէ, տպ. «Նոր Աստղ», 1947), 136:

81 Նույն տեղում, 137:

82 Նույն տեղում, 162: Զավեն արք. Տեր-Եղիայանի նամակը պահպանվել է նաև Գերմանիայի ԱԳՆ արխիվում և հրատարակվել Հայոց ցեղասպանությանը վերաբերող փաստաթղթերի ժողովածուներում (տե՛ս *The Armenian Genocide: Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916*, 481):

ընդունված որոշմամբ, որով չեղարկվում էր 1863 թ. հայոց ազգային սահմանադրությունը, միավորվում էին Հայ առաքելական եկեղեցու՝ Օսմանյան կայսրության տարածքում գործող բոլոր նվիրապետական այթոռները (Սսի և Աղթամարի կայողիկոսություններ, Կ.Պոլսի և Երուսաղեմի պատրիարքարաններ), վերացվում էր Կ.Պոլսի հայոց պատրիարքի պաշտոնը⁸³: Պաշտոնաթող հռչակված Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանը աքսորվում է Բաղդադ⁸⁴:

Առաջին աշխարհամարտում Օսմանյան Թուրքիայի պարտությունից հետո՝ 1919 թ. փետրվարի 19-ին, Զավեն Տեր-Եղիայանը վերադառնում է Կ.Պոլիս և նորից ստանձնում պատրիարքությունը⁸⁵: 1915-1916 թթ. տեղահանության և ջարդերի հետևանքով հայության կրած մարդկային և կյուրական կորուստների վերաբերյալ տվյալների հավաքումը դառնում է Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի 1919-1920 թթ. գործունեության հիմնական ուղղություններից մեկը⁸⁶: Տվյալների հավաքման նպատակով 1919 թ. օգոստոսին Կ.Պոլսի հայոց պատրիարքարանին կից ստեղծվում է նոր կառույց՝ Տեղեկատու դիվանը⁸⁷: Համաձայն Տեղեկատու դիվանի կանոնագրի՝ այնտեղ պետք է կենտրոնանային, մասնավորապես, «Հայաստանի եւ հայկական դատի վերաբերեալ հին թէ՛ նոր ամէն կարգի վիճակագրութիւններն,Հայ հալածանքներու, ջարդերու, տեղահանութեան վերաբերեալ բոլոր դրուագներն ու պատմութիւններ, կողոպտուած ազգային թէ՛ անհատական շարժուն թէ՛ անշարժ գոյքերու մասին վիճակագրական պատկերներու իսլամացած երկսեռ Հայութեան եւ յափշտակուած որբերու մասին վիճակագրութիւններ»⁸⁸:

Ստեղծումից անմիջապես հետո Տեղեկատու դիվանը թեմեր է ուղարկում հարցաքննի և վիճակագրույցի թերթեր, որոնք, ի թիվս այլոց, պարունակում են նաև հարցումներ տեղահանությունից և կոտորածից առաջ և հետո հայերի թվաքանակի վերաբերյալ⁸⁹:

83 Մանրամասն տե՛ս Սերգեյ Մանվելյան, «Հայոց ազգային սահմանադրության եւ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության վերացման երիտթուրքական քաղաքականությունը Առաջին աշխարհամարտի տարիներին», *Էջմիածին, Պաշտոնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի ՀԶ*, no. 3 (2019), 123-124: Տե՛ս նաև Զաւէն արքեպս., *Պատրիարքական յուշերս*, 191-192:

84 Տե՛ս Մանվելյան, «Հայոց ազգային սահմանադրության եւ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության վերացման երիտթուրքական քաղաքականությունը», 128: Տե՛ս նաև Մ. Մինասյան, «Զավեն Արքեպիսկոպոս Տեր-Եղիայան», *Էջմիածին, Պաշտոնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի Դ*, no. 5-6 (1947), 13:

85 Տե՛ս նույն տեղում:

86 Մանրամասն տե՛ս Ռոբերտ Թաթոյան, «Արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի բնակչության էթնիկական կազմի հարցերը Փարիզի հաշտության կոնֆերանսին (1919-1920 թթ.)», *Յեղասպանագիտական հանդես* 4, no. 1 (2016), 47-55:

87 Տե՛ս Զաւէն արքեպս., *Պատրիարքական յուշերս*, 302: Տե՛ս նաև Bedross Der Matossian, “The Genocide Archives of the Armenian Patriarchate of Jerusalem,” *Armenian Review* 52, no. 3-4 (Fall-Winter 2011), 22:

88 Զաւէն արքեպս., *Պատրիարքական յուշերս*, 303:

89 Վիճակագրությունների հավաքման ուղղությամբ Տեղեկատու դիվանի գործունեության մասին մանրամասն տե՛ս Ռոբերտ Թաթոյան, «Մեծ եղեռնի ընթացքում արևմտահայութեան կրած մարդկային եւ նիւթական կորուստները վիճակագրելու Կ.Պոլսի Հայոց Պատրիարքարանի փորձերը

Հարցարանի, վիճակացույցի ստացված պատասխանների և այլ տվյալների հիման վրա Տեղեկատու դիվանը 1920-1921 թթ. կազմում և հրապարակում է որբերի և իսլամացված կանանց ու երեխաների վիճակագրությունը⁹⁰ և 1921 թ. ապրիլի 1-ի դրությամբ Օսմանյան Թուրքիայի տարածքում մնացած հայերի վիճակացույցը⁹¹: Նշված տվյալների հիման վրա Տեղեկատու դիվանի հետ համագործակցող արևմտահայ մտավորական Թեոդիկը (Թեոդորոս Լափչինճյան)⁹² կազմում է «Բաղդատական վիճակագրություն հայ բնակչության Օսմ. Կայսրության մեջ տեղահանություն է առաջ եւ վերջ (Պատրաստում 1 Ապրիլ 1921ին)» վերտառությամբ տեղեկագիրը (առաջին անգամ ամբողջությամբ հրատարակվել է Թեոդիկի «Ամենուն տարեցույց»-ի 1922 թ. պրակում)⁹³:

Նախ Թեոդիկն աղյուսակի տեսքով ներկայացնում է Օսմանյան կայսրության հայ բնակչության թիվը Առաջին աշխարհամարտից առաջ և հետո՝ ըստ նահանգների և թեմերի: Նախապատերազմական տվյալների հիմքը Կ.Պոլսի պատրիարքարանի

1919-1920 թուականներին (ըստ Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի արխիվի նիւթերի) (Մաս 1)», *Էջմիածին, Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսության Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի ՀԶ*, no. Դ (2019), 63-80, Ռոբերտ Թաթոյան, «Մեծ եղեռնի ընթացքում արևմտահայության կրած մարդկային և նիւթական կորուստները վիճակագրելու Կ.Պոլսի Հայոց Պատրիարքարանի փորձերը 1919-1920 թուականներին (ըստ Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի արխիվի նիւթերի) (Մաս 2)», *Էջմիածին, Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսության Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի ՀԶ*, no. Ե (2019), 53-86:

90 Մանրամասն տե՛ս Ռոբերտ Թաթոյան, «Մեծ եղեռնի որբերի թվաքանակի վերաբերյալ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1919-1922 թվականներին կազմած վիճակագրությունները», «*Հայերի փրկության գործը Մերձավոր Արևելքում 1915-1923 թթ.*» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, խմբագիրներ՝ Հ. Տ. Մարության, Ն. Վ. Մարգարյան (Երևան, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, 2020), 323-348:

91 Տե՛ս «Թուրքիոյ Հայոց վիճակացույցը պատրաստում 1921-ի սկիզբը», *Ազգ (Պոսթոն)*, 7 ապրիլի 1921, 1:

92 Թեոդիկը Մեծ եղեռնի ընթացքում նահատակված հայ հոգևորականության մասին նյութեր հավաքելու ժամանակ, պրպտելով պատրիարքարանի արխիվը, նկուղներում գտել է պարկերի մեջ լցված թղթեր: Դրանք Օսմանյան կայսրության հայկական թեմերի՝ Հայոց պատրիարքարանի հանձնարարությամբ Առաջին աշխարհամարտի նախօրյակին լրացրած և պատրիարքարան ուղարկված վիճակագրական հարցաթերթերն էին (Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի 1913 թ. վիճակացույց), որոնք 1915 թ. ապրիլի 24-ի ձերբակալություններից անմիջապես հետո թաքցվել էին նկուղում Հայկական հարցին վերաբերող այլ փաստաթղթերի հետ (տե՛ս Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականության և իր հօտին 1915 աղետալի տարին* (Նիւ Եորք, 1985), III): Այս վիճակագրությունները փոխանցվում են Տեղեկատու դիվանին և հետագայում ուղարկվում Փարիզ՝ Հայ ազգային պատվիրակությանը: Ներկայումս դրանք պահվում են Փարիզի Նուբարյան գրադարանում: 1913 թ. վիճակացույցի՝ Նուբարյան գրադարանում պահվող հարցաթերթերի տվյալները գիտական շրջանառության մեջ են դրել սփյուռքահայ ուսումնասիրողներ Ռայմոն-Հարություն Գևորգյանը և Փոլ Փաբուդյանը (տե՛ս Raymond H. Kevorkian, Paul B. Paboudjian, *Les Armeniens dans l'Empire ottoman a la veille du Genocide* (Paris, ARHIS, 1992)): Հայոց պատրիարքարանի 1913-1914 թթ. վիճակագրություններին մեր անդրադարձը տե՛ս Ռոբերտ Թաթոյան, *Արևմտահայության թվաքանակի հարցը 1878-1914 թվականներին* (Երևան, ՀՅԹԻ, 2015), 92-115:

93 Տե՛ս «Բաղդատական վիճակագրություն հայ բնակչության Օսմ. Կայսրության մեջ տեղահանություն է առաջ եւ վերջ (Պատրաստում 1 Ապրիլ 1921ին)», Թեոդիկ, *Ամենուն տարեցույց, ԺԶ տարի*, 1922 (Կ.Պոլիս, տպ. «Մ. Յովակիմյան», 1921), 261-265:

1912 թ. վիճակագրությունն է, որի համաձայն՝ հայերի թիվը 2 026 700 էր⁹⁴: Նույն տարածքում 1921 թ. ապրիլի 1-ի դրությամբ փաստացի մնացել էր 592 200 հայ⁹⁵: Վերջին թվին Թեոդիկն ավելացնում է այլ վերապրածների տվյալներ (հայ որբեր, որոնք գտնվում էին Միջագետքի անապատաբնակ ցեղերի մոտ՝ 5 800, Անատոլիայի մուսուլմանների մոտ գերության մեջ գտնվող որբեր՝ 58 000, Արևմտյան Հայաստանի նահանգներից «Կովկասում» (Արևելյան Հայաստան և Հարավային Կովկասի այլ շրջաններ) ապաստանած հայ փախստականներ՝ 400 000) և այդպիսով վերապրածների ընդհանուր թվաքանակը նշում 1 056 000: Իր հաշվումը Թեոդիկն ամփոփում է հետևյալ կերպ. «Պատերազմէն առաջ, Թուրքիոյ Հայոց բնակչութեան թիւը 2 026 700 էր: Ուրեմն տեղահանութեան և ջարդերու հետևանքօք Թուրքիոյ մէջ մեռնող Հայոց թիւը մօտաւորապէս 1 000 000 է»⁹⁶:

Բացի Տեղեկատու դիվանից՝ արևմտահայության նախաեղեռնյան և հետեղեռնյան թվաքանակի, մարդկային կորուստների մասին տվյալներ են հավաքել և հաշվումներ կատարել պոլսահայ այլ կառույցներ և դրանց հետ փոխկապված հեղինակներ: Այսպես՝ Մուրդուսի զինադադարի կնքումից անմիջապես հետո՝ 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, Պոլսի հայ մտավորականների և Ազգային երեսփոխանական ժողովի նախկին անդամների մասնակցությամբ ստեղծվել է Ազգային լիգան, իսկ այնուհետև՝ Ազգային խորհրդակցական ժողովը, որի փաստաթղթերի հանձնախումբն աշխատանք է տարել նաև վիճակագրական տվյալների հավաքման ուղղությամբ: Հավաքված նյութերի մի մասը հրատարակվել է, և դրանց հիման վրա արևմտահայության նախաեղեռնյան թվաքանակի, զոհերի և վերապրածների թվաքանակի հաշ-

94 Նախկինում Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի 1912 թ. վիճակագրության տվյալներն օգտագործել էր նշանավոր արևմտահայ գործիչ Գրիգոր Զոհրապը Մարսել Լեար ծածկանվամբ 1913 թ. ֆրանսերեն հրատարակած իր «Հայկական հարցը փաստաթղթերի լույսի ներքո» հայտնի աշխատանքում (տե՛ս Marcel Leart, *La question Armenienne a la lumiere des documents* (Paris: Challamel, 1913)): Գ. Զոհրապի հաշվումով՝ 1912 թ. ամբողջ Օսմանյան կայսրությունում բնակվում էր 2 100 000 հայ (տե՛ս նույն տեղում, 62): Զոհրապի գրքում գետեղված՝ Հայոց պատրիարքարանի 1912 թ. վիճակագրական տվյալները որոշ չափով տարբերվում են 1919 թ. հուլիսի տվյալներից: Այսպես, եթե Արևմտյան Հայաստանի վեց նահանգների հայ բնակչության թվաքանակի համար Զոհրապի տվյալը նույնն է՝ 1 163 000 շունչ, ապա Օսմանյան կայսրության մնացած մասի հայ բնակչության թվաքանակը նշված է 937 000, որից 407 000-ը՝ Կիլիկիայում, 530 000-ը՝ Օսմանյան կայսրության այլ տարածքներում և Եվրոպական Թուրքիայում (համեմատության համար՝ 1912 թ. Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի վիճակագրության՝ Թեոդիկի «Ամենուն տարեցույցում» հրատարակված տարբերակում նույն տարածքների հայ բնակչության թվաքանակը նշված է 863 700, այդ թվում՝ Կիլիկիայում (Ադանայի և Հալեպի նահանգներ)՝ 304 000): Ըստ երևույթին, 1912 թ. համեմատ 1914 թ. հայ բնակչության թվի նվազումը 2 100 000-ից 2 026 000 բացատրվում է 1912-1913 թթ. բալկանյան պատերազմների հետևանքով Օսմանյան կայսրության կրած տարածքային կորուստներով, իսկ Կիլիկիայի պարագայում՝ օսմանյան վարչական և հայկական թեմական բաժանման անհամապատասխանությամբ (Կիլիկիայի հայոց կաթողիկոսության ենթակայության տակ եղել են բուն Կիլիկիայի պատմաաշխարհագրական տարածքից դուրս տարածքներ Անգորայի, Սեբաստիայի և Խարբերդի նահանգների տարածքներում, որոնց հայ բնակչության թիվը Գ. Զոհրապը ներառել է Կիլիկիայի ազգաբնակչության ընդհանուր թվաքանակի մեջ):

95 Տե՛ս «Բաղդատական վիճակագրություն հայ բնակչության Օսմ. Կայսրության մեջ տեղահանությունէ առաջ եւ վերջ», 263:

96 Թեոդիկն իր տվյալներից հետևող հայերի զոհերի թիվը՝ 970 700, կլորացնում է մեկ միլիոն (տե՛ս նույն տեղում):

վումներ են կատարել արևմտահայ մտավորականներ Գևորգ Մեսրոպը (Գևորգ Տեր-Մեսրոպյան)⁹⁷ և Չիթունին (Տիգրան Չիթյան)⁹⁸: Այսպես՝ Գ. Մեսրոպը, ներկայացնելով տարբեր աղբյուրներից քաղված վիճակագրական տվյալներ և դրանցից որպես հիմք ընդունելով Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի 1912 թ. վիճակագրությունը, գտնում է, որ 1914 թվականից առաջ Օսմանյան կայսրության հայ բնակչության թիվը 2 100 000 էր, իսկ «1915-1918ի ներկայ ահաուր աղետին առիթով եղած կորուստըմերձաուր հաշուով շուրջ մէկ միլիոն պէտք է նկատել»⁹⁹:

Հաջորդիվ հեղինակը ներկայացնում է վերապրածների թիվը՝ «Թուրքահայերէն տարագիր հայութեան բեկորները, իսլամացած հայեր եւ հայ զինուորներ»՝ 200 000, «Կովկաս» ապաստանած հայեր՝ 500 000, Սիրիայում, Միջագետքում, Կիլիկիայում և Կոնիայում մնացած հայեր՝ 250 000, ընդամենը՝ 950 000 (առանց Կ.Պոլսի հայության)¹⁰⁰:

Չիթունին, աղյուսակում համադրելով արևմտահայության թվաքանակի վերաբերյալ տարբեր աղբյուրներից քաղած 1845-1915 թթ. տարբեր վիճակագրություններ, հանգում է այն եզրակացությանը, որ 1915 թ. դրությամբ Օսմանյան կայսրության հայերի ընդհանուր թիվը, միջին հաշվով, 2 500 000 էր, որից 200 000-ը՝ եվրոպական Թուրքիայում, 800 000-ը՝ Փոքր Ասիայում և «Պաղեստին-Միջագետքի» հատվածում, իսկ շուրջ 1 500 000-ը՝ Արևմտյան Հայաստանի հայաբնակ վեց նահանգներում¹⁰¹:

Չիթունին, ըստ երևույթին, առաջին ուսումնասիրողն է, ով «1915-1919 ընդհանուր պատերազմի շրջանին ջարդուած, մեռած, փճացած» հայերի թիվը հաշվում է մոտ մեկուկես միլիոն: Այս թիվը ստանալու համար նա համադրում է 1915 և 1919 թթ. դրությամբ ամբողջ աշխարհում բնակվող հայերի՝ իր հաշված թվերը, համապատասխանաբար՝ 5 062 486 և 3 630 000, որոնց տարբերությունը կազմում է 1 432 486¹⁰²:

Այստեղ հարկ է արձանագրել, որ ներկայումս առավել ընդունված և պատմագիտական գրականության մեջ առավել արժարժված նախատեղեկյան շրջանի արևմտահայության 2.5 միլիոն և գոհերի 1.5 միլիոն թվերն այդ ժամանակ, բացի Չիթունուց, այլ հեղինակներ չեն հիշատակել. ժամանակի հայկական մամուլը, ինչպես նաև հար-

97 Տե՛ս Գևորգ Մեսրոպ, *Հայաստան: Աշխարհագրական, պատմական, ցեղագրական, վիճակագրական եւ մշակութային տեսակետներով: Իրացուած ազգ. խորհրդակց. ժողովի «Փաստաթուղթերու յանձնախումբ»* էն (Կ.Պոլիս, տպ. «Օ. Արզուման», 1919):

98 Տե՛ս Չիթունի, *Յուշիկը Հայաստանի* (Կ.Պոլիս, տպ. «Օ. Արզուման», 1919): Նույնի՝ Աս ու լիս Հայաստանի (Կ.Պոլիս, տպ. «Կ. Քէշիշեան որդի», 1920):

99 Մեսրոպ, *Հայաստան*, 67 (արևմտահայության, Արևմտյան Հայաստանի, Հայկական լեռնաշխարհի նախատեղեկյան և հետեղեկյան ժողովրդագրության հարցերին հեղինակը նվիրել է «Թուրքիոյ Հայոց թիւը» (էջ 63-68), «Հայոց թիւը ամբողջ աշխարհին մէջ» (էջ 68-72), «Հայերը Հայկական բարձրավանդակին վրայ» (էջ 72-74), «Նոր Հայաստանի հայ բնակչութիւնը» (էջ 74-76) ենթագլուխները):

100 Տե՛ս նույն տեղում, 75:

101 Տե՛ս Չիթունի, *Յուշիկը Հայաստանի*, 62-63: Հայ ուսումնասիրողներից Առաջին աշխարհամարտի նախօրյակի դրությամբ Օսմանյան կայսրության հայ բնակչության թիվը 2.500.000 է հաշվել դեռևս «Մշակի» խմբագիր Համբարձում Առաքելյանը (տե՛ս Համբարձում Առաքելեան, «Թուրքահայ ժողովրդի վիճակագրութիւնը», *Արօր. միամսեայ հանդէս. ընդհանուր գրական, գիտական-ժողովրդական եւ խաղաղասիրական*, դեկտեմբեր, 1913, 78):

102 Տե՛ս նույն տեղում, 64:

ցին անդրադարձած այլ հայ հեղինակներ ընդունել և լայնորեն շրջանառել են համապատասխանաբար 2 միլիոն և 1 միլիոն թվերը¹⁰³:

բ. Հայ միացյալ պատվիրակության հաշվումները

Ցեղասպանության գոհերի թվաքանակի վերաբերյալ տվյալներ են պարունակում Հայկական միացյալ պատվիրակության (ղեկավարներ՝ Պողոս Նուբար փաշա և Ավետիս Ահարոնյան) կազմած երկու հուշագրերը, որոնք ներկայացվել են 1919 թ. Փարիզում հրավիրված հաշտության վեհաժողովին: Փաստաթղթերից մեկը նվիրված էր միացյալ Հայաստանի սահմաններին («Հայկական հարցը հաշտության կոնֆերանսի առաջ»¹⁰⁴: ներկայացվել է վեհաժողովի Գերագույն խորհրդի 1919 թ. փետրվարի 26-ի նիստին), մյուսը՝ Առաջին աշխարհամարտի ընթացքում հայ ժողովրդի (իր արևելահայ և արևմտահայ հատվածներով) կրած մարդկային և նյութական կորուստների ու դրանց դրամական փոխհատուցման հաշվարկին («Թուրքահայաստանի և Կովկասում Հայաստանի Հանրապետության հայության կրած վնասների համար հատկացումների և հատուցումների մոտավոր աղյուսակ»¹⁰⁵: շրջանառության մեջ է դրվել 1919

103 Տե՛ս, օրինակ, Սեպուհ Ակունի, *Միլիոն մը հայերու ջարդի ամբողջական պատմությունը (1914-1918)* (Կ.Պոլիս, հրատարակություն «Հայաստան» գրատան, 1921), Անտոնեան, *Մեծ ոճիրը*, 243 («... այս վերջին սպանդին մեջ որ միմիայն հայոց աւելի քան մէկ միլիոն հոգի արժեց»), 263 («... մէջտեղը աւելի քան մէկ միլիոն դիակներ կային»), Գրիգորիս ծ. վարդ. Պալաքեան, *Հայ Գողգոթան: Դրուագներ հայ մարտիրոսագրութենէն: Պեղիմէն դէպի Զօր 1914-1920: Ա. հատոր* (Վիեննա, Մխիթարեան տպարան, 1922), 118 («... սպաննուածմէկ միլիոն հայերուն պարտադրուելիք պատիժը մահուանէ տարբեր բան մը չէր կրնար ըլլալ»), 133 («... իսկ այս աստիճան կոյր վստահութիւնն՝ ավաղ մէկ միլիոն անմեղ ժողովրդիկեանքերն արժեց»), Թէոդիկ, *Զուլումը եւ մեր որբերը* (Կ.Պոլիս, տպագր. «Կ. Քէշիշեան որդի», 1921), 15 («Հայը լիովի վճարած եղաւ ...իր արիւնի պարտքը, զոհ տալով առանէ քան մէկ միլիոն հոգի»), Թէոդիկ, *Յուշարձան Ապրիլ 11ի* (Կ.Պոլիս, տպագրություն «Օ. Արզուման», 1919), 53 («... ի խոնարհ մէկ միլիոն այսչափ գոհերով՝ որոնց ճշգրիտ մահագրութիւնը կարողութեան սահմանէն դուրս է որ եւ է պատմագրի») և այլն:

104 Բնագիրը ֆրանսերեն է (տե՛ս *La question armenienne devant la conférence de la paix* (Paris: Dupont, 1919)): Հուշագիրը նույն՝ 1919 թ. թարգմանվել և լույս է տեսել նաև հայերեն (արևմտահայերեն և արևելահայերեն) և անգլերեն (տե՛ս *Հայկական հարցը հաշտության կոնֆերանսի առաջ* (Թիֆլիս, տպ. «Աշխատատը», 1919), *Հայկական հարցը խաղաղության ժողովին առջև* (Բոսթոն, 1919), *The Armenian Question before the Peace Conference* (New York: Press Bureau, The Armenian National Union of America, 1919)):

105 Բնագիրը ֆրանսերեն է (տե՛ս *Tableau approximatif des réparations et indemnités pour les dommages subis par la nation arménienne en Arménie de Turquie et dans la République Arménienne du Caucase* (Paris, 1919)): Հուշագրի հայերեն թարգմանությունը տե՛ս 1915-1965 *Յուշամատենան Մեծ Եղեռնի*, պատրաստեց՝ Գ. Ահարոնեան (Պեղյուք, «Զարթոնք» օրաթերթի հրատ., 1965), էջ 1020-1022, 1025-1028, տե՛ս նաև *Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին* («Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող, առաջաբանի և ծանոթ. հեղինակ՝ Ա. Զաքարյան, խմբագիր՝ Լ. Բարսեղյան (Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005), 221-228:

Այս հուշագիրը ներկայացվել է 1919 թ. փետրվարի 24-ից ապրիլի 22-ը Փարիզում հրավիրված Հայ ազգային համագումարի հավանությանը: Փաստաթղթի վերջնական տարբերակի վրա աշխատանք են կատարել նաև Կ.Պոլսից պատվիրակները, այդ թվում՝ պրոֆեսոր Աբրահամ Տեր-Հակոբյանը, ով՝ որպես արդեն հիշատակված Ազգային խորհրդակցական ժողովի անդամ, քաջատեղյակ էր արևմտահայությանը վերաբերող վիճակագրություններին (տե՛ս *Համահաւար ատենագրութիւններ Թուրքիոյ Հայոց Ազգային Երեսփոխանական ժողովի, Համագումար Ազգային ժողովի եւ Համազգային խորհուրդի (1919-1922): Գիրք Ա. Ատենագրութիւններ*, խմբ. եւ ծանօթ.՝ Վաչէ Ղազար-

թ. ապրիլի 6-ին):

«Հայկական հարցը հաշտության կոնֆերանսի առաջ» տեղեկագրում մասնավորապես նշվում էր, որ Առաջին աշխարհամարտի ընթացքում հայերի կորուստները գերազանցել են 1 000 000-ը, ինչը 4 500 000 կազմող ազգի համար (նկատի է առնված այդ ժամանակ բոլոր երկրներում ապրող հայերի ընդհանուր թիվը) համամասնորեն ավելի մեծ է, քան պատերազմին մասնակցած որևէ այլ ազգության կրած կորուստը¹⁰⁶:

Հուշագրի մեկ այլ հատվածում նույնպես շեշտվում էր Առաջին աշխարհամարտի ընթացքում զոհված հայերի մեկ միլիոն թիվը, ինչպես նաև նշվում, որ 1878 թ. Բեռլինի դաշնագրի ստորագրումից ի վեր թուրքական իշխանությունների կողմից բնաջնջվել է ավելի քան երկու միլիոն հայ (հաշվի է առնված նաև կոտորածների և գաղթերի հետևանքով բնակչության նվազումը)¹⁰⁷:

«Թուրքահայաստանի և Կովկասում Հայաստանի Հանրապետության հայության կրած վնասների համար հատկացումների և հատուցումների մոտավոր աղյուսակում» որպես զոհված հայերի թիվ նույնպես ընդունվում է մեկ միլիոնը (200 000 ընտանիք)¹⁰⁸: Տեղեկագրի ներածականի «Տուժած ընտանիքների թիվը» բաժնում նշվում է, որ պատերազմի սկզբում Օսմանյան կայսրությունում հայերի թիվը 2 026 000 էր, որից շուրջ 1 800 000-ը (360 000 ընտանիք՝ մեկ ընտանիքում 5 անձ հաշվով, այդ թվում՝ 1/4-ը, այսինքն՝ 90 000-ը՝ քաղաքաբնակ, իսկ 3/4-ը, այսինքն՝ 270 000-ը՝ գյուղաբնակ) ենթարկվել են կոտորածի ու տեղահանության և կամ ապաստան գտել Կովկասում¹⁰⁹:

Հայկական պատվիրակության հետազայում հրատարակված այլ հուշագրերում և տեղեկագրերում ևս շարունակվում է արծարծվել 1 000 000-ը որպես զոհերի ընդհանուր թիվ: Այսպես, օրինակ, Լոզանի հաշտության վեհաժողովի համար 1922 թ. դեկտեմբերին պատրաստած «Հայաստանը և Հայկական հարցը մինչև պատերազմը, պատերազմի ընթացքում և պատերազմից հետո» ֆրանսերեն տեղեկագրում նշվում էր, որ ասիական Թուրքիայում (առանց Կոստանդնուպոլսի) բնակվող 1 850 000 հայերից (1 018 000-ը՝ վեց հայկական նահանգներում, 200 000-ը՝ Կիլիկիայում, մնացածը՝ տարբեր վայրերում) մոտ մեկ միլիոնը սպանվել կամ մահացել են արքայի ճամբարներում (չհաշված համիդյան վարչակազմի ջարդերի զոհերը, որոնց թիվը, ըստ տեղեկագրի հեղինակների, գերազանցում էր 400 000-ը), 300 000-ը կարողացել են փախչել դեպի Կովկաս, իսկ մոտ 400 000-ը ցրվել են Սիրիայում, Կիպրոսում, Եգիպտոսում, Հունաստանում, Բուլղարիայում և այլուր¹¹⁰: Տեղեկագրի հավելվածներից մեկում տրվում էր ցեղասպանությունը վերապրած արևմտահայերի

եան (Երուսաղեմ, Տպարան Սրբոց Յակոբեանց, 2021), 43):

106 Տե՛ս *La question arménienne devant la conférence de la paix*, 4:

107 Տե՛ս նույն տեղում, 16:

108 Տե՛ս *Tableau approximatif des réparations et indemnités*, 7:

109 Տե՛ս նույն տեղում, 3-4 (ի հիմնավորումն այս տվյալի՝ ներկայացվում էին Յ. Լեփսիուսի և Ամերիկյան նպաստամատույցի (American Committee for Armenian and Syrian Relief) տվյալները՝ համապատասխանաբար 1 640 350 և 1 736 000):

110 Տե՛ս *Délégation de la République arménienne, L'Arménie et La Question Arménienne Avant, pendant et depuis la guerre* (Paris, 1922), 53:

մանրամասն վիճակագրությունը 1922 թ. նոյեմբերի դրությամբ: Համաձայն այդ տվյալների՝ վերապրածների թիվը 817 873 էր, որից Կ.Պոլսում, Փոքր Ասիայի և Արևմտյան Հայաստանի տարածքներում մնացած հայեր՝ 280 173 (տրվում է բաշխումը՝ ըստ գավառների), և տարբեր երկրներում փախստական հայեր՝ 537 700 (տրվում է բաշխումը՝ ըստ երկրների)¹¹¹:

Արժանահիշատակ է, որ Հայաստանի առաջին հանրապետության պետական գործիչ Ալեքսանդր Խատիսյանն իր «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը» աշխատանքում հաղորդում է, որ Հայկական միացյալ պատվիրակությունը 1923 թ. Լոզանի խորհրդաժողովին ներկայացրել է նաև արևմտահայությանը վերաբերող վիճակագրական այլ տվյալներ, որոնց համաձայն՝ արևմտահայերի թիվը նախքան 1915 թ. 2 250 000 էր, որից 1 250 000-ը ջարդի են ենթարկվել, 700 000-ը գաղթել են Կովկաս, Պարսկաստան, Սիրիա, Հունաստան, բալկանյան պետություններ և այլուր: Նշվում էր, որ «ներկայիս Տաճկաստանի գիւղերը 130 000 հայություն կա միայն և 150 000 ալ Պոլսի մէջ, որոնք միշտ ենթակալ են գաղթելու»¹¹²:

Կարելի է ենթադրել, որ զոհերի 1 250 000 թվում ներառված են նաև Առաջին աշխարհամարտից հետո՝ 1919-1922 թթ., քեմալականների գործողությունների, սովի և համաճարակների հետևանքով զոհված հայերը, այսինքն վերջինները, ըստ հայկական պատվիրակության հաշվումների, 250 000 էին¹¹³:

Արժանահիշատակ է, որ Մեծ Բրիտանիայի արտգործնախարար լորդ Ջորջ Զերգոնն ընդունեց և արձարծեց Հայկական միացյալ պատվիրակության այս տվյալները Լոզանի հաշտության վեհաժողովի՝ Հայկական հարցի քննարկմանը նվիրված նիստերի ժամանակ: Մասնավորապես 1922 թ. դեկտեմբերի 13-ի նիստին նա Օսմանյան կայսրության նախաեղեռնյան հայ բնակչության թիվը նույնիսկ հասցրեց

111 Տե՛ս նույն տեղում, 69-71:

112 Ալեքսանդր Խատիսյան, *Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը* (Աթէնք, տպագրություն «Նոր օր», 1930), 318:

113 Յավոք, Ա. Խատիսյանը չի նշում, թե որ աղբյուրից է քաղել նախաեղեռնյան հայ բնակչության և զոհերի այս տվյալները. հայկական պատվիրակության՝ Լոզանի խորհրդաժողովին ներկայացված հուշագրերում դրանք վկայված չեն: Ինքը՝ Ա. Խատիսյանը, հաջորդիվ բերում է հայկական պատվիրակության՝ Լոզանի վեհաժողովի ուշադրությանը տարբեր ժամանակներում ներկայացված երկու գրություններ, որոնցում հիշատակվում են հայկական մարդկային կորուստների համապատասխանաբար 1 միլիոն և 1.5 միլիոն թվերը: Այսպես՝ 1922 թ. նոյեմբերին Լոզանի խորհրդաժողովին ներկայացված հուշագրում նշվում էր. «1914 թականէն իվեր մէկ միլիոնէ աւելի հայեր ոչնչացած են ջարդերու, տեղահանութեան եւ գրկանքներու պատճառով. հարիւր հազարներ գաղթած են օտար վայրեր: Աւելցուցէ նաեւ 150 000 որբերու հսկայական թիւը...: Պաշտօնապէս յայտարարած է արդէն Ազգերու Դաշնակցութեան [Ազգերի լիգա – Ռ. Թ.-], որ 73.350 հայ կիներ եւ մանուկներ, բոնի ուժով տարած են իսլամական հարեմները եւ դեռ մինչեւ այսօր ալ հոն կը մնան: Այսպիսով 700 000 հայութիւն ներկայիս գրկած է իր ունեցածէն, թշուառ մայր երկրէն եւ կ'ապրի աշխարհիս զանազան կողմերը» (նույն տեղում, 323): Իսկ Անտանտի երկրների միացյալ պատվիրակությանը հասցեագրված 1923 թ. փետրվարի 3-ի ծանուցագրում կարդում ենք. «Եթէ հայեացք մը նետենք անոր [հայ ժողովրդի – Ռ. Թ.-] նիթական եւ ֆիզիքական կորուստներու վրայ, կը տեսնենք, որ 1 500 000 փճացեր են ջարդերէ եւ տեղահանութիւններէ, որ 700.000 դեռ կը թափառին անապաստան, որ 100 000 որբեր բռն են դարձած բարեգործական ընկերութիւններու վրայ» (նույն տեղում, 354):

3 միլիոնի՝ հետևյալ հռետորական հարցադրումներն ուղղելով թուրքական պատվիրակության նախագահ Իզզեթ փաշային. «Ինչպե՞ս պատահեց, որ Փոքր Ասիայի տարածքում նախկինում բնակվող 3 000 000 հայերից մնացին 130 000-ը: Մի՞թե իրենք իրենց սպանել են, թե՛ կամովին փախել: Ինչ ճնշման ներքո էր իրականացվել այդ կրճատումը: Երբ վերջերս ֆրանսիական զորքերը հեռացան Կիլիկիայից, ինչո՞ւ այդ երջանիկ ու բավարարված մարդկանցից 60 000-80 000-ը փախան նրանց հետ. ուրիշ տեղերում թշվառության մեջ ապրելո՞ւ համար՝ թողնելով իրենց տներն ու ընտանիքները: Ինչո՞ւ հարյուր հազարավոր հայեր այժմ փախստականներ են աշխարհի գրեթե բոլոր երկրներում, եթե նրանց ընդամենը պետք է վերադառնալ Թուրքիայի կառավարության ջերմ գիրկը: Ինչո՞ւ է Հայկական հարցը համարվում աշխարհի մեծագույն խայտառակություններից մեկը»¹¹⁴:

Ինչևէ, լորդ Քերզոնի այս հռետորական պոռթկումը որևէ ազդեցություն չթողեց թուրքական պատվիրակության՝ Թուրքիայի տարածքում ցեղասպանությունից մազապուրծ հայերի համար ազգային օջախ ստեղծելու հարցում անգիշում կեցվածքի վրա: 1923 թ. հուլիսի 24-ին Լոզանի հաշտության պայմանագրի ստորագրումից հետո Հայկական հարցը և դրան ածանցյալ Հայոց ցեղասպանության զոհերի թվաքանակի, Օսմանյան Թուրքիայի նախաեղեռնյան և հետեղեռնյան հայ բնակչության թվաքանակի հարցերը դուրս թողնվեցին միջազգային դիվանագիտության օրակարգից՝ այլևս դառնալով պատմագիտական ուսումնասիրությունների առարկա:

Ամփոփենք: Անգլո-ամերիկյան, գերմանական, օսմանյան և հայկական վերոնշյալ բոլոր տվյալների համադրումն ու վերլուծությունը թույլ են տալիս հանգել հետևյալ եզրակացություններին.

1. 1915-1916 թթ. զոհված հայերի առավել ընդունված թիվը, ըստ գրեթե բոլոր խմբերի տվյալների, մոտ մեկ միլիոն է¹¹⁵ (տե՛ս Աղյուսակ 1):

2. Ըստ ավելի մանրամասն հաշվումներ պարունակող աղբյուրների (Ա. Թոյնբի, Յ. Լեփսիուս և դրանցից սերող աղբյուրներ)՝ այս մեկ միլիոնից մոտ 600 հազարը զոհվել են 1915 թ.՝ տեղահանության և կոտորածների ընթացքում, 400 հազարը՝ 1916 թ. Միրիայի և Միջագետքի համակենտրոնացման ճամբարներում սովից ու համաճարակներից, այնուհետև՝ ճամբարների լուծարմանը հետևած գործողություններից:

3. Ավելի մանրամասն հաշվումներ պարունակող աղբյուրները (Ա. Թոյնբի, Յ. Լեփսիուս, Կ. Պոլսի հայոց պատրիարքարան և դրանցից սերող աղբյուրներ) զոհերի թվաքանակը որոշելու հարցում օգտվել են արևմտահայերի նախաեղեռնյան շրջանի և 1915-1916 թթ. տեղահանությունն ու կոտորածները վերապրածների թվերը համադրելու մեթոդից:

4. Այս հաշվումներում արևմտահայերի նախաեղեռնյան թվաքանակը գրեթե

114 Turkey № 1 (1923). *Lausanne Conference on Near Eastern Affairs, 1922-1923. Records of Proceedings and Draft Terms of Peace* (London: H.M.S.O., 1923), 211-212.

115 Այս թվում ներառված չեն նախքան 1915 թ. բռնազաղթը հատկապես Վանի և Բիթլիսի նահանգներում տեղի ունեցած կոտորածների զոհերը, ինչպես նաև Կովկասում ապաստանած արևմտահայության՝ 1915-1916 թթ. սովից և համաճարակներից ունեցած կորուստները:

բոլոր աղբյուրները տալիս են ըստ հայկական տվյալների: Ա. Թոյնբիի և Յ. Լեփսիուսի դեպքում աղբյուրը Մադաքիա Օրմանյանի վիճակագրությունն է (1902-1910 թթ.), քանի որ այդ ժամանակ այն միակ հրատարակված օտարալեզու, ըստ թեմերի բաշխում պարունակող աղբյուրն էր (դրա համաձայն՝ 1915 թ. նախօրյակին Օսմանյան կայսրությունում հայերի թիվը մոտ 1 850 000 էր): Կ.Պոլսի հայոց պատրիարքարանն օգտվել է իր տրամադրության տակ եղած ավելի թարմ՝ 1912 թ. վիճակագրությունից, ըստ որի՝ արևմտահայության թիվը 2 026 700 էր:

5. Ըստ վերոնշյալ տվյալների՝ 1915 թ. բռնագաղթի են ենթարկվել 1 200 000-1 400 000 հայեր, որոնցից Սիրիա և Միջագետք են հասել մոտ 600 հազարը, և 1916 թվականը վերապրել մոտ 200 000-ը (որոնց թվում՝ իսլամացած կանայք և երեխաներ, որոնցից շատերը հետագայում ազատագրվել և վերադարձվել են հայ համայնքին):

6. Եթե հիմք ընդունենք նախաեղեռնյան շրջանի արևմտահայ ազգաբնակչության՝ Մ. Օրմանյանի հաղորդած թվաքանակը, ապա 1915-1916 թթ. ընթացքում Հայոց ցեղասպանությանը զոհ է գնացել արևմտահայության 55%-ը, Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի 1912 թ. տվյալների պարագայում՝ 50%-ը:

7. Ի տարբերություն հաշվումների հիմքում դրված արևմտահայության նախաեղեռնյան տվյալների (1.8-2 միլիոն), որոնք գուցե իրական տվյալներից ցածր են և հետևաբար ենթակա են ճշտման, ցեղասպանությունը վերապրած արևմտահայության 800 հազար - 1 միլիոն թիվը երբեք չի վիճարկվել:

8. Հայոց ցեղասպանության զոհերի հնարավորինս ճշգրիտ, իրականին մոտ թիվ ստանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հարցը նահանգ առ նահանգ՝ հայթայթելով և համադրելով տվյալ վարչական միավորի նախաեղեռնյան և հետեղեռնյան շրջանների հայության թվաքանակի վերաբերյալ հնարավորինս շատ վիճակագրական տվյալներ:

9. Առանձին ուսումնասիրության թեմա է Կովկասում ապաստան գտած արևմտահայության շրջանում 1915-1918 թթ. սովի և համաճարակների հետևանքով կորուստների, ինչպես նաև 1919-1922 թթ. քեմալականների գործողությունների հետևանքով հայ ժողովրդի տված զոհերի հաշվումը:

Աղյուսակ 1. Հայոց ցեղասպանության զոհերի թիվը՝ ըստ 1916-1923 թթ. հաշվումների

	Թվական	Աղբյուր	Զոհերի թիվը
1	1915 թ. սեպտեմբերի 29	Ջեսսի Ջեքսոն	1 000 000
2	1915 թ. հոկտեմբերի 6	Ջեյմս Բրայս	800 000
3	1915 թ. հոկտեմբերի 26	Հայր Դունկել	1 000 000
4	1915 թ. նոյեմբերի 8	Հերման Հոֆման	600 000
5	1915 թ. նոյեմբերի 10	Զավեն Տեր-Եղիայան	800 000-1 000 000
6	1915 թ. դեկտեմբերի 2	Կ.Պոլսում ավատրոհունգարական դեսպանություն	1 000 000
7	1915 թ. դեկտեմբերի 20	Վալտեր Ռյուսլեր	800 000
8	1916 թ. մարտի 7	Ֆրիդրիխ Գուստավ Պիֆֆլ	1 000 000
9	1916 թ. մայիս	Հայերի և ասորիների օգնության ամերիկյան կոմիտե	600 000
10	1916 թ. օգոստոս	Մարտին Նիպագե	1 000 000
11	1916 թ. նոյեմբեր	«Կապույտ գիրք»	600 000
12	1916 թ. վերջ	Հերբերտ Ադամս Գիբբոնս	1 000 000
13	1917 թ.	Անդրեյ Մանդելշտամ	1 000 000
14	1918 թ. ամառ	Ջիզֆրիդ Ֆոն Լյուբիխաու (Յոհաննես Էհման)	1 500 000
15	1918 թ. նոյեմբեր	Օսմանյան խորհրդարան	1 000 000
16	1919 թ. գարուն	Օսմանյան կառավարություն	800 000
17	1919 թ.	Գևորգ Մեսրոպ	1 000 000
18	1919 թ.	Յոհաննես Լեփսիուս	1 000 000
19	1919 թ.	Պաուլ Ռոբբախ	1 000 000
20	1919 թ.	Հենրի Մորգենթաու	1 000 000
21	1919 թ.	Քինգ-Քրեյնի հանձնախումբ	1 000 000
22	1919 թ.	Ջեյմս Հարբորդ	800 000
23	1920 թ.	Չիթունի	1 500 000
24	1920 թ.	Մեծ Բրիտանիայի արտգործնախարարություն («Հայաստան և Քուրդիստան» տեղեկագիր)	1 000 000
25	1920 թ. մարտի 11	Ջեյմս Բրայս	1 000 000
26	1921 թ. ապրիլի 1	Կ.Պոլսի հայոց պատրիարքարան – Թեոդիկ	1 000 000
27	1923 թ.	Հայկական միացյալ պատվիրակություն	1 250 000

Աղյուսակ 2. Օսմանյան կայսրության նախաեղեռնյան և հետեղեռնյան հայ բնակչության թիվը՝ ըստ 1916-1923 թթ. հաշվումների

	Թվական	Աղբյուր	Հայերի թիվը Օսմանյան կայսրությունում ցեղասպանության նախօրյակին	Ջոհերի թիվը	Վերապրածների թիվը
1	1916 թ. մայիս	Հայերի և ասորիների օգնության ամերիկյան կոմիտե	1 600 000-2 000 000	600 000	–
2	1916 թ. նոյեմբեր	«Կապույտ գիրք»	1 800 000	600 000	–
3	1917 թ.	Անդրեյ Մանդելշտամ	1 800 000	1 000 000	800 000
4	1919 թ.	Գևորգ Մեսրոպ	2 100 000	1 000 000	1 000 000
5	1919 թ.	Հայկական միացյալ պատվիրակություն	2 026 000	1 000 000	1 000 000
6	1919 թ.	Յոհաննես Լեփսիուս	1 845 450	1 000 000	845 000
7	1919 թ.	Ջեյմս Հարբորդ	1 500 000 ¹¹⁶	800 000	700 000
8	1920 թ.	Չիթունի	2 500 000	1 500 000	1 000 000
9	1920 թ.	Մեծ Բրիտանիայի արտգործնախարարություն («Հայաստան և Քուրդիստան» տեղեկագիր)	1 800 000	1 000 000	800 000
10	1921 թ. ապրիլի 1	Կ.Պոլսի հայոց պատրիարքարան – Թեոդիկ	2 026 700	1 000 000	1 056 000
11	1923 թ.	Հայկական միացյալ պատվիրակություն	2 250 000	1 250 000	1 000 000

116 Միայն ասիական Թուրքիայի հայեր:

**CALCULATIONS OF THE ARMENIAN DEATH TOLL DURING THE MAIN
PHASE OF THE ARMENIAN GENOCIDE (1915–1916): SOURCES, DATA,
AND METHODS, 1915–1923**

Robert Tatoyan

Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Data on the number of victims of the Armenian Genocide began to emerge as early as late 1915 to early 1916, while the extermination campaign against the Armenians was still underway. At the time, estimates of victim numbers served both practical political and humanitarian purposes—raising international awareness of the Ottoman government's crimes by illustrating the scale of the catastrophe, seeking to halt the persecution of Armenians, and organizing relief efforts to support the survivors.

The question of the number of Armenian victims remained a subject of discussion immediately after World War I, particularly in the context of diplomatic negotiations surrounding the Armenian Question. During this period, it gained importance primarily in relation to efforts to establish reparations for the human and material losses suffered by the Armenian people.

According to calculations made between 1915 and 1923, the most widely accepted estimate for the number of Armenians who perished during the main phase of the genocide (1915–1916) is approximately one million. Based on sources containing more detailed estimates—such as those by Arnold Toynbee, Johannes Lepsius, and others derived from them—of this total, around 600,000 died in 1915 as a result of deportations and massacres, and approximately 400,000 perished in 1916 in concentration camps in Syria and Mesopotamia due to starvation, disease, and subsequent actions following the dissolution of the camps.

Key words: Armenian Genocide, number of victims, statistics, Arnold Toynbee, Johannes Lepsius, Armenian Patriarchate of Constantinople.

**ПОДСЧЁТЫ ЧИСЛЕННОСТИ ЖЕРТВ ОСНОВНОГО ЭТАПА
ГЕНОЦИДА АРМЯН (1915–1916 ГГ.): ИСТОЧНИКИ, ДАННЫЕ
И МЕТОДЫ, 1915–1923 ГГ.**

Роберт Татоян

Фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

Данные о численности жертв Геноцида армян начали появляться уже в конце 1915 — начале 1916 года, когда программа уничтожения армян ещё продолжалась. В то

время подсчёт жертв преследовал практические политические и гуманитарные цели — информирование международного сообщества о преступлении османского правительства путём представления масштабов катастрофы, прекращение преследования армян и организация сбора средств для помощи выжившим.

Вопрос о численности жертв продолжал обсуждаться и сразу после Первой мировой войны в ходе дипломатических переговоров, связанных с Армянским вопросом. В то время он имел особое значение в контексте определения компенсации за человеческие и материальные потери армянского народа.

Согласно осуществлённым в 1916-23 годах подсчётам, общепринятое число армян, погибших в 1915-16 гг. составляет около одного миллиона. По данным источников, содержащих более детальные подсчёты (Арнольд Тойнби, Иоганнес Лепсиус и источники, основанные на их данных), из этого миллиона около 600 000 погибло в 1915 году во время депортаций и массовых убийств, а 400 000 — в 1916 году в концентрационных лагерях в Сирии и Месопотамии от голода и эпидемий, а затем в ходе действий, последовавших за ликвидацией лагерей.

Ключевые слова: Геноцид армян, число жертв, статистика, Арнольд Тойнби, Иоганнес Лепсиус, Армянский патриархат Константинополя.

REFERENCES

1915-1965 Յուշամատենան Մեծ Եղեռնի [Memorial Book of the Great Crime, 1915-1965]. Edited by G. Aharonian. Beirut: “Zartong” daily publishing, 1965;

«800,000 հայեր ջարդուած են» [800,000 Armenians Massacred], *Chakatamart*, daily (Constantinople), 15 March 1919;

«Ահաւոր թիւեր» [Horrible numbers]. *Hayastan* (Sofia), 19 August 1915;

«Բաղդատական վիճակագրութիւն հայ բնակչութեան Օսմ. Կայսրութեան մէջ տեղահանութենէ առաջ եւ վերջ (Պատրաստուած 1 Ապրիլ 1921ին» [Comparative Statistics of the Armenian Population in the Ottoman Empire before and after the Deportation (Prepared on April 1, 1921)]. Teodik, Everyone's *Almanac 1922, year XVI*. Constantinople: M. Hovakimian printing, 1921, 261-265;

Գերմանիան և Հայաստանը 1914-1918: Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու: Հատոր I: Հրատարակությունը և ներածությունը՝ Յոհաննես Լեփսիուսի: [Germany and Armenia 1914-1918: A Collection of Diplomatic Documents. Volume I. Published and introduced by Johannes Lepsius]. Translated from German by V. Minalyan. Yerevan: «Grakan hayreniq» («Hayastan»), 2006;

Դատավարություն Թալատ-փաշայի: Մղագրական զեկուցում [Trial of Talaat Pasha: Stenographic Report]. Vienna: Mekhitarist Printing, 1921;

«Թուրքիոյ Հայոց վիճակացոյցը պատրաստուած 1921-ի սկիզբը» [Statistics of Armenians in Turkey, Prepared at the Beginning of 1921]. *Azg* (Boston), 7 April 1921;

«Հայ հրապարակագրութեան անգերազանցելի վարպետը Շաւարշ Միսաքեան հանկարծամահ եղավ Փարիզի մէջ» [The Unparalleled Master of Armenian Journalism, Shavarsh Misakian, Passed Away Suddenly in Paris]. *Azduk* (Beirut), year 30, № 277, 29 January 1959;

Համահաւար ատենագրութիւններ Թուրքիոյ Հայոց Ազգային Երեսփոխանական ժողովի, Համագումար Ազգային ժողովի եւ Համազգային խորհուրդի (1919-1922): Գիրք Ա. Ատենագրութիւններ [Corpus of Minutes of the National Representative Assembly, Interdenominational Representative Assembly, and Mixed Council of the Armenians of Turkey (1919-1922). Book I. Minutes]. Edited and Annotated by Vatche Ghazarian. Jerusalem: Printing by St. James Monastery, 2021;

Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին («Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու) [The Losses of the Armenian People During World War I (“Commission for Investigating the Damages Suffered by the Armenian People During the World War” – Collection of Documents and Materials)]. Compiled, Preface and Notes by A. Zakaryan, Edited by L. Barseghyan. Yerevan: NAS RA Armenian Genocide Museum-Institute, 2005;

Հայկական հարցը խաղաղութեան ժողովին առջեւ [The Armenian Question Before the Peace Conference]. Boston, 1919;

Հայկական հարցը հաշտութեան կոնֆերանսի առաջ [The Armenian Question Before the Peace Conference]. Tiflis: Printing by “Ashkhatavor”, 1919;

“Результаты турецкихъ звѣрствъ” [The Results of Turkish Atrocities], *Armianskiy Vestnik*, February 8, 1916, No. 2;

Abrahamyan, A. G. «Մի քանի վավերագրեր Մեծ եղեռնի արյունոտ օրերից» [Several Documents from the Bloody Days of the Great Crime]. *Etcmiadzin* 37, №4 (1980), 51-56;

Aghazarian, Mihran. *Աքսորականի յուշեր* [Memoirs of an Exilee]. Adana: Printing by “Hay Dzayn”, No. 5, 1919;

Akuni, Sepuh. *Միլիոն մը հայերու ջարդի ամբողջական պատմութիւնը* (1914-1918) [The Complete History of the Massacre of a Million Armenians (1914-1918)]. Constantinople: Published by “Hayastan” Bookstore, 1921;

Antonian, Aram. *Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները եւ Թալէաթ փաշա* [The Great Crime: The Last Armenian Massacres and Talaat Pasha]. Boston: “Pahak” printing, 1921;

Aqsorakan episkopos. «Վտարեալ հայութեան խաչի ճամբան» [The Exiled Armenians' Path of the Cross]. *Koch'nak* 18 (New York), №16, 20 April 1918: 2003-2004;

Arakelyan, Hambardzum. «Թիւրքահայ ժողովրդի վիճակագրութիւնը» [Statistics of the Turkish-Armenian Population]. *Aror, Monthly Journal*, Year IV, December 1913, 41-79;

Avetisyan M. A., Hovhannisyan J. A. «Փաստաթղթեր 1915 թ. ցեղասպանության

վերաբերյալ» [Documents on the 1915 Genocide], *Herald of Social Sciences*, 1995, No. 1, 211-224;

Balakian, Grigoris. *Հայ Գողգոթան: Դրուագներ հայ մարտիրոսագրությունն: Պեղինէն դէպի Զոր 1914-1920: Ա. հատոր* [Armenian Golgotha: Episodes from the Armenian Martyrology. From Berlin to Der Zor, 1914-1920. Volume I.]. Vienna: Mekhitarist printing, 1922;

Chitouni. *Աս ու յիս Հայաստանի* [Conversations about Armenia]. Constantinople: Printing by K. Keshishian & Son, 1920;

Chitouni. *Յուշիկք Հայաստանի* [Memories of Armenia]. Constantinople: Printing by O. Arzuman, 1919

Dadrian, Vahakn. *Հայկական ցեղասպանությունը Խորհրդարանային եւ Պատմագիտական Քննարկումներով* [The Armenian Genocide in Parliamentary and Historical Discussions]. Massachusetts: "Paykar" publishing, 1995;

Gibbons, Herbert Adams. *Ժամանակակից պատմության սևագոյն էջը: 1915ի հայկական դէպքեր* [The Blackest Page of Modern History: Events in Armenia in 1915]. (New York) "Hayk" Printing, 1916;

Gust, Wolfgang. *Հայերի ցեղասպանությունը 1915-1916* [The Armenian Genocide 1915-1916]. Yerevan: "Hayagitak" publishing, 2008;

Kaiser, Hilmar. *Դէր Էզ-Զորի խաչողիներում: Մահ, վերապրում և ընդհատակյա մարդասիրական դիմադրություն Հալեպում 1915-1917 թթ.* [At the Crossroads of Deir ez-Zor: Death, Survival, and Underground Humanitarian Resistance in Aleppo, 1915-1917]. Yerevan, 2015;

Khatissian, Alexander. *Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը* [The Origin and Development of the Republic of Armenia]. Athens: Printing by "New Day", 1930;

Lernian, R. «Մեծ աղէտի օրերուն» [During the Days of the Great Disaster], *Hayrenik* (Boston), Year VI, No. 8 (68), June 1928, 105-114;

Manvelyan, Sergey. «Հայոց ազգային սահմանադրության Եւ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության վերացման երիտօրրքական քաղաքականությունը Առաջին աշխարհամարտի տարիներին» [Young Turks' policy on the abolition of the Armenian National Constitution and the termination of the activities of the Armenian Patriarchate of Constantinople during the World War I], *Etchmiadzin* 76, № 3 (2019), 120-130;

Mesrop, Georg. *Հայաստան: Աշխարհագրական, պատմական, ցեղագրական, վիճակագրական եւ մշակութային տեսակետներով: Իրացուած ազգ. խորհրդակց. ժողովի «Փաստաթուղթերու յանձնախումբ»-էն* [Armenia: From Geographical, Historical, Ethnographic, Statistical, and Cultural Perspectives. Compiled by the 'Documents Committee' of the National Consultative Assembly]. Constantinople: O. Arzuman printing, 1919;

Minasyan, M. «Զավեն Արքեպիսկոպոս Տեր-Եղիայան» [Archbishop Zaven Ter-Yeghiayan], *Etchmiadzin* 4, № 5-6 (1947), 12-14;

Morgenthau, Henry. *Դեսպան Հենրի Մորգենթաուի պատմությունը* [Ambassador Morgenthau's story]. Yerevan, AGMI, 2012.

Soghomonyan, A. J. «Հարբորդի զինվորական առաքելությունը և Հայաստանի մանդատը» [Harbord's military mission and the mandate for Armenia]. Herald of Social Sciences, 1985, № 9: 13-23;

Tatoyan, Robert. «Արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի բնակչության էթնիկական կազմի հարցերը Փարիզի հաշտության կոնֆերանսին (1919-1920 թթ.)» [The Questions of Number of Western Armenians and the Ethnic Composition of Population of Western Armenia at the Paris Peace Conference in 1919-1920], *Ts'eghaspanagitakan handes* 4, № 1 (2016), 44-82;

Tatoyan, Robert. «Արևմտահայության թվաքանակի և Հայոց ցեղասպանության զոհերի թվի հարցերի նկատմամբ թուրքական պատմագրության որոշ նոր մոտեցումների մասին» [Analysis of Some New Approaches in the Turkish Historiography Concerning the Questions of Numbers of Western Armenian Population and the Armenian Genocide Victims], *Ts'eghaspanagitakan handes* 2, №2 (2014), 90-99;

Tatoyan, Robert. «Մեծ եղեռնի ընթացքում արևմտահայութեան կրած մարդկային և նիւթական կորուստները վիճակագրելու Կ.Պոլսի Հայոց Պատրիարքարանի փորձերը 1919–1920 թուականներին (ըստ Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի արխիվի նիւթերի) (Մաս 1)» [Efforts (made in 1919-1920) of the Armenian Patriarchate of Constantinople to gather statistics of human and material losses suffered by the Western Armenians during the Armenian Genocide (according to the archives of the Armenian Patriarchate of Jerusalem) (Part 1)], *Etchmiadzin* 76, №4 (2019), 63-80;

Tatoyan, Robert. «Մեծ եղեռնի ընթացքում արևմտահայութեան կրած մարդկային և նիւթական կորուստները վիճակագրելու Կ.Պոլսի Հայոց Պատրիարքարանի փորձերը 1919–1920 թուականներին (ըստ Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի արխիվի նիւթերի) (Մաս 2)» [Efforts (made in 1919-1920) of the Armenian Patriarchate of Constantinople to gather statistics of human and material losses suffered by the Western Armenians during the Armenian Genocide (according to the archives of the Armenian Patriarchate of Jerusalem) (Part 2)], *Etchmiadzin* 76, № 5 (2019), 53-86;

Tatoyan, Robert. «Մեծ եղեռնի որբերի թվաքանակի վերաբերյալ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1919-1922 թվականներին կազմած վիճակագրությունները» [Statistics on the Number of Armenian Genocide Orphans Compiled by the Armenian Patriarchate of Constantinople in 1919-1922], “The Rescue of Armenians in the Middle East in 1915-1923,” International Conference Proceedings, November 8-9, 2019. Editors: H. T. Marutyan, N. V. Margaryan. Yerevan: Armenian Genocide Museum-Institute Foundation, 2020, 323-348:

Tatoyan, Robert. *Արևմտահայության թվաքանակի հարցը 1878-1914 թվականներին* [The Question of Western Armenian Population Number in 1878-1914]. Yerevan: AGMI, 2015;

Teodik. *Գողգոթա հայ հոգևորականութեան և իր հօտին 1915 աղետալի տարին* [Golgotha of the Armenian Clergy and Its Flock in the Tragic Year of 1915]. New York, 1985;

Teodik. *Ջուլումը և մեր որբերը* [The Oppression and Our Orphans]. Constantinople: K. Keshishian & Son printing, 1921;

Teodik. *Յուշարձան Ապրիլ 11ի* [Memorial of April 11]. Constantinople: Printing by O. Arzuman, 1919;

Zaven archbishop. *Պատրիարքական յուշերս. վավերագրեր եւ վկայություններ* [My Patriarchal Memories: Documents and Testimonies]. Cairo: Nor Astgh printing, 1947.

Հեղինակի մասին

About the Author

Об авторе

Ռոբերտ Թատոյան, պատմական գիտությունների թեկնածու, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական ուսումնասիրությունների բաժնի ավագ գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության վիճակագրություն և ժողովրդագրություն, Հայոց ցեղասպանության զոհերի և վերապրածների թիվ, արևմտահայ հասարակական, կրթական, մշակութային և կրոնական կյանք:

Էլ. փոստի հասցե՝ r.tatoyan@genocide-museum.am

Robert Tatoyan, PhD in History, Senior Researcher at the Department of the Armenian Genocide Source Studies, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields: statistics and demography of the Western Armenian population on the eve of the Armenian Genocide; the number of victims and survivors of the Armenian Genocide; and the public, educational, cultural, and religious life of Western Armenians.

E-mail: r.tatoyan@genocide-museum.am

Роберт Татоян, кандидат исторических наук, старший научный сотрудник Отдела источниковедческих исследований Геноцида армян Фонда “Музей-институт Геноцида армян.”

Область исследований: статистика и демография западноармянского населения накануне Геноцида армян; численность жертв и выживших Геноцида армян; социальная, образовательная, культурная и религиозная жизнь западных армян.

Эл. почта: r.tatoyan@genocide-museum.am

«ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ» ԵԶՐՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾԱԾՈՒՄԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Ինեսա Ստեփանյան

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել «դիմադրություն» եզրույթի ձևավորումը և գործածումը գիտական շրջանակներում՝ մասնավորեցնելով հասկացության կիրառումը ցեղասպանությունների՝ Հայոց ցեղասպանության, Հրեից հոլոքոստի և Ռուսադայի ցեղասպանության համատեքստում:

Նախքան ցեղասպանությունների մասին ուսումնասիրություններում հասկացության բնորոշումներին անդրադառնալը հոդվածում սահմանվում է, թե ինչ է դիմադրությունը¹, և պարզաբանվում են եզրույթին առնչվող որոշ հարցադրումներ: Հաջորդիվ հոդվածում ներկայացվում են «դիմադրություն» հասկացության զարգացումը, դրսևորման ձևերը, ինչպես նաև կիրառումը ցեղասպանությունների համատեքստում:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Հրեից հոլոքոստ, Ռուսադայի ցեղասպանություն, թույլի, հույժ, դիմադրություն, պայքար, ինքնապաշտպանություն:

Հոդվածը ներկայացվել է՝ 20.03.2025: Ընդունվել է տպագրության 30.04.2025:

The article was submitted on 20.03.2025 and accepted for publication on 30.04.2025.

Статья поступила 20.03.2025 и была принята к публикации 30.04.2025.

Ինչպես հղել՝ Ինեսա Գ. Ստեփանյան, ««Դիմադրություն» եզրույթի ձևավորումը և գործածումը ցեղասպանությունների համատեքստում», *Ցեղասպանագիտական հանդես* 13, no. 1 (2025), 46-63:

How to cite: Inesa Stepanyan, “Formulation and Use of The Concept of “Resistance” in the Context of Genocides,” *Ts’eghaspanagitakan handes* 13, no. 1 (2025): 46-63.

Как сослаться: Инеса Степанян, “Формулировка и использование концепции «сопротивления» в контексте Геноцидов,” *Цехаспанагитакан андес* 13, no. 1 (2025): 46-63.

1 Անգլերեն *resistance* թարգմանաբար նշանակում է «ընդդիմություն, արգելք, դիմակայում» (տե՛ս Մետրոպ Կ. Գույումճեան, *Ընդարձակ Բառարան Անգլիերէնէ Հայերէն* (Պէրթոթ, 1981), 1093): Ռուսերեն *сопротивление* թարգմանաբար նշանակում է «դիմադրություն, դիմադարձություն» (տե՛ս Արարատ Ղարիբյան, *Ռուս-հայերէն բառարան* (Երևան, «Հայաստան» հրատ., 1977), 1151): Ֆրանսերեն *résistance* թարգմանաբար նշանակում է «դիմադրություն, դիմադարձություն» (տե՛ս Եղիա Տէմիրճիպաշեան, *Բառարան ֆրանսերէնէ-հայերէն* (Կոստանդնուպոլիս, Տպագրութիւն Յ. Մ. Սէթեան, 1930), 978): Ըստ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի»՝ «դիմադրություն» բառն ունի «հարձակմանը, գրոհին դիմադրել, դեմ կանգնել» նշանակությունը (տե՛ս *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր առաջին* (Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1969), 508), ըստ «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանի»՝ «դիմագրավություն, հակառակություն, դիմադարձություն» (տե՛ս Աշոտ Սուքիասյան, *Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան* (Երևան, Երևանի պետական համալսարան, 2009), 245):

«Դիմադրություն» հասկացության ձևավորման պատմությունից

«Դիմադրություն» եզրույթին եղել են շատ և բազմազան անդրադարձներ, ըստ այդմ՝ հասկացությունը գիտական տարբեր ոլորտներում ունի բազմաբնույթ կիրառություններ: Եզրույթի թերևս առաջին և ամենատարածված մեկնաբանություններից մեկը քաղաքական որակումն է՝ «ընդդիմություն» իմաստով: Ամերիկացի պրոֆեսոր Շերի Բ. Օրթները դիմադրությունը դիտարկում է իշխանություն-ընդդիմություն ձևաչափով: Նա մասնավորապես նշում է, որ «գերիշխանությունն իշխանության ավելի արմատավորված և համակարգված ձևն է, իսկ դիմադրությունը՝ գերիշխանության դեմ ուղղված կազմակերպված ընդդիմություն»²: Ըստ էության, մեր պատկերացումներում ևս դիմադրությունն առաջին հերթին ասոցացվում է իշխանական կամ քաղաքական ուժերի դեմ ըմբոստությունների հետ, այդ թվում՝ և խաղաղ պայմաններում, և հակամարտությունների ժամանակ: Սակայն կախված այն բանից, թե ով է դիմադրողը, ինչ պայմաններում և ինչի դեմ է պայքարում, հասկացությունը ստանում է տարբեր գնահատականներ:

Գիտնականները «դիմադրություն» եզրույթը գործածել են հասարակական կյանքի բոլոր մակարդակներում՝ *անհատական, հավաքական և ինստիտուցիոնալ*³, որոնք թեև հանդես են գալիս առանձին դրսևորումներով, սակայն փոխկապակցված են: Այսպես, ամերիկացի քաղաքագետ Ջեյմս Սքոթի համոզմամբ, հավաքական դիմադրություններն առաջ են գալիս անհատական դիմադրությունների հետևանքով: Նա վստահեցնում է, որ անհատական դիմադրությունը դրսևորվում է ամենօրյա պայքարի միջոցով, ինչն էլ իր հերթին հանգեցնում է ավելի լայնածավալ գործողության: Այսպիսով՝ Սքոթն առաջ է քաշում միաժամանակ երկու հասկացություն՝ անհատից բխող *հավաքական* և բազմաթիվ անհատների կողմից իրականացվող փոքրամասշտաբ դիմադրական գործողություններից ծագող կազմակերպված դիմադրություններ⁴:

Մարդկային ռեսուրսների և հաղորդակցության մասնագետ, կանանց վերաբերյալ մի շարք հետազոտությունների հեղինակ Նինա Գրեգը դիմադրությունը մեկնաբանում է հետևյալ կերպ՝ «գործել անկախ՝ սեփական շահերից ելնելով»⁵, իսկ մեկ այլ հետազոտող՝ սոցիոլոգ Նորմա Փրոֆիթը, տալիս է ավելի ընդարձակ բացատրություն, այն է՝ «ակտիվ ջանքեր գործադրել դեմ լինելու, պայքարելու և համագործակցելուց կամ ենթարկվելուց հրաժարվելու համար, դեմ լինել բռնի վարքագծին և վերահսկողությանը»⁶:

2 Sherry B. Ortner, "Resistance and the Problem of Ethnographic Refusal," *Comparative Studies in Society and History* 37, no. 1 (1995): 174.

3 St'ua Jocelyn A. Hollander and Rachel L. Einwohner, "Conceptualizing Resistance," *Sociological Forum*, vol. 19, no. 4 (December 2004): 533-554:

4 St'ua James C. Scott, "Everyday Forms 'of Resistance,'" *The Copenhagen Journal of Asian Studies*, vol. 4 (1989): 33-62:

5 Nina Gregg, "Trying to Put First Things First: Negotiating Subjectivities in a Workplace Organizing Campaign," in *Negotiating at the Margins: The Gendered Discourses of Power and Resistance*, ed. Sue Fisher and Kathy Davis (New Brunswick, N.J.: Rutgers University Press, 1993), 172.

6 Norma J. Proffitt, "'Battered Women' as 'Victims' and 'Survivors' Creating Space for Resistance," *Canadian*

Թեև տարբեր ուսումնասիրություններում հանդիպում ենք մի շարք ձևակերպումների, այդուհանդերձ «դիմադրություն»-ը չունի հստակ սահմանում, ինչն էլ հնարավորություն է տալիս տարբեր ոլորտներում ուսումնասիրությունների շնորհիվ վեր հանելու դիմադրության նոր ձևեր և ձևակերպումներ: Հարկ է նշել, որ չնայած տարբեր գիտակարգերում դիմադրության սահմանումները խիստ տարբեր են և բացառապես կախված են իրավիճակից, այնուամենայնիվ հասկացության իմաստային հիմքը նույնն է՝ «ինչ-որ բանի դեմ դուրս գալ» կամ «դեմ կանգնել»:

Եզրույթի առաջացման և զարգացման ընթացքը ցեղասպանությունների համատեքստում

Մեր հետազոտության առանցքում ցեղասպանությունների ընթացքում կազմակերպված դիմադրություններն են: Ինչպես և այլ գիտակարգերում, ցեղասպանությունների համատեքստում ևս հասկացությունն ունի բազմաշերտ ու խորիմաստ դրսևորումներ: Այն կարող է արտահայտվել ինչպես ֆիզիկական պայքարի, այնպես էլ հոգևոր, մշակութային, բարոյական կամ այլ, ոչ ավանդական ձևերով, իրականացվում է անհատների կամ խմբերի կողմից՝ ցեղասպանական քաղաքականության իրագործումը խոչընդոտելու կամ դրանից փրկվելու համար: Այս համատեքստից կարող ենք եզրահանգել, որ *դիմադրությունը գործողությունների ամբողջություն է՝ սկսած անհնազանդությունից մինչև ընդհանրական պայքար, որոնք ուղղված են ճնշման, ոչնչացման կամ իրավիճակային հանգամանքների դեմ*:

Հայոց ցեղասպանության ընթացքում դիմադրության դեպքերը բազմազան են, սակայն մեզ հայտնի ուսումնասիրություններում դրանք հիմնականում բնութագրվում են «ինքնապաշտպանություն» կամ «հերոսամարտ» բառերով: Մինչ այժմ իրականացված հետազոտությունների առանցքային դրվագները մեծ մասամբ կապված են կոտորածների, տեղահանությունների, բռնի թրջացման և հալածանքների այլ դրսևորումների հետ, որոնք անխուսափելիորեն ձևավորել են զոհի ընդհանրական կերպարը: Առհասարակ «զոհ» և «ցեղասպանություն» հասկացությունները փոխկապակցված են: Ինչպես իրավացիորեն նշում է ակադեմիկոս Նիկոլայ Հովհաննիսյանը, «Զոհը ցեղասպանության պահին չէ, որ դառնում է զոհ, և ոչ էլ ոճրագործն է ոճրագործ դառնում ցեղասպանության իրագործման ժամանակ»⁷: Կարևոր է ընդգծել, որ ինչպես զոհի կերպարի ձևավորումը, այնպես էլ հետագայում այդ հոգեվիճակի հաղթահարումը երկարատև գործընթաց է և որոշակի գործողությունների արդյունք: Մեր համոզմամբ՝ դրա հաղթահարման առանցքային տարբերակներից մեկն էլ պայքարի՝ դիմադրության մասին խոսելն է:

Հատկապես հետցեղասպանական շրջանում «զոհ» հասկացությունը մի կողմից

Social Work Review 13, no. 1 (Winter/hiver 1996): 25.

7 Նիկոլայ Հովհաննիսյան, *Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում* (Երևան, «Ջանգակ-97», 2002), 18:

խղճահարություն է առաջացնում հասարակության մեջ, մյուս կողմից էլ «մեղադրական» մթնոլորտ է ձևավորում ցեղասպանության գոհերի շուրջը: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ ցեղասպանական քաղաքականության նախապատրաստական քայլերից մեկը ամբողջատիրական համակարգի ստեղծումն է և թիրախային խմբին պաշտպանության հնարավոր միջոցներից զրկելը, ինչը նպաստում է գոհ խմբի շրջանում դիմադրության ձևավորմանը: Այս առումով տեղին է մեջբերել պատմաբան Իսաչիկ Մուրադյանի այն ձևակերպումը, ըստ որի՝ դիմադրությունն իշխանությունների գործողություններին տրված համարժեք պատասխանն էր՝ տեղահանված հայերին ոչնչացումից փրկելու համար⁸: Կարելի է ենթադրել, որ դիմադրության ցանկացած արտահայտություն բխում է ստեղծված իրավիճակից կամ վերաբերմունքից, երբ թիրախավորված խումբը դիմակայելու կամ պաշտպանվելու միջոցներ է գտնում: Անհատի իրականացրած ցանկացած գործողություն, որն ուղղված է ինքնապաշտպանությանը կամ կյանքի իրավունքի պահպանմանը, այդ թվում և՛ զենքի կիրառումը, ամրագրված է «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով»⁹, ինչպես նաև ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիան լրացնող «Հրազենի, դրա հիմնամասերի և բաղադրիչների, ինչպես նաև դրա համար նախատեսված ռազմամթերքի անօրինական արտադրության և շրջանառության դեմ» արձանագրությամբ¹⁰: Այս փաստաթղթերը գալիս են ևս մեկ անգամ հաստատելու մարդու ինքնապաշտպանության կամ դիմադրության իրավունքը և արդարացի պահանջը:

Հայոց ցեղասպանության ընթացքում կազմակերպված ինքնապաշտպանական, դիմադրական մարտերի պատմությունը¹¹ փաստում է, որ հայ ժողովուրդը գոյապայքար

8 St' u Khatchig Mouradian, *The Resistance Network. The Armenian Genocide and Humanitarianism in Ottoman Syria, 1915-1918* (Michigan State University Press, 2021), Introduction XX.

9 Ըստ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին հռչակագրի» 8-րդ հոդվածի՝ «Յուրաքանչյուր որ ունի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք»: Հռչակագիրը ճանաչում է նաև, որ երբ կառավարությունը ոչնչացնում է մարդու իրավունքները, և մյուս բոլոր միջոցները ձախողվում են, ժողովուրդը «ստիպված է դիմելու, որպես վերջին միջոց, ապստամբության ընդդեմ բռնակալության և ճշումների»: Հետևաբար ժողովուրդն անպայմանորեն իրավունք ունի զենք ունենալու և օգտագործելու այն բռնակալությանը դիմակայելու համար, եթե զենքի օգտագործումը մնացած միակ «արդյունավետ միջոցն է»:

10 Արձանագրությունը ճանաչում է «անհատական կամ կոլեկտիվ ինքնապաշտպանության բնածին իրավունքը» և «բոլոր ժողովուրդների ինքնորոշման իրավունքը», <https://www.arlis.am/ru/acts/80565>, https://treaties.un.org/doc/source/recenttexts/18-12_c_e.pdf (դիտվել է՝ 12.08.25):

11 Հայերի ինքնապաշտպանական մարտերին և հերոսամարտերին անդրադարձել են տարբեր ժամանակների մի շարք հետազոտողներ. տե՛ս, օրինակ, Երվանդ Դերվիշյան, *Ուրֆայի ինքնապաշտպանությունը կամ դյուցազնաշունչ հայության վկայություն* (Բեյրութ, 1978), Տիգրան Դևրիկյան, *Արևմտահայության ինքնապաշտպանությունը 1915-1923 թթ.* (Երևան, 2005), Ռաֆայել Թադևոսյան, *Դրվագներ հայոց ռազմական պատմությունից. XIX-XX դարեր* (Երևան, 2012), Սուկրատ Թեղեան, *Հաճնի ութամսեայ դիւցազնամարտը* (Պուենտա Այրէս, 1956), Հայկակ Կոստյան, *Վան բերդաբաշտի ժողովրդային հերոսամարտը* (Թեհրան, 1966), Արամ Հայկազ, *Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը* (Նյու Յորք, 1957), Օնիկ Մխիթարյան, *Վանի հերոսամարտը* (Սոֆիա, 1930), Արամ Սահակեան, *Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները* (Անթիլիաս, 2014), Ռուբեն Սահակյան, *Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կոիվները 1915 թվականին* (Երևան, 2005), Հարություն Մարության, «Ինքնապաշտպանության ֆենոմենը Հայոց ցեղասպանության

է մղել՝ ամենատարբեր եղանակներով պաշտպանելով հայրենի հողն ու սեփական պատիվը: Բացառիկ խիզախություն դրսևորեցին Մուսա լեռան լանջին գտնվող հայկական գյուղերի բնակիչները, որոնք 1915 թ. հուլիսի 13-ին տների պատերին փակցված՝ Միջագետքի անապատներ ուղևորվելու մասին հայտարարություններին ի պատասխան ներկայացրին իրենց դիրքորոշումը. «Ես այստեղ եմ ծնվել, այստեղ էլ կմեռնեմ: Ես թշնամու հրամանով ստրուկ չեմ դառնա: Ձեռքիս գենը ունենալով, փախստական չեմ դառնա»¹²: Մուսա լեռան ինքնապաշտպանությունը ոչ միայն հայության դիմադրության բարձր դրսևորումն էր, այլև, ըստ հրեա պատմաբան Յաիր Աուրոնի, ինքնապաշտպանության փայլուն օրինակ հրեա ընդհատակյա ակտիվիստների համար, որով ոգեշնչված երիտասարդները Հոլոքոստի ժամանակ կարողացան հիմք դնել գետտոների դիմադրական պայքարին¹³: Աուրոնի բնորոշմամբ՝ «Մուսա լեռը դարձավ խորհրդանիշ, մոդել և օրինակ, հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմի մութ օրերին»¹⁴:

Հարկ է նշել, որ չնայած այն փաստին, որ դիմադրություններ եղել են Հրեից հոլոքոստից առաջ՝ Հայոց ցեղասպանության ընթացքում, «դիմադրություն» եզրույթը գիտական շրջանառության մեջ է մտել հենց Հոլոքոստի պատմագրության համատեքստում՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո: Դրա կիրառումն անմիջականորեն կապվում էր նացիզմի դեմ հրեական կամ ոչ հրեական պայքարի հետ: Այլ մեկնաբանությամբ՝ դիմադրությունը կազմակերպվում էր երկու հիմնական ուղղությունների՝ հրեականության և ընդդիմության կողմից: Հակա-նացիստական ընդդիմության տեսանկյունից «դիմադրություն» եզրույթը կիրառելի էր ցանկացած մեկի վերաբերմամբ, ով Ադոլֆ Հիտլերին տապալելու նպատակ ուներ¹⁵: Ինչպես նշում էր պատմաբան Թեոդոր Համերոուն, «Վերականգնված և ժողովրդավարացված (Արևմտյան) Գերմանիային անհրաժեշտ էին հերոսներ, նախ-ընտրելի է՝ պահպանողականներ»¹⁶: Եթե ընդդիմության պայքարը նացիստական վարչակազմի դեմ հետապնդում էր իշխանափոխության նպատակ, ապա հրեականությունը դիմադրում էր ֆիզիկական բնաջնջման, ինքնության կորստի դեմ:

Հետհոլոքոստյան շրջանում գիտական հարթակում սկսեցին արծարծվել մի շարք

տարիներին և հիշատակի օրվա վերաբանաձևման խնդիրը», *Ցեղասպանագիտական հանդես* 3, no. 1-2 (2015), 76-80, Էդիկ Մինասյան, *Հայ հերոսուհի կանայք* (Երևան, 2016), Աշոտ Հայրունի, *Ցեղասպանությունների պատմություն* (Երևան, 2025) և այլն:

12 Ֆրանց Վերֆել, *Մուսա լեռան քառասուն օրը* (Երևան, «Լույս», 1987), 903:

13 Տե՛ս Յաիր Աուրոն, *Արևմտյանի անտարբերություն. Միոնիզմը և Հայոց ցեղասպանությունը* (Երևան, Զանգակ հրատարակչություն, 2013), 412:

14 Նույն տեղում:

15 Արևմտյան Գերմանիայի և ԱՄՆ-ի ուսումնասիրությունների մեծ մասը կենտրոնացած էր գերազանցապես Կլաուս ֆոն Շտաուֆենբերգի և նրա դավադիրների վրա, որոնք 1944 թ. հուլիսի 20-ին փորձել էին սպանել Հիտլերին (տե՛ս Konrad Kwiet, *Problems of Jewish Resistance Historiography* (Leo Baeck Institute Yearbook 24, 1979), 41; John M. Cox, "Jewish Resistance Against Nazism," in *The Routledge History of the Holocaust*, ed. Jonathan C. Friedman (Routledge, 2010), 3):

16 Theodore S. Hamerow, *On the Road to the Wolf's Lair: German Resistance to Hitler* (Cambridge: Belknap Press of Harvard University Press, 1997), 6.

հարցադրումներ, այդ թվում՝ արդյոք Հոլոքոստը միայն հրեաների՝ ոչնչացման մասին է, եղև են արդյոք պայքարի դեպքեր, թե՛ հրեաները «մորթվել են ոչխարների պես»։ Վերջին հասկացությունն առավել քան խոցելի էր, և հիմնական քննարկումները ծավալվեցին հենց այդ արտահայտության շուրջ։ Ունենալով աստվածաշնչյան հիմք՝ «ոչխարների պես մորթվել» հասկացությունն ուղղակիորեն ընկալվում էր զոհաբերության, զոհողության իմաստով, իսկ Հոլոքոստից հետո դրա կիրառումն ըմբոստության ալիք բարձրացրեց հենց արտահայտության իմաստի դեմ։ 1942 թ. Վիլնյուսի գետտոյի «Պարտիզանական միացյալ կազմակերպության» գլխավորներից Աբբա Կովները դատապարտող կոչ հնչեցրեց. «Մենք ոչխարների պես մորթվելու չենք տարվի։ Ճիշտ է, մենք թույլ ենք և անօգնական, բայց սպանություններին միակ պատասխանը ապստամբությունն է։ Եղբայրներ, ավելի լավ է կռվելով մեռնել, ինչպես ազատ մարդ, քան ապրել մարդասպանների ողորմածությամբ»¹⁷։ Այս փոխաբերության շուրջ ծավալված քննարկումներին անդրադարձել է Հոլոքոստի պատմագիր Յեհուդա Բաուերը, ով վստահեցնում էր, որ այդպիսի արտահայտությունները տարբեր կերպ են ընկալվում հանրության կողմից և կարող են ծայրահեղ զգացումներ առաջացնել։ Բաուերի պնդմամբ՝ Կովներն իր կոչով փորձել է դիմադրություն հրահրել հենց այդ արտահայտության դեմ¹⁸։

Ինչ վերաբերում է Ռուանդայում թուրքիների նկատմամբ իրագործված ցեղասպանությանը, ապա պետք է նշել, որ տարիներ շարունակ իշխող միապետական կառավարման պայմաններում քննադատությունը և դրանից բխող դիմադրությունը հասարակության շրջանում մշտապես առկա էին։ Ըստ այդմ՝ գիտական շրջանակներում պարբերաբար արծարծվում էր այն հարցը, թե որքանով էր ժողովուրդը գտնվում կառավարող իշխանությունների վերահսկողության տակ, ինչ վերաբերմունք ուներ նրանց կառավարման նկատմամբ կամ ինչ մեթոդներով էր դիմադրում պարտադրված իշխանությանը ինչպես գաղութացման ժամանակներում, այնպես և հետգաղութային շրջանում։ Մինչև 1994 թ. թուրքիների ցեղասպանությանը դիմադրության մասին պատկերացումներն այլ էին, իսկ իրականացվող ուսումնասիրություններն ուղղված էին ենթակա-իշխանություն կամ գյուղացի-կառավարություն փոխհարաբերություններին։ Դրանցում հիմնականում տեսնում ենք հասարակ մարդկանց, գյուղացիների ըմբոստությունը՝ միտված իրենց շահերը պաշտպանելուն, որը բնութագրվում էր «ժողովրդական դիմադրություն» արտահայտությամբ¹⁹։ Արդեն ցեղասպանության ընթացքում և դրանից հետո «դիմադրություն» եզրույթը ստանում է այլ բնորոշում և ձևակերպումներ։

Թուրքիների մղած դիմադրության փորձերին իր հետազոտություններից մեկում անդրադարձել է պատմաբան Աշոտ Հայրունին։ Նա առանձնացնում է ինքնա-

17 Richard M. Kaplan, "The Myth of Jewish Passivity," in *Jewish Resistance against the Nazis*, ed. Patrick Henry (Washington: The Catholic University of America Press, 2014), 6.

18 Տե՛ս նույն տեղում, 7:

19 Տե՛ս Will Rollason, "Buying a Path: Rethinking Resistance in Rwanda," *Journal of Eastern African Studies* 11, no. 1 (2017): 46-63:

պաշտպանության երկու հիմնական մոտեցում: Առաջինը միաձուլումն է, որի դեպքում թուփսները խառնվում էին հույություններին, և ամբոխի մեջ դժվարանում էր յուրայիններին զոհից տարբերակելը, ինչի հետևանքով հույությունները խուսափում էին գենք կիրառելուց: Մյուս պարագայում հարձակման ժամանակ թուփսները բաժանվում էին մի քանի խմբի և արագ փախչում տարբեր ուղղություններով²⁰: Այդպիսի օրինակ է Քիբույեի մոտ գտնվող Բիսեներո վայրում թուփսների ինքնապաշտպանությունը: Պատսպարվելով անտառածածկ, քարքարոտ լեռնաշղթայի վրա՝ թուփսները հաջողեցին քարեր նետելով պաշտպանվել հարձակվողներից²¹:

Ռուանդայում իրագործված ցեղասպանությունն ուսումնասիրելիս հանդիպում ենք դիմադրության ոչ ստանդարտ իրավիճակների: Դիմադրության դեպքերի մեծ մասն իրականացվել է ոչ թե անձամբ զոհի կողմից, այլ զոհի համար, մասնավորապես փրկարարական միջամտություններով: Փրկողների գործողությունները պետք է դիտարկել ավելի լայն սոցիալական, քաղաքական և աշխարհագրական համատեքստերում՝ հասկանալու համար դիմադրությանը հանգեցրած մոտիվացիոն գործոնները և այն հանգամանքները, որոնք հնարավորություն են տվել իրականացնելու այդ դիմադրությունը: Այս առումով բրիտանացի սոցիոլոգ Մարտին Շոուն կարծում է, որ, բացի զոհի առջև ծառացած տարբեր սպառնալիքներից, դիմադրության հարցում դեր են խաղում նաև հենց զոհերին կամ ցեղասպանության այլ մասնակիցների բնորոշ բարոյական և ֆիզիկական գործոններ²²: Մասնավորապես, դիմադրության քաղաքական և սոցիալական համատեքստերը մեծ նշանակություն ունեն: Ռուանդայում հույու քաղաքապետերը կամ համայնքի ղեկավարները համարվում էին բարձրաստիճան պաշտոնյաներ, հետևաբար իրենց իշխանության և ազդեցության շնորհիվ ունեին դիմադրություն իրականացնելու հնարավորություն: Դրա վառ օրինակը Ռուանդայի երեք համայնքներում՝ Ջիթիում, Մուսամբիրայում և Թաբայում մղած պայքարն էր²³: Այս համայնքների առաջնորդները մարտահրավեր նետեցին «Ինտերահամվե»²⁴ անունով հայտնի հույու ծայրահեղական աշխարհագորին, քայլեր ձեռնարկեցին «բռնության սկզբնավորումը կանխելու և թուփսի բնակչությանը պաշտպանելու համար՝ ձերբակալելով հանցագործներին, ցրելով ակտիվիստների

20 Տե՛ս Հայրունի, *Ցեղասպանությունների պատմություն*, 341-342:

21 Տե՛ս նույն տեղում:

22 Տե՛ս Martin Shaw, *War and Genocide: Organised Killing in Modern Society* (Cambridge: Polity Press, 2003), 195:

23 Տե՛ս Ruby Maguire, “Resisting Genocide: What Factors Facilitate Acts of Resistance During Genocide? Can These Insights be Generalised?” *University of Leeds Human Rights Journal. A Multidisciplinary Undergraduate Journal* 2, no. 1 (Summer 2014): 54-62:

24 «Ինտերահամվե» բառը թարգմանաբար նշանակում է «նրանք, ովքեր պայքարում են միասին, նրանք, ովքեր աշխատում են միասին»: Այն հույուների ռազմական կազմակերպությունն էր, Ռուանդայի իշխող կուսակցության երիտասարդական թևը, որի գործառնություններից էին թուփսների ցուցակների կազմումը, դրա տարածումը և ոչնչացումների իրականացումը: Կառույցի մասին ավելին տե՛ս Աստղիկ Ստեփանյան, «Հայոց ցեղասպանության և Ռուանդայում տեղի ունեցած ցեղասպանության փուլերի, իրագործման մեխանիզմների ու մեթոդների համեմատական վերլուծություն», *Պատմություն և մշակույթ* (2018), 187:

խմբերը և հետ մղելով հարևան շրջաններից եկող հարձակումները»²⁵։ Զիթին միակ համայնքն էր, որը գտնվում էր կառավարության վերահսկողության տակ, որտեղ, սակայն, ցեղասպանական բռնություններ տեղի չունեցան։ Համայնքի ղեկավար Էդուարդ Սերուշումբան կարողացավ մոբիլիզացնել իր ժողովրդին թուրքիների պաշտպանելու համար՝ հետ մղելով հարևան համայնքների հարձակվողներին, մինչև տարածքը վերջնականապես ազատագրվեց Ռուանդայի հայրենասիրական բանակի (ՌՀԲ) կողմից²⁶։ Մուսամբիրայի համայնքապետը ևս օգտագործեց իր իշխանությունը՝ առանձին դիմադրություն ղեկավարելու համար։ Նա տեղակայեց ոստիկանական ուժեր՝ ներխուժումները կանխելու, համայնքը համախմբելու և ցեղասպանական բռնության բռնկումներին դիմակայելու համար²⁷։

Ռուանդայում տեղի ունեցած ցեղասպանության ընթացքում դիմադրությանը նպաստող մեկ այլ գործոն էր նախկին անձնական կապերի առկայությունը։ Եղել են դիմադրության անհատական դեպքեր, որոնք տեղի են ունեցել առանց հզոր կամ ազդեցիկ առաջնորդի օգնության։ Ամերիկացի պրոֆեսոր Լի Էնն Ֆուջին կատարել է ծավալուն հետազոտություն Ռուանդայի բանտերում և երկու գյուղական համայնքում՝ անցկացնելով մի շարք հարցազրույցներ։ Աշխատանքի արդյունք «Հարևանների սպանություն. բռնության ցանցերը Ռուանդայում» գրքում Ֆուջին բացահայտում է հույժո հարևանների մասնակցության դրդապատճառները թուրքի բնակչության և սպանություններին, և՛ փրկությանը։ Նրա անանուն հարցվողներից մեկը պնդում է, որ «իրեն հանցագործները խնայել են իրենց երկարատև բարեկամության շնորհիվ»²⁸։ Մեկ այլ փրկված կին՝ Մարի Լուիզ Կագոյիրեն, պատմել է, որ հարևանը հրաժարվել է սպանել իրեն՝ ասելով, որ «չի պատրաստվում սպանելու իր կնոջ ընկերոջը»²⁹։

Թուրքիների ցեղասպանությանն առնչվող ուսումնասիրություններում հաճախ ենք հանդիպում «ամենօրյա դիմադրություն» արտահայտությանը, որն առավելապես բնութագրական է հետցեղասպանական Ռուանդային։ Հասկացությունն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել ամերիկացի քաղաքագետ Ջ. Սքոթը 1985 թվականին հրատարակված «Թուրքի գեները. դիմադրության ամենօրյա ձևերը» գրքով։ Այս հասկացությունը ներառում է դիմադրության մի շարք այլ տեսակներ։ Ի տարբերություն ապստամբությունների, ընդվզումների, ցույցերի և դիմադրության կազմակերպված այլ դրսևորումների՝ ամենօրյա դիմադրությունը լուռ, քողարկված և երբեմն անտեսանելի է։

25 Jean Hatzfeld, *Into the Quick of Life: The Rwandan Genocide: The Survivors Speak* (London: Serpent's Tail, 2008), 174.

26 Ռուանդայի հայրենասիրական ճակատը (ՌՀՃ) հիմնադրվել է 1994 թվականին Ռուանդայի իշխող քաղաքական կուսակցության ղեկավար՝ 2000-ականներից Ռուանդայի նախագահ Փոլ Կագամեի կողմից, որպես քաղաքական և ռազմական շարժում, որը նպատակ ուներ ստանձնելու աքսորյալ ռուանդացիների հայրենադարձումը և Ռուանդայի կառավարության վերահսկողությունը։

27 Maguire, "Resisting Genocide," 57.

28 Lee A. Fujii, *Killing Neighbours: Webs of Violence in Rwanda* (Ithaca: Cornell University Press, 2009), 151.

29 Maguire, "Resisting Genocide," 57.

Ի տարբերություն Հայոց ցեղասպանության և Հրեից հոլոքոստի՝ Ռուանդայի թուփսների ցեղասպանության ընթացքում պայքարի մասին խոսելիս անխուսափելիորեն կապ է ստեղծվում բուն ցեղասպանության ժամանակ և դրանից հետո գրանցված դիմադրությունների միջև: Այս տեսակետը բացատրվում է նրանով, որ թուփսի և հուֆու ժողովուրդները շարունակում են ապրել միասին և պայքարել անցյալից եկած խնդիրների դեմ: Կանադացի քաղաքագետ Սյուզան Թոմսոնը, երկար տա-րիներ ապրելով Ռուանդայում, նշանակալի հետազոտություններ է իրականացրել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, որոնցում անդրադառնում է հետցեղասպանական Ռուանդայում թուփսի և հուֆու բնակչության հաշտեցման քաղաքականությանը և դրա հետևանքներին: Թոմսոնի աշխատանքում կարմիր թելի նման անցնում է ամենօրյա դիմադրության հայեցակարգը: Ռուանդացի նախկին հուֆու Ջոլիի (թուփսի տղամարդու հետ ամուսնությունից հետո Ջոլին ինքն էլ համարվում էր թուփսի) պատմությամբ հետազոտողը ցույց է տալիս, որ պայքարը չի ավարտվել: Ցեղասպանության ժամանակ Ջոլիի ամուսինը խառնվել է հուֆու դահիճների խմբին և սպանել երեք թուփսի տղամարդու: Այդպիսով նրան հաջողվել է ցեղասպանությունից փրկել իր ընտանիքին, սակայն նրանց դիմադրությունը մինչ օրս շարունակվում է: Ջոլին պատմում է, որ չնայած ցեղասպանության ժամանակ իր ընտանիքի բոլոր անդամները ողջ են մնացել, սակայն ամուսնու իրականացրած սպանությունից հետո իրենք կորցրել են ամեն ինչ. «Արդյոք ես վերապրեցի՞ ցեղասպանությունը: Արդյոք ես չկորցրի՞ հարազատներին: Միթե իմ ամուսինը կիսով չափ խեղագարված չէ իր արածի պատճառով: Ես վերապրեցի իրադարձությունները և նույնիսկ կարող եմ ասել, որ իմ ամուսինը հիմա կորած է ինձ համար»³⁰: Ցեղասպանության ժամանակ Ջոլիի ընտանիքը դիմադրում էր փրկվելու համար, իսկ այսօր դիմադրում է ապացուցելու համար, որ չնայած ողջ է մնացել, այնուամենայնիվ ցեղասպանության զոհ է և իրավունք ունի օգտվելու վերապրողների համար նախատեսված օժանդակությունից:

Այս պատմությունը հստակորեն ցույց է տալիս դիմադրության շարունակականությունը: Ամենօրյա դիմադրության գործողությունները, բացի ֆիզիկական կամ զինված ընդվզումից, ներառում են նաև համառության, խոհեմության և անհատական ջանքեր՝ որոշակի նպատակի հասնելու համար: Այլ կերպ ասած՝ «ամենօրյա դիմադրությունն ընդգծում է ներգրավվածների մշտական ռազմավարական զգոնությունը»³¹:

Ամփոփելով Ռուանդայում իրագործված ցեղասպանության ընթացքում եղած դիմադրությունների որոշ հետազոտություններ՝ հանգում ենք այն եզրակացությանը, որ ուսումնասիրությունները մեծ մասամբ կենտրոնացած են ամենօրյա դիմադրության դրսևորումների վրա: Ավելին՝ ուսումնասիրություններում շեշտվում է դիմադրության շարունակականությունը, որը հատուկ է հետցեղասպանական Ռուանդային:

30 Susan Thomson, *Whispering Truth to Power: Everyday Resistance to Reconciliation in Postgenocide Rwanda* (The University of Wisconsin Press, 2013), 128.

31 Նույն տեղում:

Ֆիզիկական և ոչ ֆիզիկական դիմադրության ձևակերպումները

Նացիստական Գերմանիայի անկումից հետո և հատկապես 1960-ական թվականների վերջերին Հոլոքոստի պատմագրության մեջ «դիմադրություն» հասկացության կիրառությունն ավելի ընդլայնվեց: Դիմադրությունների բնույթի շուրջ ձևավորված խոսույթը հիմք հանդիսացավ Հոլոքոստի ժամանակ դիմադրությունների առավել լայն ուսումնասիրությունների և հակաթեզերի դուրսբերման համար: Դրա շուրջ ակտիվ քննարկումների ընթացքում ի հայտ եկան «Կյանքի սրբացում» (Kiddush Hahayim) և «Ամիդա» (Amidah) հայեցակարգերը: Առաջինի առանցքում անձի ֆիզիկական սրբացումն էր, երբ նա նախընտրում է մահանալ, քան չխախտել պատվիրաններից գեթ մեկը. «Ֆիզիկական գոյատևման յուրաքանչյուր պայքար համարվում է «կյանքի սրբացում»»³²: Իսկ երկրորդը՝ «ամիդա»-ն, երբայերենից բառացիորեն թարգմանվում էր «կանգնել ընդդիմանալու համար» և ներառում էր դիմադրության թե՛ զինված և թե՛ ոչ զինված գործողությունները՝ բացառությամբ պասիվ դիմադրության³³: Այս առումով Բաուերի մոտեցումը խիստ ծայրահեղական է, քանի որ, նրա համոզմամբ, մարդ իրականում չի կարող «պասիվ» դիմադրել³⁴:

Դիմադրության շուրջ քննարկումներին նպաստեց հիմնականում որոշ հրեա մտավորականների այն թեզը, որի համաձայն՝ հրեաներն իրենք էլ ունեն մեղավորության բաժին իրենց հետ կատարվածում, քանի որ չեն դիմադրել: Մասնավորապես Ռաուլ Հիլբերգը, որի համոզմամբ՝ դիմադրության իրական դրսևորումը զինված դիմադրությունն է, պնդում է, որ հրեաները չունեին որևէ ծրագիր ոչ միայն զինված, այլև հոգեբանական պայքարի համար³⁵: Ի հակադրություն այս տեսակետի՝ որոշ ուսումնասիրողներ պասիվ դիմադրությունը ևս դիմադրության ձև էին համարում: Այսպես՝ անգլիացի պատմաբան Մարտին Գիլբերթը պնդում էր, որ շատ հրեաների համար դիմադրության ձև էր արժանապատիվ մահը. «Պարզապես գոյատևելը մարդկային ոգու հաղթանակն էր»³⁶:

Այնուամենայնիվ, գրեթե բոլոր հետցեղասպանական հասարակություններում ձևավորվում է այն կարծրատիպը, որ մարդիկ չեն պայքարել և «մորթվել են ոչխարների պես»³⁷: Հայոց ցեղասպանության պարագայում այս մոտեցումն ուղղակիորեն

32 Rabbi Aaron Rakeffet, “The “Kedoshim” Status of the Holocaust Victims,” *Hirhurim Musing Torah Journal* (July 2010): 185.

33 St’u Yehuda Bauer, *Rethinking the Holocaust* (Yale University Press, New Haven and London, 2001), 120-123:

34 St’u նույն տեղում:

35 St’u Raul Hilberg, *The Destruction of European Jews*. Third Edition, vol. 3 (New Haven and London: Yale University Press, 2003), 1104:

36 Martin Gilbert, *The Holocaust: A History of the Jews of Europe during the Second World War* (New York: Holt, Rinehart and Winston, 1985), 828.

37 «Ոչխարների պես մորթվել» արտահայտությունը հայտնի է աստվածաշնչյան մեկնություններից. «Մեզ ոչխարի պես մորթելու յանձնեցիր եւ մեզ ցրեցիր հեթանոսների մէջ», «Մենք ամէն օր զոհուում ենք քեզ համար, կարծես մորթելու ոչխարներ լինենք» (Սաղմոս 43:12, 43:22, Աստվածաշունչ մատենան Հին և Նոր կտակարանների (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ Հայաստանի Աստուածաշնչային

պայմանավորված է նրանով, որ ցեղասպանությանը հաջորդած Խորհրդային Միության շրջանում Հայոց ցեղասպանության թեման երկար տարիներ արգելված էր և հանրային քննարկման շրջանակ ներթափանցել է 1950-ականներից՝ հիմքում ունենալով գոհի կարծրացած բնութագիրը: Իր հողվածներից մեկում Հայոց ցեղասպանության հիշողության թեման ուսումնասիրող, ազգագրագետ Հարություն Մարությանը նշում է, որ նույնիսկ Հայոց ցեղասպանության ամենամյա ոգեկոչման ժամանակ հիմնական շեշտադրումն ուղղված է «ցեղասպանության գոհերին», երբեմն էլ հիշվում են հայ ֆիդայիները և ինքնապաշտպանական մարտերը³⁸: Չոհի կերպարի վրա կենտրոնացումը պայմանավորված էր ինչպես հետցեղասպանական բարոյահոգեբանական ճնշվածությամբ, թուրքական ժխտողական թեզերին նպաստելու մտավախությամբ, այնպես և կառավարող վարչակարգի դրսևորած վերաբերմունքով: Ինչպես գրում է Հարություն Մարությանը, «.... խորհրդային դեկավարությունը ոչ այնքան արգելում էր ցեղասպանության մասին խոսելը, որքան որ նպաստում էր ցեղասպանության շուրջ այնպիսի հիշողության պահպանմանը, որտեղ հայերը բացառապես ներկայացվում էին որպես անմեղ գոհ, որը կորցրել է իր պատմական հայրենիքի մեծ մասը և կարիք է զգում կարեկցանքի»³⁹: Սակայն տարիներ անց՝ Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցին ընդառաջ տեղի ունեցած բողոքի ցույցերը, Հայոց ցեղասպանության հուշահամալիրի կառուցումը, իսկ ավելի ուշ Ղարաբաղյան շարժումը ձևավորեցին ինքնաբերական պահանջ՝ կենտրոնանալու նաև դիմադրական պայքարի ուսումնասիրությունների վրա:

Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի ականատես-վերապրողների պատմությունները պայքարի խոստուն վկայություն են և ոչ թե սոսկ իրողությունների նկարագրություն. վերապրողների օրագրություն-գրառումները ևս դիմադրության՝ ողջ մնալու միջոց են: Ինչպես նշում է հոգեբան Արմինե Վահանյանը, «Օրագիրը գրառողին օգնում է դիմակայել՝ արձանագրելով այն, ինչ կարող է խեղաթյուրվել, իսկ հետագոտողի համար ծառայում որպես սկզբնաղբյուր»⁴⁰:

Ռուանդայում դիմադրության միջոց էր ռադիոկայանով կոչեր հնչեցնելը: Ինչպես գիտենք, ցեղասպանության նախնական փուլում ռադիոն մեծ դեր ունեցավ թյուֆինների նկատմամբ ատելության քարոզչության տարածման հարցում: Սակայն Ռուանդայի հայրենասիրական ճակատը կարողացավ այն օգտագործել նաև որպես դիմադրության միջոց՝ «Radio Muhabura» ռադիոկայանի միջոցով զանգվածային սպանությունների մասին նախազգուշացումներ տարածելով, զինված դիմադրությունների և պետական անօրինականությունների դեմ պայքարի կոչեր հնչեցնելով:

Ընկերություն, Հայաստան, Երևան, 1994)): Այս արտահայտության մասին մանրամասն տե՛ս նաև Հարություն Մարության «Հայոց ցեղասպանության և հրեաների հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները» (*Պատմաբանասիրական հանդես* 2 (2011), 30-34):

38 Տե՛ս Մարության, «Ինքնապաշտպանության ֆենոմենը», 76:

39 Հարություն Մարության, *Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* (Երևան, «Գիտություն», 2009), 64-65:

40 Արմինե Վահանյան, «Օրագրային մեթոդը՝ որպես ցեղասպանության հոգեցունց իրականության արտացոլման ներքին մեխանիզմ (բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագրի օրինակով)», *Ցեղասպանագիտական հանդես* 11, no. 2 (2023), 101:

Դիմադրության ձևերի մի շարք հետազոտություններ ուսումնասիրելիս հանգում ենք այն կարծիքին, որ պարզապես ողջ մնալն արդեն իսկ դիմադրության դրսևորում է: Այս տեսակետը շատ ենք հանդիպում հատկապես Հոլոքոստի ուսումնասիրություններում: Հետազոտողներ Դալիա Օֆերը և Լենոր Վեյցմանը համոզված են, որ հրեաների համար գոյատևումն ինքնին դիմադրության գործողություն է, քանի որ նացիստները նրանց թիրախավորել էին բնաջնջելու նպատակով⁴¹:

Թիրախավորված խմբի բնաջնջումը ոչ միայն ֆիզիկական, այլև ինքնության, պատմության, մշակույթի ոչնչացում է: Հրեա պատմաբան, սոցիոլոգ Նեչամա Տեքը դիմադրության դրսևորում էր որակում, օրինակ, Գերմանիայում հրեական արվեստի և արվեստագետների աշխատանքների պահպանումը Հրեական մշակութային ասոցիացիայի ստեղծման միջոցով: Նրա պնդմամբ՝ այս նախաձեռնությունը ևս ծառայում էր որպես հրեական ինքնությունը և մշակույթը ոչնչացնելու նացիստական նպատակին դիմակայելու պատիվ միջոց⁴²:

Նույն կերպ և Հայոց ցեղասպանության ժամանակ գաղթի ճանապարհին և համակենտրոնացման ճամբարներում, բացի ֆիզիկականից, եղել է նաև «բարոյական դիմադրություն», որի դրսևորումներից կարելի է առանձնացնել, օրինակ, ինքնության պահպանման համար կամ բռնի կրոնափոխության դեմ պայքարը:

Հայոց ցեղասպանությունը վերապրած ուրֆացի Արմեն Մարաշլյանն իր հուշերում պատմում է, թե ինչպես էին հայ մայրերը գաղտնի աղոթում և խաչակնքում իրենց երեխաների հետ, հայերեն գրքերի թերթոնները գաղտնի պահում ապահով տեղում և պարբերաբար կարդում, որ չմոռանան հայոց լեզուն և Հայր մերը. «Այսպես, օր մը տեսայ կին մը, շուրջը քանի փոքրիկներ հաւաքած: Գիրք կը կարդար անոնց այնպէս, ինչպէս մեր քահանան... Մայրիկը կը խաչակնքէր և աղոթքի մրմունջներ կ'իյնային իր անարին շրթունքներէն»⁴³:

Բազմաթիվ վկայություններում մեզ հանդիպած պատմությունները հնարավորություն են տալիս ընդլայնելու դիմադրության ձևերի շրջանակը, քանզի միանշանակ է, որ ոչ բոլոր ֆիզիկական դիմադրություններն են զինված: Այդպիսի օրինակ է կյուրինցի մի աղջկա պատմությունը, որի անունը, ցավոք, հայտնի չէ: Նա այն բազմաթիվ աղջիկներից էր, որոնք բռնությունների էին ենթարկվում քարավաններին ուղեկցող զինվորականների կամ ավագակախմբերի կողմից: Ռումելիցի մի զինվորական աղջկա թևից քաշ տալով դուրս է հանում քարավանից և ձիով տանում անտառի կողմը: Գաղթականները բոլորն էլ հասկանում էին, թե ինչ նպատակով է զինվորն աղջկան տանում, սակայն նրանցից ոչ ոք չէր կարող օգնել, որովհետև անգն էին և գիտեին՝ ինչ դաժան կերպով կ'պատժվեն: Որոշ ժամանակ անց լսվում է զինվորի ճիչը: Կյուրինցի աղջիկը դաշույնի հարվածներով սպանել էր զինվորին և, դանակը ձեռքին խելապատառ երգելով, պարում էր դիակի մոտ: Այս դրվագը ոգևորում է

41 St'u Dalia Ofer and Lenore J. Weitzman, *Women in the Holocaust* (New Heaven and London, 1998), 171:

42 St'u Nechama Tec, "Facts, Omissions, and Distortions," in *Jewish Resistance against the Nazis*, ed. Patrick Henry (Washington: The Catholic University of America Press, 2014), 44-67:

43 Արմեն Անոյշ, *Արեան ճանապարհով* (Հալեպ, Գրատուն Կիլիկիա, 1959), 70-71:

գաղթականներին, քանի որ երիտասարդ աղջիկը փրկել էր իր և իր ազգի պատիվը, սակայն ձիավորներն իրենց ղեկավարի հրամանով աղջկան կապում են ծառին և ողջ-ողջ այրում: Այդպիսով երիտասարդ աղջիկը կյանքի գնով փրկում է իր պատիվը⁴⁴:

Տեղահանության ճանապարհին և համակենտրոնացման ճամբարներում ֆիզիկական դիմադրության դեպքերն անհամեմատ քիչ են: Ինչպես գիտենք, օսմանյան իշխանությունների ցեղասպանական քաղաքականության առաջին քայլերից էին հայ մտավորականության ձերբակալումը և սպանությունը, ապա՝ զենքի հավաքագրումը, հայ տղամարդկանց զորակոչը և ոչնչացումը: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշել, որ դիմադրության դեպքեր եղել են անգամ իշխանությունների կազմակերպած ձերբակալություններից ու սպանություններից անմիջապես հետո: Իր հողվածներից մեկում Խաչիկ Մուրադյանն անդրադառնում է ձերբակալությունից հրաշքով փրկված հայ հասարակական գործիչ Շավարշ Միսաքյանին, ով այդ օրերին կարողացել է ստեղծել գաղտնի հաղորդակցության շղթա ամբողջ կայսրության տարածքով՝ հայ բնակչության կոտորածների մասին աշխարհին իրազեկելու նպատակով⁴⁵: Այս օրհասական իրավիճակում հաղորդակցության ցանցի ձևավորումը, իհարկե, պահի հրամայական էր, որը հետագայում դարձավ ոչ զինված դիմադրության վառ օրինակ, իսկ Շավարշ Միսաքյանը՝ Հայոց ցեղասպանության առաջին վավերագրողներից մեկը: Հատկանշական է, որ նրա զեկույցները տեղեկատվության կարևոր աղբյուր հանդիսացան արևմտյան դիվանագետների, մարդասերների, լրագրողների, ինչպես նաև հետազոտողների համար:

Մտավորականության և հայ տղամարդկանց զինաթափումից ու զանգվածային ձերբակալություններից հետո, երբ հայ բնակչությունը զրկվել էր կովող ուժից և պաշտպանության միջոցներից, դիմադրությունը գրեթե անհնարին էր թվում: Սակայն ցեղասպանության թեմայի շարունակական հետազոտման, ականատես-վերապրողների վկայությունների ուսումնասիրությունների հետևանքով երևան եկած պայքարի ոչ ավանդական (զինված) դրսևորումների օրինակներն առիթ հանդիսացան դիմադրությունների հետազոտության շրջանակի ընդլայնման համար՝ ներառելով նաև հումանիտար կամ բարոյական պայքարի դրսևորումները: Ազգագրագետ Հարություն Մարությանն իր հողվածներից մեկում անդրադառնում է ինքնափրկության մի շարք դրսևորումների՝ բերելով որոշ օրինակներ: Դրանցից, թերևս ամենատարածվածը այլ կերպարով կամ հանդերձանքով քողարկումն էր, երբ շատ աղջիկներ՝ առևանգումից խուսափելու նպատակով դիտավորությամբ աղտոտում, վնասում էին իրենց դեմքը կամ տղամարդիկ ստիպված էին լինում կերպափոխվել՝ կանացի հագուստ կրելով⁴⁶: Մշակութաբան-ցեղասպանագետ Հասմիկ Գրիգորյանը ոչ զինված դիմադրության ձև

44 Տե՛ս Պատմագիրք Կոիրիսի (Պեյրութ, 1974), 724-726:

45 Տե՛ս Khatchig Mouradian, “Categories and Their Interstices: The Armenian Genocide Beyond Resistance and Accommodation,” in Thomas Kühne, Mary Jane Rein, and Marc A. Mamigonian, *Documenting the Armenian Genocide: Essays in Honor of Taner Akçam* (Palgrave Macmillan, 2024), 150:

46 Մանրամասն տե՛ս Հարություն Մարության, ««Փրկությունը» որպես ցեղասպանություն եւ ինքնափրկության փորձերը (ըստ արքայի Ճանապարհին վերապրածների վկայությունների առաջին համահաաք ժողովածուի նիւթերի)», «Հանդէս ամսօրեայ» 1-12 (2025), 403-438:

է համարում նաև սննդի հայթայթման տարրեր եղանակները, որոնց դիմում էր հայ բնակչությունը կյանքի համար ստեղծված անբարենպաստ պայմաններին դիմակայելու համար: Հղում անելով «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի⁴⁷ երկրորդ հոդվածին՝ Գրիգորյանը սովամահությունը դիտարկում է որպես ցեղասպանության ընթացքում խմբի ոչնչացման նպատակով գործադրված միջոց⁴⁸:

Եզրակացություն

Դիտարկելով հոդվածի բոլոր վերոնշյալ օրինակները՝ հանգում ենք այն եզրակացությանը, որ ցեղասպանությունների համատեքստում դիմադրության սահմաններն ավելի ընդարձակ են՝ սկսած զինված ինքնապաշտպանական մարտերից մինչև անհատական ոչ զինված պայքարի, ինքնության պահպանմանն ուղղված հոգևոր և մշակութային դիմադրության օրինակներ, ինչպես նաև մինչև մեր օրեր հասած ժխտողականության դեմ տարվող պայքար:

Ուսումնասիրելով դիմադրության ավանդական և ոչ ավանդական դրսևորումները՝ կարելի է փաստել, որ դրանք խիստ տարբեր են: Հատկանշական է, որ դիմադրության պայմաններում տվյալ անձը գոհից վերածվում է ակտիվ գործողի՝ ձեռնարկելով անհնազանդության, ինքնապաշտպանության կամ դիմադրական ցանկացած այլ գործողություն: Սա նշանակում է, որ ականատես-վերապրողի արձագանքը կամ հակազդեցությունը տեղի ունեցող իրողություններին անմիջականորեն կախված է սահմանային իրավիճակում անձի ինքնատիրապետումից, հույզերի կառավարման և արագ կողմնորոշվելու ունակությունից, հնարամտությունից և այլն:

Ամփոփելով Հայոց ցեղասպանության, Հրեից հոլոքոստի և Ռուսնդայում իրագործված ցեղասպանությունների ժամանակ մեզ հանդիպած դիմադրության օրինակների վերլուծությունը և մի շարք գիտական մեկնաբանություններ՝ կարելի է հանգել այն եզրակացությանը, որ գոյապայքարի և վերապրման համար մղած դիմադրության բոլոր հնարավոր ձևերն անհատական ու ինքնատիպ են եղել՝ կախված այն բանից, թե թիրախավորված խումբը կամ անհատը դիմակայելու և պաշտպանվելու ինչպիսի միջոցներ է ձեռք առել՝ ընդհուպ ֆիզիկական և ոչ ֆիզիկական դրսևորումներ: Ըստ այդմ՝ «դիմադրություն» հասկացությունը հոդվածի համատեքստում կարելի է սահմանել հետևյալ կերպ. *ցանկացած գործողություն, որի միջոցով հնարավոր է խուսափել գործող վարչակազմի ցեղասպանական քաղաքականության դրսևորումներից՝ բնաջնջումից մինչև ինքնության կորուստ, դիմադրություն է:*

47 St'u Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide. Approved and proposed for signature and ratification or accession by General Assembly resolution 260 A (III) of 9 December 1948, <https://www.un.org/en/genocide-prevention/1948-convention> (դիտվել է՝ 05.09.25):

48 Տե՛ս Հասմիկ Գրիգորյան, «Մննդի ձեռքբերման եղանակները Հայոց ցեղասպանության ժամանակ որպես «ոչ զինված դիմադրության» դրսևորում. երեխաների փորձառությունները», *Ցեղասպանագիտական հանդես* 7, no. 1 (2019), 16:

FORMULATION AND USE OF THE CONCEPT OF “RESISTANCE” IN THE CONTEXT OF GENOCIDES

Inesa Stepanyan

Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

SUMMARY

Recognizing the multiplicity of contexts and interpretations surrounding the notion of *resistance*, this article examines the evolution of the concept, its diverse modalities, and its particular manifestations within the framework of genocidal processes.

Focusing on the Armenian Genocide, the Holocaust, and the Rwandan Genocide, the study highlights a wide spectrum of resistance strategies, ranging from organized armed defense to individual and collective acts of nonviolent opposition, as well as spiritual, cultural, and intellectual efforts aimed at preserving identity and humanity. It further considers the ongoing struggle against denial as a continuation of resistance beyond the temporal boundaries of the genocides themselves.

The analysis emphasizes that, depending on one's capacity to maintain composure under extreme conditions, regulate emotions, react decisively, and display ingenuity, victims could transform into active agents through acts of defiance, self-protection, or other expressions of resistance.

Drawing on examples identified across the three case studies, the article concludes that every attempt to survive and safeguard life was inherently individual and situational, shaped by the available means of opposition and protection, and encompassing both physical and non-physical dimensions.

Keywords: Armenian Genocide, Jewish Holocaust, Rwandan Genocide, Tutsi, Hutu, resistance, struggle, self-defense

ФОРМИРОВАНИЕ И ИСПОЛЬЗОВАНИЕ ПОНЯТИЯ “СОПРОТИВЛЕНИЕ” В КОНТЕКСТЕ ГЕНОЦИДОВ

Инеса Степанян

Фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

РЕЗЮМЕ

Учитывая многообразие контекстов и трактовок понятия *сопротивление*, в данной

статье рассматривается эволюция этого концепта, его различные формы проявления и конкретные применения в контексте геноцидов.

Исследование сосредоточено на примерах борьбы, возникших в ходе Геноцида армян, Холокоста и Геноцида в Руанде. Эти случаи демонстрируют широкий спектр форм сопротивления — от организованной вооружённой самообороны до индивидуальных и коллективных актов ненасильственного противостояния, а также духовных, культурных и интеллектуальных усилий, направленных на сохранение идентичности и человеческого достоинства. Особое внимание уделяется продолжающейся борьбе против отрицания геноцидов как форме сопротивления, выходящей за временные рамки самих преступлений.

Проведённый анализ показывает, что в зависимости от способности сохранять самообладание в экстремальных условиях, контролировать эмоции, действовать решительно и проявлять находчивость, жертвы могли превращаться в активных субъектов, предпринимая акты неповиновения, самообороны или иные формы противостояния.

На основании изученных примеров делается вывод, что все попытки выживания и сохранения жизни носили индивидуальный и ситуативный характер, определяемый доступными средствами защиты и сопротивления, охватывающими как физические, так и нефизические измерения.

Ключевые слова: Геноцид армян, Холокост, Геноцид в Руанде, тутси, хуту, сопротивление, борьба, самооборона.

REFERENCES

- Պատմագիրք Կիրինի* [History Book of Kyurin]. Beirut, 1974;
- Սաղմոս 43:12, 43:22, Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր կտակարանների [Sagmos 43:12, 43:22, Bible Book of the Old and New Testaments]. Hayastan, Yerevan: Mayr At'or' Surb Ejmiadzin ev Hayastani Astvatsashnchayin Ėnkerut'yun, 1994;
- Anoysh, Armen. *Արեան ճանապարհով* [By the Way of Blood]. Aleppo: Cilicia, 1959;
- Auron, Yair. Անընդունելի անտարբերություն. Միոնիզմը և Հայոց ցեղասպանությունը [The Banality of Indifference. Zionism and the Armenian Genocide]. Yerevan: Zangak, 2013.
- Dervishyan, Yervand. *Ուրֆայի ինքնապաշտպանությունը կամ դյուցազնաշունչ հայության վկայն* [The Self-defense of Urfa or the Witness of Heroic Armenians]. Beirut, 1978;
- Devrikyan, Tigran. *Արևմտահայության ինքնապաշտպանությունը 1915-1923 թթ.* [The Self-defense of Western Armenians in 1915-1923]. Yerevan, 2005;
- Gharibyan, Ararat. *Ռուս-հայերեն բառարան* [Russian-Armenian Dictionary]. Yerevan: Hayastan, 1977;
- Gyumchean, Mesrob. *Հնդարձակ Բառարան Անգլիերէնէ Հայերէն* [Comprehensive Dictionary English-Armenian]. Beirut, 1981;

Grigoryan, Hasmik. «Մնդի ձեռքբերման եղանակները Հայոց ցեղասպանության ժամանակ որպես «ոչ զինված դիմադրության» դրսևորում. երեխաների փորձառությունները» [Ways of Food Procurement During the Armenian Genocide as a Manifestation of “Unarmed Resistance”: Children’s Experiences]. *Ts’eghaspanagitakan handes* 7, no. 1 (2019): 9-26;

Hayruni, Ashot. *Ցեղասպանությունների պատմություն* [History of Genocides]. Yerevan, 2025;

Haigaz, Aram. *Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը* [Shabin Karahisar and his Heroic Battle]. New York, 1957;

Hovhannisyan, Nikolay. *Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում* [The Armenian Genocide in the Conceptual System of Genocide Studies]. Yerevan: Zangak-97, 2002;

Kosoyan, Haykak. *Վան բերդաքաղաքի ժողովրդային հերոսամարտը* [The People’s Heroic Battle of the Van Fortress City]. Tehran, 1966;

Marutyan, Harutyun. «Ինքնապաշտպանության ֆենոմենը Հայոց ցեղասպանության տարիներին և հիշատակի օրվա վերաբանաձևման խնդիրը» [The Phenomenon of Self-defense During the Years of the Armenian Genocide and the Problem of Reformulation of the Memory Day]. *Ts’eghaspanagitakan handes* 3, no. 1-2 (2015): 76-80;

Marutyan, Harutyun. «Հայոց ցեղասպանության և հրեաների հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները» [Structural Peculiarities of Armenian Genocide and Jewish Holocaust Memory]. *Patmabanasirakan handes* 2 (2011): 24-46;

Marutyan, Harutyun. *Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* [Iconography of Armenian Identity. Volume 1: The Memory of Genocide and the Karabagh Movement]. Yerevan: Gitut’yun, 2009;

Marutyan, Harutyun. «Փրկությունը» որպես ցեղասպանություն և ինքնափրկության փորձերը (ըստ աքսորի ճանապարհին վերապրածների վկայությունների առաջին համահալար ժողովածուի նիւթերի) [“Rescue” as Genocide and Attempts at Self-rescue (According to the Materials of the First Collection of Testimonies of Survivors on the Path of Exile)], *Handés amsorea* 1-12 (2025), 403-438;

Minasyan, Edik. *Հայ հերոսուհի կանայք* [Armenian Heroine Women]. Yerevan, 2016.

Werfel, Franz. Մուսա լեռան քառասուն օրը [Forty Days of Musa Daghl]. Yerevan: Luys, 1987;

Mkhitarian, Onik. *Վանի հերոսամարտը* [The Heroic Battle of Van]. Sofia, 1930;

Sahakean, Aram. *Դիցազնական Ուրֆան և իր հայորդիները* [Heroic Urfa and its Armenian Sons]. Anthelias, 2014;

Sahakyan, Ruben. *Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին* [The Western Armenian Genocide and the Self-defense Struggles in 1915]. Yerevan, 2005;

Stepanyan, Astghik. «Հայոց ցեղասպանության և Ռուսադայում տեղի ունեցած

ցեղասպանության փուլերի, իրադրոժման մեխանիզմների ու մեթոդների համեմատական վերլուծություն» [A Comparative Analysis of the Stages, Mechanisms and Methods of Implementation of the Armenian Genocide and the Genocide in Rwanda]. *Patmut'yun yev mshakuyt'* [History and Culture] (2018), 182-189;

Tadevosyan, Rafayel. *Դրվագներ հայոց ռազմական պատմությունից. XIX-XX դարեր* [Episodes from Armenian Military History: XIX-XX Centuries]. Yerevan, 2012;

Terzean, Sokrat. *Հաճընի ութամսեայ դիցազնամարտը* [The Eight-month Epic Battle of Hadjin]. Buenos Aires, 1956;

Vahanyan, Armine. «Օրագրային մեթոդը՝ որպես ցեղասպանության հոգեցունց իրականության արտացոլման ներքին մեխանիզմ (բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագրի օրինակով)» [The Diary Method as an Internal Mechanism for the Expression of Spiritual Reality of Genocide (on the Materials of the Diary of Doctor Garabed Hatcherian)]. *Ts'eghaspanagitakan handes* 11, no. 2 (2023): 100-113.

Հեղինակի մասին

About the Author

Об авторе

Ինեսա Ստեփանյան, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի կրթական ծրագրերի պատասխանատու, Վահագն Դադրյանի անվան համեմատական ցեղասպանագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող, ՀՅԺԻ ասպիրանտ:

Ուսումնասիրությունների ոլորտը՝ հայ կանանց դիմադրության ձևերը Հայոց ցեղասպանության տարիներին:

Էլ. փոստի հասցե՝ stepanyan.inesa@genocide-museum.am

Inesa Stepanyan, Coordinator of the Educational Programs at the Armenian Genocide Museum-Institute Foundation, Junior Researcher at the Vahagn Dadrian Department of Comparative Genocide Studies, and a PhD student at AGMI.

Research focus: Forms of resistance by Armenian women during the Armenian Genocide.

E-mail: stepanyan.inesa@genocide-museum.am

Инеса Степанян, координатор образовательных программ Фонда “Музей-институт Геноцида армян,” младший научный сотрудник Отдела сравнительного геноцидоведения имени Ваагна Дадряна, аспирантка МИГА.

Область исследований: Формы сопротивления армянских женщин в период Геноцида армян.

Эл. почта: stepanyan.inesa@genocide-museum.am

ՈՉ ՄԻԱՅՆ ՖԻՆԱՆՑ ՎԵՐՖԵԼԸ. ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԱՊԱՏՈՒՄՆ ՕՏԱՐԱԶԳԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՔԻՉ ԾԱՆՈԹ ԵՐԿԵՐՈՒՄ

Արծվի Բախչինյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան

Հոդվածը ներկայացնում է աշխարհի 28 երկրների գրականության մեջ ստեղծված քիչ ծանոթ երկեր, որոնք ամբողջությամբ կամ մասնակիորեն անդրադառնում են Հայոց ցեղասպանությանը: Դրանք ընդգրկում են գրական բոլոր տեսակները՝ բանաստեղծություն, արձակ, թատերգություն և գրեթե բոլոր ժանրերը՝ պատմական, հոգեբանական, արկածային, երևակայական, սարսափ, մանկական՝ ապահովելով խնդրի վերաբերյալ իրազեկությունն ամենատարբեր ընթերցող շրջանակներում:

Հոդվածի մեջ չեն հիշատակվում միջազգային գրականության հայկական ծագումով հեղինակների երկերը (բացառություն են կազմում քառորդ հայկական արյամբ մի քանի հեղինակներ):

Քանի որ սույն թեմայով մեծաթիվ փաստական նյութ արդեն իսկ առկա է 1996-ին հրատարակված «Հայկական հարց» հանրագիտարանում և առանձին երկրների գրականության մեջ եղեռնի թեմայի անդրադարձը ներկայացնող մենագրություններում, այդ իսկ պատճառով գլխավորապես ներկայացված են նշված աղբյուրներում տեղ չգտած, ինչպես նաև 1996-ից հետո ասպարեզ իջած գրական գործերը՝ առանց հավակնելու սպառիչ խոսք ասել:

Հոդվածը հիմնականում վերաբերում է միջազգային գրականության մեջ 1915 թվականի Մեծ եղեռնի արտացոլմանը, սակայն կան առանձին անդրադարձներ Օսմանյան կայսրության մեջ 1894–1923 թթ. հայոց տեղահանությանը և կոտորածներին, Բաքվի հայերի ջարդերին (1905, 1918, 1988, 1990):

Հայոց ցեղասպանության մասին գրած օտարազգի հեղինակներն իրենց ստեղծագործությունները գրելիս մեծ մասամբ հենվել են տարբեր լեզուներով աղբյուրների, հիմնականում՝ Ցեղասպանության ոչ հայ ականատեսների և ժամանակակիցների վկայությունների հիման վրա: Ծառերը Եղեռնը ներկայացրել են վերապրածների ճակատագրերի (հաճախ՝ կանանց կամ երեխաների կերպարներով) և զգայացունց սիրավեպերի (հաճախ՝ հայուհու և թուրքի միջև) միջոցով: Ոմանք ստեղծել են հորինովի կերպարներ, իսկ որոշ գրողներ հերոս են դարձրել պատմական դեմքերի: Այլևայլ գործերում թռուցիկ հիշատակվել են Ցեղասպանությանն առնչվող տարբեր իրողություններ (հայ փախստականները, որբերը, թուրքերի հայատնացությունը և այլն):

Հիշատակվող հեղինակների մեջ բազմաթիվ են տարբեր ազգերի գրականության մեջ համեստ տեղ գրավող հեղինակներ, կան նաև ականավոր անուններ (Ջոզուե Կարդուչի, Էռնեստ Բիրզնիեկս-Ուայտիս, Ջոն Գոլստորդի, Ջոն Չիվեր, Օլդոս Հաքսլի, Ֆազիլ Իսկանդեր, Սեմ Լուիզվալ, Լի Հարվուդ, Ջոն Ափդայք, Ռիչարդ Կայինոսկի, Գոնսալո Գուարչ, Յորդոս Մոլեսկիս): Ուշագրավ են նաև թուրք և ադրբեջանցի գրողների երկերում հիշատակումները հայերի կոտորածների մասին:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, 20-րդ դարի միջազգային գրականություն, 21-րդ դարի միջազգային գրականություն, եղեռնի արտացոլում, հայուհու կերպար, արձակ, չափածո, թատերգություն:

Հոդվածը ներկայացվել է՝ 02.03.2025: Ընդունվել է տպագրության 12.06.2025

The article was submitted on 02.03.2025 and accepted for publication on 12.06.2025.

Статья поступила 02.03.2025 и была принята к публикации 12.06.2025.

Ինչպես հղել՝ Արծվի Բախչինյան, «Ոչ միայն Ֆրանց Վերֆելը. Հայոց եղեռնապատումն օտարազգի գրողների քիչ ծանոթ երկերում», *Յեղասպանագիտական հանդես* 13, no. 1 (2025), 64-91:

How to cite: Artsvi Bakhchinyan, “Not Only Franz Werfel: The Lesser-Known Works of Foreign Writers on the Armenian Genocide,” *Ts’eghaspanagitakan handes* 13, no. 1 (2025), 64-91.

Как сослаться: Арцви Бахчинян, “Не только Франц Верфель: малоизвестные произведения зарубежных писателей о Геноциде армян,” *Цехаспанагитакан андес* 13, no. 1 (2025), 64-91.

Ներածություն

Յեղասպանության մասին գրելը մեծագույն գրական մարտահրավերներից է, հատկապես, երբ դա ներառում է սեփական կամ ընտանիքի փորձառությունը: Ամենից հաճախ հանցագործությունը ցմահ փակում է ողջ մնացած զոհերի բերանները, հատկապես եթե ցեղասպանություն իրագործած պետությունը կամ հասարակությունը ժխտում է հանցագործությունը և, ընդհակառակը, տուժողներին է մեղադրում հանցագործության մեջ, ինչպես դա տեղի է ունենում 109 տարի անց երեք միլիոն բնիկ քրիստոնյա հայերի, հույն ուղղափառների և ասորիների հանդեպ կատարված օսմանյան ցեղասպանության դեպքում:

Թեսա Հոֆման¹

Համաշխարհային գրականության մեջ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արտացոլման խնդիրը բազմիցս քննել են հայ և այլազգի մասնագետները: Որոշ գրական երևույթներ հանրահայտ են (*Ֆրանց Վերֆելի* «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը, *Արմին Թեոֆիլ Վեգների* պատմվածքները կամ *Պեյո Յալորուլի* «Հայերը» բանաստեղծությունը), սակայն լուսանցքներում և ստվերում առկա է նաև խնդրին առնչվող ոչ փոքրաքանակ գրականություն՝ կարևոր չէ, թե պակաս գրական-գեղարվեստական արժանիքներով:

Սույն թեմայով ամենից ծավալուն տեղեկատվությունն առկա է 1996 թ. հրատարակված «Հայկական հարց» հանրագիտարանում², որտեղ խնդրին առնչվող գրա-

1 Tessa Hofmann, “Rejection, Forgiveness, Understanding and Pain: A Dazzling Polyphony in Genocide Fiction,” *Armenian Mirror-Spectator* 18.03.2023.

2 Տե՛ս *Հայկական հարց հանրագիտարան* (Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 1996), 238-258:

կան երկերը ներկայացված են ըստ երկրների: Թեման լայն կտրվածքով արտացոլվել է ամերիկահայ հեղինակներ Լեո Համալյանի և Ռուբինա Փիրումյանի աշխատություններում³, իսկ որոշ գրականագետներ քննել են թեմայի անդրադարձն առանձին ժողովուրդների գրականության մեջ (ռուսական⁴, ամերիկյան⁵, գերմանական և ավստրիական⁶, իտալական⁷, հրեական⁸, իսպանական⁹, արաբական¹⁰, թուրքական¹¹):

Սույն հոդվածով գլխավորապես ներկայացնում ենք վերոհիշյալ աղբյուրներում չնշված, ինչպես նաև 1996 թ. հետո ասպարեզ իջած գրական գործերը՝ առանց հավակնելու սպառնիչ խոսք ասել¹²: Նշելու ենք նաև այնպիսի գրական գործեր, որոնք

3 Տե՛ս Leo Hamalian, "The Armenian Genocide and the Literary Imagination," in *The Armenian Genocide in Perspective*, ed. Richard G. Hovannisian (Routledge, 2007), 153-166; Rubina Perroomian, *The Armenian Genocide in Literature. Perceptions of Those Who Lived Through the Years of Calamity* (Yerevan: Armenian Genocide Museum-Institute, 2012); Դավիթ Վ. Գասպարյան, «Ցեղասպանության արտացոլումը գեղարվեստական գրականության մեջ», *Ցեղասպանագիտական հանդես* 10 (1), 2022, 84-96: Կա նաև վկայություն, որ 1980-ականների սկզբին գրականության մեջ Մեծ եղեռնի արտացոլման թեմայով Հարավային Քալիֆորնիայի համալսարանի բանասիրության բաժանմունքում թեզ է գրել Լորա Բարդակչյանը (տե՛ս Լորա Բարդակչյանի բանաստեղծությունների՝ Վահագն Դավթյանի նախաբանը, *Սովետական Հայաստան* 2 (1982), 31):

4 Տե՛ս Михаил Давидович Амирханян, *Русская художественная литература и Геноцид армян* (Ереван, Айастан, 1988).

5 Տե՛ս Տիգրան Մալումյան, *Հայոց Մեծ եղեռնը ամերիկյան գրականության մեջ*: Առենախոսություն (Երևան, Երևանի պետական համալսարան, 2005): Հայկանուշ Ա. Շարություն, «Հայոց եղեռնապատումը ամերիկացի գրողների երկերում», *Վե՛մ* 2 (2015), 102-111:

6 Տե՛ս Marina Arustamyan, *The Topic of the Armenian Genocide in German and Austrian Literature* (Yerevan, Zangak, 2014).

7 Տե՛ս Սոնա Հարությունյան, *Հայոց ցեղասպանության թեման իտալական գրականության մեջ* (Երևան, ԵԳՀ հրատ., 2015):

8 Տե՛ս Յաիր Աուրոն, *Արևդունեյի անտարբերություն. սիոնիզմը և Հայոց ցեղասպանությունը* (Երևան, Ամարաս, 2013), 381-410: Արշակ Գևորգյան, «Հայոց ցեղասպանության արտացոլումը Ահաբոն Ռեուվենիի «Մինչ Երուսաղեմ» եռագրությունում», *Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների պարբերական ժողովածու)* 9 (2015), 41-55:

9 Տե՛ս Մարիամ Մուղդույան, «Հայոց ցեղասպանության թեման իսպանական արձակում», *Անցյալի սպազան* (Երևան, ԵԳՀ հրատ., 2015), 102-113: Siranush Karapetyan, "The Specific Characteristics of Depictive Portraying of Armenian Genocide in Spanish Literature," *Բանբեր հայագիտության* 2 (2016), 150-157:

10 Տե՛ս Միհրան Մինասեան, «Հայոց ցեղասպանության թեման արաբական գրականության մեջ», *Հայոց ցեղասպանություն-100. Ճանաչումից՝ հատուցում. Միջազգային գիտաժողովի նյութեր* (Երևան, «Գիտություն», 2016), 664-676: Ի դեպ, Մինասյանը թարգմանաբար հրատարակել է Իբրահիմ Ալ-Խալիլի՝ Հայոց ցեղասպանության թեմայով գեղարվեստական գործերի «Անապատին կակաչները» ժողովածուն (Աթիլիսա, տպ. Կաթողիկոսության Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2002), ինչպես նաև նույն թեմայով տասնյակ արաբալեզու գրողների գործեր:

11 Տե՛ս Ռուբեն Մելքոնյան, *Հայոց ցեղասպանության թեման արդի թուրքական գրականության մեջ* (Երևան, ՎՄՎ-այրիստ, 2010): Ռուբեն Մելքոնյան, Նաիրա Պողոսյան, «Հայոց ցեղասպանության թեման ժամանակակից թուրք գրականության մեջ. համառոտ ակնարկ», *Անցյալի սպազան* (Երևան, ԵԳՀ հրատ., 2015), 26-42: Hambersom Aghbashian, *Turkish Intellectuals Who Have Recognized the Reality of the Armenian Genocide. Vol. 1, 2015, vol. 2, 2018* (Los Angeles, publ. by Nor Or Weekly Newspaper).

12 Հոդվածում չենք ընդգրկել օտարազգի գրողների կողմից հայկական կոտորածների վերաբերյալ տարբեր առիթներով արտահայտված կարծիքները, որոնք արժանի են առանձին ուսումնասիրության:

թեն չեն անդրադառնում Հայկական հարցին, սակայն պարունակում են խնդրի վերաբերյալ թեկուզ դրվագային, թոռուցիկ հիշատակություններ: Նաև միտումնավոր շրջանցելու ենք հայազգի հեղինակների այլալեզու ստեղծագործությունները և հուշագրությունները, որպիսիք վերջին քսանամյակում ի հայտ եկան մեծ քանակով, հատկապես ամերիկյան (Քրիս Բոհջալյանի «Ավագամրոցի աղջիկները», Մարք Մուսթիանի «Ժանդարմը» վեպերը, Ջոյս վան Դայքի «Արշալույս» պիեսը) և եվրոպական (հայազգի գերմանական գրողներ Կատարինա Փոլադյանի, Լատուրա Ցվիերտսիայի, Մարկ Սինանի վեպերը) գրականության մեջ:

Մեր հաշվումներով՝ աշխարհի 28 երկրների գրականության մեջ ստեղծվել են երկեր, որոնք ամբողջությամբ կամ մասնակիորեն անդրադառնում են Հայկական հարցին՝ ներառելով ոչ միայն 1915 թվականի Մեծ եղեռնը և Օսմանյան կայսրության մեջ 1894–1923 թթ. հայոց տեղահանությունը և կոտորածները, այլև Բաքվի և Ադրբեջանի հայերի՝ 1905, 1918, 1988, 1990 թթ. կոտորածները, հայության տարագրությանը, որբերին և այլն:

Ամենից առաջ նշենք, որ հայ գրականության մեջ Մեծ եղեռնի մասին առաջին վեպը Երվանդ Օտյանի «Թիվ 17 խաֆին» է՝ որպես թերթյան հրատարակված արդեն 1919–1920 թթ.¹³: Իսկ հայազգի օտարալեզու գրողներից այդ թեմայով վեպի ժանրով առաջին անգամ հանդես է եկել բանասեր Մկրտիչ Պոտուրյանը (Յանոշ Բոդուրյան)՝ 1930-ին հրատարակած «Կարմիր լուսին» հունգարերեն ստեղծագործությամբ¹⁴:

Տեղին է նշել նաև, որ տակավին 1877 թ. ամերիկուհի Սյուզան Աննա Ուիլերը «Հայաստանի դուստրերը» վեպում ներկայացրել է 19-րդ դարի վերջին Օսմանյան կայսրությունում ապրող երեք հայ քույրերի՝ Արաքսիի, Հայկուհու և Մարիամի կյանքը

Օրինակ, քիչ հայտնի փաստ է, որ ֆրանսիացի ականավոր բանաստեղծ Շառլ Պեգին (1873–1914) 1897 թ. «Ռեյու տսիալիստ» պարբերականում (թիվ 147, 15 մարտ, 1897) գրել է. «1894-ի հուլիսի 1-ից հետո, երկու տարվա ընթացքում, ավելի քան 300 000 հայ է սպանվել Օսմանյան կայսրությունում: Սա դարի ամենամեծ կոտորածն է. ո՛չ թուրքական կոտորածը 1822-ին Քիոսում, 1860-ին՝ Լիբանանում, 1876-ին՝ Բուլղարիայում, ո՛չ ֆրանսիացիների կոտորածները 1848-ի հունիսին մեծ հաշվով, այսպես մեծ թվով զոհեր չեն ունեցել: Ո՛ւմ կողմից, ինչո՞ւ և ինչպե՞ս է այս ոճիրն իրականացվել: Այդ մասին մենք մասամբ տեղեկանում ենք Մ. Բերարի՝ ճշգրիտ, վավերագրված, համոզիչ պատմության գրքից» («Le Point», Paris, 30 Avril 2015, no 2225): Չենք ընդգրկել նաև հայ-թուրք հակամարտության և փոխադարձ ատելության վերաբերյալ ակնարկները, որոնք անթիվ են: Այսպես, Էդուարդ Լիմոնովն իր «Ես եմ՝ Էդիչկան» վեպում գրել է. «Հրեաներ և արաբներ, հայեր և թուրքեր, բավական է այս ամենը, պետք է վերջապես կա՛նգ առնել» (Эдуард Лимонов, Это я – Эдичка, *Ковчег* 1-2 (1978): 44): Վրացի ժամանակակից գրող Արչիլ Բիքոճեի «Մողեսը տապանաքարին» վեպի հերոսը՝ վրացի նկարիչ Գիգոն, Գերմանիայում իր ցուցահանդեսում ներկայացնում է «Հայ վաճառականները խաբում են յուր վաճառելու համար քաղաք եկած փխովցիներին» նկարը: «Էս ծավալուն, հայատյաց վերնագիրը ֆրաու Վոլբերը երկար ժամանակ պահանջում էր փոխել, ոտքերը գետնին էր խփում, աչքերը ցատումով փայլում էին, բայց Գիգոն էլ էր համառ» (Արչիլ Բիքոճե, *Մողեսը տապանաքարին* (Երևան, «Վերնատուն մեդիա», 2024), 67): Ի վերջո, այդ նկարը գնում է «ծագումով թուրք գերմանացի միլիոնատերը» (նույն տեղում):

13 Տե՛ս Երուանդ Օտեան, *Թիւ 17 խաֆիէն*, հատոր Ա, տեքստը տպագրության պատրաստեց Հեղինե Մուրադյանը (Երևան, ԳԱԹ հրատ., 2000), 7:

14 Տե՛ս Bodurian János: Vörös hold. Csíkszépvíz, 1931: Այս մասին մանրամասն տե՛ս Péter Pál Kránitz, “Mgrdich Bodurian’s Red Moon: A Transylvanian Narrative of the Armenian Genocide,” *Հայկազեան հայագիտական հանդես* 38 (2018), 421-433:

հասարակության մարտահրավերների և ժամանակի քաղաքական ցնցումների հետ-նախորդին: Վեպն արժարժում է ընտանիքի, սիրո, դավաճանության և տոկունության թեմաները, երբ քույրերը դիմակայում են հայ կյանքի դաժանությանն օսմանյան տիրապետության ներքո: Վեպն անուղղակիորեն լույս է սփռում նաև պատկերվող իրադարձություններից մի քանի տասնամյակ անց տեղի ունեցած Հայոց ցեղասպա-նության վրա...

Առաջին երկերը

Օտարագգի գրողների առաջին անդրադարձը հայերի ողբերգությանը վերաբերում է 1894–1896 թթ. համիդյան ջարդերին, երբ եվրոպական և ամերիկյան մամուլը պարբերաբար հանդես է եկել դրանց վերաբերյալ լրատվությամբ: Ըստ այդմ, հա-յոց կոտորածներին վերաբերող առաջին գրական անդրադարձները հանդիպում են 1896 թ., երբ անգլիական քաղաքական պոեզիայի ներկայացուցիչ *Ուիլյամ Ուաթ-սոնը* (1858–1935) հանդես եկավ «Ծիրանագույն Արևելքը. սոնետների շարք Անգլիայի կողմից Հայաստանը լքելու վերաբերյալ» քսանից ավելի սոնետ պարունակող ժո-ղովածուով¹⁵: Դրանց մի մասը վերահրատարակվել է հաջորդ տարի լույս տեսած Ուաթսոնի «Ամոթի տարին» ժողովածուում: 1897 թվականին էլ լույս տեսել նաև հա-միդյան ջարդերը ներկայացնող ամերիկացի *Ջորջ Հեփվորսի* (1833–1902) «Հայաս-տանի միջով ձիու թամբին» վեպը: Հայոց արյունոտ ներկայի թեման շարունակվել է պոեզիայում՝ ամերիկացի *Հենրի վան Դայքի* (1852–1933) «Ծինարարը և այլ բա-նաստեղծություններ» ժողովածուում (1897)¹⁶ և իտալացի մեծանուն բանաստեղծ *Ջո-զուե Կարդուչի* (1835–1907) «Հնձում է թուրքը» քերթվածում¹⁷, ավելի ուշ՝ ամերիկացի բանաստեղծ և գրաքննադատ *Ջորջ Էդուարդ Վուդբերիի* (1855–1930) «Հայաստան» (1919) և ամերիկյան բանաստեղծուհի, երաժիշտ *Լուիզ Էյրս Գարնեթի*՝ (1860–1937) Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կազմակերպության խնդրանքով 1920 թ. գրած «Հայկական դաշտեր» բանաստեղծություններում¹⁸: *Քեթրին Լի Բեյթսը* (1859–1929)՝ «Ամերիկյան հրաշալի է» օրհներգի հեղինակը, նույնպես հայության ողբեր-գության ազդեցությամբ գրել է «Հայաստան» բանաստեղծությունը¹⁹: Եվ եթե պո-եզիայում կոտորածներին կարեկցալից անդրադարձը թվում է բնական, ապա ան-սպասելի էր նույն այս ժամանակահատվածում թեման տեսնել պատանեկան ար-

15 *The Purple East; a series of sonnets on England's desertion of Armenia*, by William Watson (London, Chicago: Stone & Kimball, 1896).

16 Տե՛ս վան Դայքի “Mercy for Armenia” բանաստեղծության ազատ թարգմանությունը թիֆլիսահայ մամուլում («Գուրջ Հայաստանին (Հենրի վան Դայքից)», *Մշակ*, 11.02.1917. թարգմանիչ՝ Բագրատ Ա. Յակոբեան):

17 Giosuè Carducci, *Rime e ritmi* (Bologna: Zanichelli Editore, 1899), 109.

18 For Armenian Orphans. Armenian Fields by Louise Ayres Garnett. *Poetry, A Magazine of Verse* XII, no. 5 (1920), 288.

19 Տե՛ս հայերեն թարգմանությունը՝ Քեթրին Լի Բեյթս, «Արմենիա», *Անդին* 4 (2017), 6 (թարգմանիչ՝ Հայկարամ Նահապետյան):

կածային արձակում: Անգլիացի գրող *Բրեյսթիջ Հեմինգը* (1841–1901), որ 19-րդ դարի վերջին հայտնի էր պատանեկան վիպաշարի հերոս Ջեք Հարթըրուեյի մասին ստեղծագործություններով, հանուն արդարության մարտնչող իր հերոսին «ուղարկել է» Հայաստան՝ Էրզրում, կովելու թուրքերի դեմ. վիպակն այդպես էլ կոչվում է՝ «Երիտասարդ Ջեք Հարթըրուեյը Հայաստանում կամ Կոիվ թուրքերի դեմ» (1897)²⁰:

1899 թ. ամերիկուհի *Դերորա Ալքոքը* (1835–1913) գրել է «Հեռավոր Եփրատի ափին» վեպը: Այդ գործում պատկերված են համիդյան ջարդերը: Թեման դարձել է նաև թատերախաղերի նյութ. համիդյան ջարդերի ազդեցությամբ են ստեղծվել Օլգա Յոնեսկուի (հայասերունդ) «Սեր և ատելություն» (1900) ռումիներեն և *Մեհմեդ Բիսանի* (1884–1948) «Թշվառ հայերը» (1907) թուրքերեն պիեսները:

Ֆրանսիացի լրագրող, բանաստեղծ, արձակագիր, քանդակագործ, պատմաբան և դիզայներ *Լյուսի Դեկարյու-Մարդրյուի* (1874–1945) մեծածավալ գրական ժառանգության մեջ առկա է Հայաստանին նվիրված «Հրայրք» բանաստեղծությունը, գրված 1902 թվականին: Այն պիտի դիտարկել 1890-ականներից հիմնականում Արշակ Չոպանյանի շնորհիվ Ֆրանսիայում սկիզբ առած հայասիրական շարժման համատեքստում: Պատահական չէ, որ հեղինակն իր քերթվածը ձևել է ֆրանսիացի բանաստեղծ, հայասեր Պիեռ Բիլարին²¹:

Նույն 1902-ին լիտվուհի *Գաբրիելե Պյատկավիչայտե-Բիտեն* (1861–1943) հրատարակել է «Տիգրան Երկաթ. արդարության հավատացյալը» էսսեն հրապարակախոս Տիգրան Երկաթի (Կարապետ Պիլեգիկյան) մասին, որը գրչով պայքարել է հանուն Հայկական հարցի միջազգայնացման և համիդյան կոտորածները Եվրոպայում ներկայացնելու գործի: «Տիգրան Երկաթ. այս անունը մեզ՝ լիտվացիներիս միանգամայն անծանոթ է: Սակայն որքան մոտ պետք է լինի այն մեզ», – այսպես է սկսել իր էսսեն լիտվուհի գրողը և ավարտել Երկաթի մահվան հիշատակմամբ 1899 թվականին՝ ավելացնելով. «Ամբողջ աշխարհի թերթերը հիշատակեցին նրա անունը, ահա և մենք՝ լիտվացիներս, թեկուզ և ուշացումով, նրա գերեզմանին այս փոքր նվերն ենք դնում: Եվ թող քո մասին հիշողությունները, ազատության հերոս, ապրեն հեռավոր, գուցե երբ միանգամայն անհայտ ժողովրդի մեջ»²²:

Գեղարվեստական գրականության մեջ քիչ է արտացոլվել հայկական կոտորածների հաջորդ փուլը՝ 1909 թվականի Ադանայի ջարդերը: Պատմական այս իրողության վերաբերյալ օտար գրականության մեջ մեզ հանդիպել է մեկ անդրադարձ՝ ֆրանսիացի *Էմիլ Էդվարդսի* 1920-ականներին գրած «Սիրանույշը, հայուհին» նովելը, որի գործողությունները կատարվում են 1909-ին, Ադանայում²³: Քիչ անդրադարձ է եղել նաև Բաքվի հայերի 1905 և 1918 թվականների կոտորածներին: 1893–1921

20 *Young Jack Harkaway in Armenia or A Fight with the Turks* by Bracebridge Hemming. Series: Wide Awake Library, vol. II, no. 1314 (New York: Street & Smith, 1897).

21 Բանաստեղծությունը Հենրիկ Բախչինյանի թարգմանությամբ տե՛ս *Ազգ.* 17.02.2023:

22 Գաբրիելե Պյատկավիչայտե-Բիտեն, «Տիգրան Երկաթ. արդարության հավատացյալը», *Անդին* 4 (2017), 48, 54 (թարգմանիչ՝ Ֆելիքս Բախչինյան):

23 Հայերեն թարգմանությունը տե՛ս *Հայրենիք*, 4.01.1925:

թթ. Կովկասում (նաև Բաքվում) բնակված լատվիացի դասական գրող *Էռնեստ Բիրզնիեկս-Ույսիտիս* (1871–1960) իր հայտնի գործերից մեկում՝ «Այդ օրերին» (1910) պատմվածքում, անդրադարձել է 1905-ին Բաքվում և նրա շրջակայքում առկա հայատյացությանը²⁴։ Ազերի գրող *Ջաֆար Ջաբարլին* (1899–1934) Հայաստանում, Վրաստանում և Ղարաբաղում կատարած շրջագայության տպավորության տակ գրել է «1905 թվականին» (1931) պիեսը, որտեղ ներկայացրել է Կովկասում առաջին ռուսական հեղափոխության ժամանակ «թաթարների» և հայերի միջև ազգամիջյան բախումների մթնոլորտը։ Բաքվի հայերի 1918 թ. ջարդերը հիշվում են բրիտանացի *Սթենֆան Շեֆարդի* (1945–2011) «Մոնտե Կառլո» վեպում (առաջին հրատարակությունը՝ 1989 թ.)։ Գլխավոր հերոսը ծնունդով բաքվեցի Հարի (Հովհաննես) Փիլիկյանն է, որը 1941 թ. բախման մեջ է մտնում գերմանացի նացիստների հետ։ Գրքի սկզբում նկարագրված է Հովհաննեսի մանկության այն չարաղետ դրվագը, երբ նա 1918 թ. Բաքվի հայերի կոտորածների ժամանակ կորցնում է ընտանիքը։

1915 թվականի Մեծ եղեռնի արտացոլումը

Անշուշտ, ներկայացվող թեմայով ամենամեծ թվով գրական ստեղծագործությունները վերաբերում են 1915 թ. և դրանից հետո կատարված իրադարձություններին։ Տարբեր ազգությունների գրողներ, որոնց մեջ շատ սակավ են եղել ականատեսները, անդրադառնալով հայոց ողբերգությանը, հետապնդել են ամենատարբեր նպատակներ՝ հայոց դատին պաշտպան կանգնելուց մինչև հայկական արհավիրքները որպես զուգահեռ, դրվագային թեմա կամ պատկերվող իրադարձությունների խորապատկեր գործածելը և կամ պարզապես բռնության զոհ դարձող հայի ու Հայաստանի սոսկական հիշատակումը։ Որոշ գրողների համար էլ Եղեռնը դարձել է ուշագրավ հիմք՝ սուր դիպաշարով պատում ստեղծելու համար՝ համեմված սիրային-արկածային մոտիվներով։ Հետաքրքրական է նաև օտարազգիների՝ հայության ընկալումը. ոչ միայն սոսկ նահատակ, ջարդվող, ցեղասպանվող և համայն աշխարհի անարդար վերաբերմունքին զոհ գնացող, այլև իրեն պաշտպանել կարողացող, հերոսական ոգու տեր մի ժողովուրդ։ Մեզ համար, անշուշտ, նախընտրելին օտարազգի գրողի՝ հայ ժողովրդի հերոսականությամբ հիացող գործերն են, թեև մյուս ստեղծագործությունների զուտ ճանաչողական արժեքը նույնպես չպետք է անտեսել։ Այդ կարգի ստեղծագործություններից նշենք անգլիացի *Ս. Վ. Քրոֆթսի* (հավանաբար՝ Ֆրիման Ուիլս Քրոֆթս, 1879–1957) «Զեյթունի հերոսը» (1910) և սիրիացի *ժառնգաղ Շահինի* «Հա-

24 Աշոտ Գրիգորյան, «Էռնեստ Բիրզնիեկս-Ույսիտիսը 1905 թ. Բաքվի և շրջակայքի հայոց ջարդերի մասին», <http://art-collage.com/post/%D4%B7%D5%BC%D5%B6%D5%A5%D5%BD%D5%BF-%D4%B2%D5%AB%D6%80%D5%A6%D5%B6%D5%AB%D5%A5%D5%AF%D5%BD-%D5%88%D6%82%D5%BA%D5%AB%D5%BF%D5%AB%D5%BD%D5%A8-1905-%D5%A9-%D4%B2%D5%A1%D6%84%D5%BE%D5%AB-%D6%87-%D5%B7%D6%80%D5%BB%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D6%84%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81-%D5%BB%D5%A1%D6%80%D5%A4%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6> (դիտվել է 16.11.2021)։

յաստանը դիմագրավում է զավթիչներին» քերթվածները, հույն թատերագիր Լ. Վառնալեսի «Թավեաթի սպանությունը» պիեսը (1929): Սկսած 1910-ականների վերջից համաշխարհային գրականության ամենատարբեր գործերում հանդիպում է Եղեռնից մազապուրծ հայ գաղթականի և վերապրողի կերպարը կամ նրա մասին այլևայլ հիշատակություններ: Հայ գաղթականներին բանաստեղծություններ են ձոնել հույն Վրեսակոս Նիկոֆորոսը (1912–1991, «Հայ գաղութ»), Աջան Միրիան գրական անվամբ հանդես եկած մի սիրիացի բանաստեղծ («Հայկական երթը»²⁵), իսկ իտալացի Մարիո Վիրջիլիո Գարեան (1881–1962), որը մինչ այդ Հրանտ Նազարյանցի հետ հանդես էր եկել Արշակ Չոպանյանի մասին իտալերեն գրքով, հրատարակել է մի ամբողջ բանաստեղծական ժողովածու՝ «Երազի նավորդներ. մարտիրոս Հայաստանին և նրա վերապրող հերոսներին» վերտառությամբ (1931)²⁶: Հայ գաղթականի կերպարը հասել է մինչև անգամ իսլանդական գրականություն: Իսլանդացի հանրածանոթ գրող, Նորելյան մրցանակի դափնեկիր Հալորդ Կիլյան Լաքսնեսի (1902–1998) «Նապոլեոն Բոնապարտը» պատմվածքի գործող անձանցից մի գեղջկուհի նկատում է մի շրջմուլիկի, որը «սկսեց ինչ-որ բան մոթմոթալ. կինը չկարողացավ որևէ բան հասկանալ, և հանկարծ մտածեց, որ նա այն հայերից է, որոնք այստեղ ապաստան էին փնտրում» փրկվելով թուրքերից»²⁷:

Հատկանշական է, որ արդեն 1915 թվականի դեկտեմբերի 15-ին շուրջ մեկ միլիոն հայերի ցեղասպանության մասին մի մասնավոր նամակում խոսել է անգլիական գրականության խոշոր դեմքերից Ջոն Գոլսուորթին (1867–1933). «Եթե որևէ մեկը դեռ տարակուսանքի մեջ է գերմանական հայեցակետի իսկական ցինիզմի վերաբերյալ, թող նկատի առնի, թե ինչպես նրանք մի կողմ կանգնեցին ու դիտեցին շուրջ մեկ միլիոն հայերի կոտորածը: Դա վերջ տվեց իմ տարակուսանքին: Բողոքի ո՛չ մի խոսք, ձեռքի ո՛չ մի շարժում»²⁸: Թերևս այս տպավորության արձագանքն է Գոլսուորթիի նշանավոր «Ասք Ֆորսայթների մասին» վիպաշարի վեպերից մեկում («Վարձու է տրվում») մի կես հայ, կես բելգիացի հերոսի՝ գեղարվեստի գործերի վաճառական պարոն Պրոֆոնի հանդես բերելը, որն օգնում է հայ որբերին: «Այդ բելգիացին, որի մայրն էլ, – ասես ֆլամանդական արյունը բավական չլինեք, – հայ է եղել:Աշխարհի կեսը սոված է: Ես մի փոքրիկ խումբ երեխաներ եմ կերակրում իմ մոր հայրենիքում, բայց ի՞նչ օգուտ»²⁹:

Սույն թեմային անդրադարձած հեղինակներն առավելապես դիմել են կարճ ար-

25 Ajan Syrian, "From the Near East: Armenian Marching Song," *Poetry, A Magazine of Verse* XII, no. V (1918), 233-234.

26 1931 թ. սփյուռքահայ մամուլում այս գրքի լույսընծայման մասին տեղեկության մեջ բանաստեղծի ազգանունը սխալմամբ գրվել է Կասես (տե՛ս «Իտալացի հայասեր բանաստեղծ մը», *Պայքար*, 27.02.1931):

27 Халлдор Лакнес, *Лилля* (Москва: Библиотека Огонек, 1955), 31.

28 *The Life and Letters of John Galsworthy* by H. V. Marrot (New York: Charles Scribner's Sons, 1936), 740-741, տե՛ս Կարալիս Սուրենյան, *Ճիշտը կյանքն է* (Երևան, «Ամբողջ գրույ» հրատ., 2001), 349:

29 Ջոն Գոլսուորթի, *Ասք Ֆորսայթների մասին, հատոր 2-3* (Երևան, «Հայաստան» հրատ., 1977), 487, 488 (թարգմանիչ՝ Կարալիս Սուրենյան):

ձակին և գլխավորապես Ցեղասպանության կենդանի զոհերի՝ կանանց և երեխաների ճակատագրերին: Ժամանակի ընթերցողին առավելապես հուզել են զգայացունց պատմություններն իրենց ընտանիքից, տնից և երկրից զրկված, մահվան քայլերքին մատնված, մահմեդական գերության մեջ հայտնված այրիների ու որբերի վիճակի մասին: Նման պատմությունների համար հիմք են հանդիսացել Առաջին աշխարհամարտի տարիներին եվրոպական տարբեր լեզուներով հրատարակված ականատեսների վկայությունները բովանդակող գրքերն ու գրքույկները, ինչպես նաև հեղինակների անձնական հանդիպումները վերապրածների հետ: Այս առումով հատկանշական են հայ ամուսնու ազգանունը կրող դանիուհի գրող *Ինգա Քոլին Նալբանդյանի* (1879–1929) հայապատում պատմվածքները: Մոտիկից ճանաչելով հայ ժողովրդին, ապրած լինելով Կոստանդնուպոլսում՝ Նալբանդյանը ձգտել է գրչով օգտակար լինել իրեն հարազատացած ժողովրդին: 1917 թ. հրատարակված և եվրոպական տարբեր լեզուներով թարգմանված նրա «Եղբորդ արյունն է գոչում» եռերգությունը գեղարվեստորեն ամբողջացնում է դանիուհի գրողի լսածն ու տեսածը հայոց Գողգոթայի վերաբերյալ: Ավելի ուշ, մեկ այլ դանիուհի գրող՝ *Դագնու Կյեսագորդը*, գրել է «Ինչ ենք մենք արել» վեպը՝ նվիրված Ցեղասպանությանը:

1917 թ. լույս է տեսել *Ջոզեֆ Հոփնսի* «Փառքի ճամփան» վեպը, որի հերոս Վիկտորը ծնողներին համիդյան ջարդերի ժամանակ կորցրած և Անգլիայում ապրող հայ դիվանագետ է: Վեպի գործողությունները կատարվում են Առաջին համաշխարհային պատերազմի հետնախորքին³⁰: 1920 թ. ֆրանսերենից անգլերեն թարգմանությամբ Նյու Յորքում լույս է տեսել *Շառլ Հ. Շնապսի* «Արշակը՝ փոքրիկ հայը» վեպը, որը նպատակ է ունեցել մանուկներին ներկայացնել Փոքր Ասիայի հայերի կյանքը և Հայոց ցեղասպանությունը հայ երեխայի միջոցով: Հեղինակը, հայության մասին հեռվից հեռու գրող շատ հեղինակների նման, հաճախ կատարյալ չիմացություն է դրսևորել հայությանն առնչվող շատ իրողությունների վերաբերյալ: Որոշ հայ հերոսների անունները մահմեդական են կամ հրեական (Դիզամ, Ջուսիֆ, Հաննա), ուսուցիչը երեխաներին պատմում է Վարդան Մամիկոնյանի մասին և նշում, որ նա կոչվում էր քրդերի դեմ, որոնց հրամանատարն էր Խան Մուստաֆան³¹ և այլն: 1920 թ. լույս է տեսել ամերիկուհի *Էմմա Սայքս Ռիչարդսոնի* (1871–1937) «Մի հայ օրհորդ» վեպը Եղեռնից վերապրող հայուհու մասին, որին հեղինակը չգիտես ինչու տվել է Կերինա Կիլովիչ անունը: Նմանատիպ հերոսուհի ունի ֆրանսիացի Ժան-Բատիստ Ռեբուրի՝ *Ժեհան դը Ռոհե* ծածկանվամբ հրատարակած «Շուշանիկ, երիտասարդ հայուհին» (1928) վեպը:

Հապոնացի լրագրող Շիմոդա Մասամին (1890–1959) 1926-ին *Շիմոդա Բարական* անունով հրատարակած «Շյումի հորո» գրքում ներառել է հորինված և իրական պատմություններ, որոնցից մեկը Բեռլինի պանդոկներից մեկում հանդիպած հայուհու մասին է: Վերջինս ճապոնացիներին պատմել է, որ ինքը հարուստ ընտանիքի

30 «Փառքի ճամփան», *Արձագանք Փարիզի*, 25.11.1917:

31 Տե՛ս Charles H. Schnapps, *Archag little Armenian* (New York, E. P. Dutton, 1920), 2: Վեպից մի հատված մեր թարգմանությամբ տե՛ս *Դրակյան թերթ*, 23.04.2021:

միակ զավակն է, ծնվել է Վանում և մինչև 16 տարեկանն ապրել է այնտեղ: 1915 թ. մայիսին թուրք զինվորները ընտանիքին բանտարկել են, ապա հայտարարել, որ տղամարդկանց պետք է տեղահանեն: Նրանք տղամարդկանց տարել են Մուրադ գետի ափ և հրացաններով ու սվիններով անողորմաբար սպանել են: Հայուհին այնուհետև պատմել է, որ կանանց և երեխաներին արտաքսել են արաբական անապատները, ճանապարհին շատերը մահացել են, իսկ ինքը մի փոքրիկ քաղաքում որպես հարձ վաճառվելուց հետո կարողացել է փախչել³²:

Լեհուհի Սոֆյա Նալկովսկան (1884–1954) «Չուկաս» վեպում (1927) հանդես է բերել Ցեղասպանությունից փրկված երկու հայ աղջիկների կերպարներ՝ հետպատերազմյան տրավմայի ենթատեքստում: Հեղինակը հանդիպել է երկու հայ կանանց Շվեյցարիայում, որոնց ճակատագիրը և տեսակետներն են ներշնչել գրելու իր հակապատերազմական վեպը³³: Ֆրանսուի Միրիամ Հարին (1869–1958) «Հայաստանի շուշանը» պատմվածքում նկարագրել է հայ որբուհիների կյանքը Միրիայի անապատում: Հայ կնոջ կրած փորձություններին է վերաբերում նաև ֆրանսիացի երեք այլ հեղինակների՝ Ռենե դ'Ասատրակի «Անահիտի մատանին» (1929), Պոլ Անրի-Բորդոյի³⁴ (1903–1999) «Տրապիզոնցի Անթառամը» (1930) և Ժ. Ռիկտր դը Բուրժիի «Տիգրանուհի» (1934) վեպերը: Անդրադառնալով երկրորդին³⁵, որը ֆրանսուի գրողի առաջին վեպն է՝ գրված 27 տարեկանում. արժանացել է «Ֆեմինա» մրցանակին: Միրիայում ճանապարհորդած Պոլ Անրի-Բորդոն հավաքել է վերապրողների վկայությունները և իր վեպում արտացոլել հայոց պատմության մի քանի կարևոր դրվագներ՝ 1915 թ. դեպքերը, 1918 թ. Հայաստանի Հանրապետության ստեղծումը: 1922 թ. Բեյրութ–Մարսել նավի վրա հեղինակը ծանոթացել է մի երիտասարդ կնոջ հետ, որը որքան գեղեցիկ, նույնքան էլ խորհրդավոր էր: Այդ կինը՝ Ժնևում կրթված տրապիզոնցի Անթառամը, 1915 թ. բռնագաղթի ճանապարհին վաճառվել է մի քրդի Դերսիմում: Չնայած էջնիկ և կրոնական տարբերություններին՝ նա սիրել է այդ քրդին, ունեցել նրանից որդի, որին անվանել է Հայկ: Սակայն Անթառամի պապը՝ Պետրոսը, որը մասնակցել է հայոց ազատագրական պայքարին և Հայաստանի Հանրապետության ստեղծմանը, գտնում է թոռնուհուն: Անթառամն ազատագրված է, սակայն որդուց հեռու լինելով՝ ընկնում է խոր ընկճախտի մեջ: Նրա ընտանիքը պախարակում է իր միությունը մահմեդականի հետ՝ համարելով այն դավաճանություն: Սակայն Անթառամը երդվում է ամեն գնով իր որդուն Դերսիմից բերել տալ Մարսել... Արևելքի իր ճանապարհորդական

32 Տե՛ս Աստղիկ Հովհաննիսյան, «Հայոց ցեղասպանությունը 19-րդ դարի վերջի և 20-րդ դարասկզբի ճապոնական մամուլում», *Ազգ.* 23.04.2021:

33 Dominika Maria Macios, “The Attitude of the Poles to the Armenian Issue in Press, Literature and Art from 1895 to 1939,” *Международная научная конференция “Художественная культура армянских общин на землях Речи Посполиты”* (Минск, 9–11 октября 2012) (Минск: Арт Дизайн, 2013), 100.

34 «Հայկական հարց» հանրագիտարանում այս արձակագրուհու անունը սխալմամբ տրված է Անրի-Բորդո Պոլ ձևով (տե՛ս *Հայկական հարց*, 252):

35 Վեպը հայերեն թարգմանությամբ լույս է տեսել եգիպտահայ մամուլում (տե՛ս Փօլ Հանրի-Պորոս, «Տրապիզոնցի Անթառամ», *Յուսաբեր*, 9.08–6.12.1930): Վեպի մասին տե՛ս նաև՝ «Տրապիզոնցի Անթառամ», *Յուսաբ.* 24.05.1930:

փորձառությունը, միացրած պատմագետի և վիպասանի ձիրքերի հետ, Պոլ Անրի-Բոր-դոյի գրչի շնորհիվ վերածվել է ընթերցանության արժանի մի գրական երկի՝ լի հետաքրքրական բախումներով և վառ կերպարներով: Պատահական չէ, որ «Տրապի-զոնցի Անթառամը» վերահրատարակվել է առաջին տպագրությունից 74 տարի անց՝ «Տրապիզոնցի անմահ կինը» վերնագրով³⁶:

Լեհ *Բոգդան Գեմբարսկին* (1905–1978), որը հայտնի է Հայոց ցեղասպանության հանրայնացման իր ջանքերով, գրել է «Մորիտորի» («Մահվան դատապարտվածները») վիպակը՝ նվիրված Մեծ եղեռնին³⁷: Նմանապես կանադուհի *Ադա Փիրս Չամբերսի* «Անատոլիական հովտում» ֆեմինիստական պատմավեպում (1955) գործողությունները կատարվում են երբեմնի հայկական Պարտիզակում, որի Ամերիկյան դպրոցում հիսուն տարի առաջ դասավանդել էին հեղինակը և ամուսինը: Կանադուհին ականատես է եղել Հայոց ցեղասպանությանը՝ այն ներկայացնելով Ազնիվ անունով երիտասարդ հերոսուհու ճակատագրի միջոցով:

Այլևայլ գեղարվեստական գործերում թռուցիկ հիշատակվում են Ցեղասպանությունն ու աշխարհացրիվ վերապրածները: Ամերիկացի *Ջոն Չիվերի* (1912–1982) «Ես գնում եմ Ասիա» պատմվածքի (1941) հերոսուհիներից մեկն ասում է «Համաշխարհային պատերազմից հետո, երբ Հայաստանում սատանան գիտի, թե ինչ էր կատարվում, մենք նրան հրավիրել էինք Երախտագիտության օրվա տոնին: Ճաշի ժամանակ մի րոպե ինձ թվաց, թե նա հնդկահավը հորդ գլխովը կտա: «Հնդկահավ, ասաց նա, դուք հնդկահավ եք ուտում, իսկ հայերն այնտեղ սովամահ են լինում»»³⁸: Սովյալ հայերը հիշվում են նաև *Ռութ Սթոունի* (1915–2011) «Եղեմ. Այն ժամանակ և հիմա» բանաստեղծության մեջ, որը ներկայացնում է 1929 թվականի մի հուշ, թե ինչպես Ինդիանապոլիսում

Մենք աշխատում էինք ժամը յոթից յոթը
Առանց արտաժամյա վճարման,
Ամենօրյա հավատարմություն խոստանալով,
Խղճալով սովահար հայերին....³⁹

Անգլիացի ականավոր գրող *Օլդոս Հաքսլիի* (1894–1963)՝ 1948 թ. գրված «Կապիկ և էություն» ֆանտաստիկ հակաուտոպիստական վիպակի հերոսն ասում է.

36 Paule Henry-Bordeaux, *L'immortelle de Trébizonde* (Paris: Thaddee, 2014).

37 Հայերեն հրատարակությունը՝ Բոգդան Գեմբարսկի, *Մահվան դատապարտվածները* (Երևան, Նաիրի, 1992), թարգմանիչ՝ Անահիտ Տեր-Ղազարյան:

38 Ջոն Չիվեր, *Բուլեթ պարկ* (Երևան, 1985), 188 (թարգմանիչներ՝ Անահիտ Հովսեփյան, Անահիտ Աղայան): Ի դեպ, առաջին նախադասությունը տողատակին ունի հետևյալ չափազանցված ծանոթագրությունը՝ հարիր խորհրդային տեսակետներին. «Խոսքը 1918 թ. իրադարձությունների մասին է, երբ Հայաստանում իշխանությունը զավթել էին հակահեղափոխական ուժեր, որոնք կազմավորեցին բուրժուա-նացիոնալիստական դաշնակցական կառավարություն: Թուրքիան զավթել էր Հայաստանի մեծ մասը: Հայաստանի արդյունաբերությունը ավերվել էր, կործանվել էին խաղողի տնկիները և այգիները: Ամենուրեք սով էր, ու մոլեգնում էր համաճարակը» (նույն տեղում):

39 Ruth Stone, *What Love Comes To. New and Selected Poems* (Copper Canyon Press, 2008), 302.

«Այո՛, բարեկամներս, հիշե՛ք, թե ինչպես դուք միանգամից վրդովվեցիք, երբ թուրքերը կոտորեցին հայերի՝ սովորականից ավելի շատ մարդկանց...»⁴⁰: Ավստրո-բրիտանական գրող, ազգությամբ հրեա *Էլիաս Կանետիի* (1905–1994) «Փրկված լեզու. մի երիտասարդության պատմություն» գերմաներեն ինքնակենսագրական եռագրության առաջին մասում (1977) հիշվում է իրենց տան հայ ծառան, որը փրկվել էր կոտորածից և հիշում էր գոհված քրոջը⁴¹: Ռուսագիր արևսագ գրող *Ֆազիլ Իսկանդերի* (1929–2016) «Սանդրոն Չեղեմից» պատմվածքի (1966) հերոսներից է Արևսագիայում հաստատված մի հարուստ հայ, որը «մի ժամանակ փախել էր Թուրքիայից, կոտորածից»⁴²:

Ադրբեջանական պոեզիայի դասականներից *Մամեդ Ռահիմը* (Մահմեդ Ռահիմ Աբբաս օղլի Հուսեյնով, 1907–1977), որը թարգմանել է Հովհաննես Թումանյանի և Ավետիք Իսահակյանի գործերից, գրել է բանաստեղծություններ՝ նվիրված Հայաստանին («Արարատ», «Հայաստանի այգիներում», «Սևան», «Երևան», «Սայաթ-Նովա»), նաև «Սայաթ-Նովա» պիեսը: Խորհրդային տարիներին նման երևույթը գրեթե պարտադիր էր իրար հետ եղբայրություն ձևացնող ժողովուրդների համար: Սակայն զարմանք է հարուցում Ռահիմի «Արարատ» բանաստեղծությունը (1952): Նախ, այն գրվել և տպագրվել է ստալինյան ժամանակներում, երբ անգամ հայ բանաստեղծներին հեշտորեն չէր տրվում Արարատ երգելը: Եվ ապա՝ ադրբեջանցի բանաստեղծն իր ստեղծագործությամբ հիշեցնում է իր եղբայրակից թուրքերի՝ յաթաղանով իրականացված ոճրագործությունը, հարցնում՝ «Թուրքիայում քանի նոր Կոմիտասներ են թաղել շրթներին երգն անավարտ» և ավարտում՝ լիահույս ազատության կարոտով վառվող Արարատի հոգեթով ապագայի վերաբերյալ... Ավելորդ չենք համարում ամբողջությամբ մեջբերել այդ բանաստեղծությունը՝ Համո Սահյանի թարգմանությամբ.

ԱՐԱՐԱՏ

Ինչ ես գիշեր ու ցերեկ այդպես քո շուրջը նայում,
Ինչ ես խորհում դու այդպես, ճվ ալեհեր Արարատ,
Կրծքիդ ամպերն են նստել, և մրրիկներն են վայում,
Եվ դու գլուխդ ես պահել երկնքի մեջ անաղարտ:

Քեզ, Արարատ, նորօրյա Երևանից եմ նայել,
Չեն ոլորվել լանջերիդ կածաններն իմ ոտքի տակ,
Քեզ, Արարատ, նորօրյա Երևանից եմ նայել,
Որը բարձր է ավելի, քան քո գագաթը սպիտակ:

40 Aldous Huxley, *Ape and Essence* (Harper & Row, 1972), 100.

41 Տե՛ս Ալբերտ Ա. Մակարյան, Լիանա Ա. Սաֆարյան, «Տխուր հայր: Հատվածներ Էլիաս Կանետիի ինքնակենսագրական հիշողությունից», *Վեմ* 2 (2011), I-XV:

42 Фазиль Искандер, *Сандро из Чегема* (Москва: Советский писатель, 1991), 12.

Պատմի՛ր ինձ, ճվ Արարատ,
թե Թուրքիայում քանի նոր
Կոմիտասներ են թաղել – շրթներին երգն անավարտ,
Քանի մայրեր կան հիմա Զոհրաբայի պես սգվոր,
Քանի Սուրհի են խեղդել...
պատմի՛ր ինձ, ճվ Արարատ:

Պատմի՛ր ինձ, ճվ Արարատ, յաթաղանից վիրավոր,
Քանի մարդ է թափառում
աշխարհներում հեռավոր,
Քանի մարդ է անծանոթ ճամփաներով թափառում,
Եվ ուր գնում, սրտի մեջ Վանն ու Սևանն է տանում:

Ո՛վ Արարատ, Արարատ,
բարձրաբերձ ու վեհանիստ,
Հավատում ես, ինչպես ես, ապագային հոգեդով,
Այնքան ծանր ես դու,
սակայն վիշտդ ծանր է քեզանից,
Վառվում ես օր ու գիշեր ազատության կարոտով⁴³:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ հիշատակումները որպես պատմական իրողություններ հանդես են գալիս բոլորովին անսպասելի մի ժանրում՝ ֆանտաստիկայում. խոսքը շվեդ *Սեմ Լոնդվալի* (ծն. 1941) երկու ստեղծագործության մասին է: Նրա «Վասյա Ամբարցուրյան. զրոսանք լաբիրինթոսում» վեպի⁴⁴ (1990) գլխավոր հերոսուհին անդրկովկասյան Չիր հայկական անկլավում ծնված Վասյան է: Հեղինակը, պատմելով նրա մանկության մասին, մասնավորապես նշել է.

Երբ Վասյան 14 տարեկան էր, 300 հազար հայ սպանվեց թուրքական ջոկատների կողմից քրդական հրոսակախմբերի օգնությամբ: Կոտորածները շարունակվեցին, մինչև որ Թուրքիան իրագործեց հայկական հարցի իր վերջնական որոշումը՝ բոլոր հայերին սպանելով իրենց երկրի մի մասում: Այդ ժամանակ Վասյան վաղուց թողել էր իր դժբախտ հայրենիքը: ...Չիրը գտնվում էր մի կետում, որտեղ միանում էին ռուսական նահանգներ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը: Այստեղ կոտորածներ չեն եղել, գոնե առայժմ: Մահմեդական ադրբեջանցիները, որ կիսով չափ թուրքեր էին և

43 *Գիտե՛ս երկիրն այս. բանաստեղծություններ* (Երևան, «Հայաստան» հրատ., 1970), 76: Այս թարգմանությունը սկզբնապես տեղ է գտել Ռահիմի հայերեն ժողովածուներում՝ *Հայրենի եզերք* (1954) և *Բանաստեղծություններ* (1964):

44 Sam J. Lundwall, *Vasja Ambartsurian, en promenad i labirinten* (Stockholm: Fakta & fantasi, 1990).

հետևաբար՝ կիսով չափ գազաններ, հնարավորության դեպքում մշտապես խաբել են՝ հարձակվելու համար հայկական անկլավի վրա:

Այս վեպի հերոսուհու ծոռան կերպարը Լուսինյան արդեն կերտել էր իր «Նախաճաշ ավերակներում» վեպում⁴⁵ (1988), որի երկու գլուխը նվիրված է Հայաստանին: Այս վեպում ամենից զարմանալին այն է, որ շվեդ հեղինակը պատկերել է ապագա միացյալ Հայաստանը, որտեղ ընդգրկված են ներկայիս Թուրքիայի տարածքում հայտնված հայկական հողերը: Ահա մի քանի բնորոշ հատված.

Էրզրումը բավական քաղաքակրթված էր, այնտեղ համալսարան կար, և ժողովուրդը խոսում էր հայերեն: Հետո եկավ Անատոլիան և իսկական Թուրքիան, որ դեռ մնացել էր միջնադարում: Նենան ազգությամբ հայ է. հայերի համար թուրքերը և նրանց հայդուկ քրդերը սատանայից և գազանից վատ են:

– Ես չգիտեմ ինչ են այնտեղ քո հնարավորությունները, – ասաց Մարիաննան, – բայց հիմա այնտեղ են Հայկական ԽՍՀ-ն և Անատոլիական ԽՍՀ-ն՝ ընդհուպ մինչև Բոսֆորը: Կարմիր բանակը 1930-ական թվականներին ազատագրել է ողջ Փոքր Ասիան⁴⁶:

Նմանապես 20-րդ դարի ամերիկյան մեծանուն գրողներից *Ջոն Ափդայքի* (1932–2009) «Ժամանակի ավարտին» (1997) ֆանտաստիկ վեպի հերոս Բենը խորանում է Փոքր Ասիայի պատմության մեջ, տեղեկանում, որ «տարածաշրջանի հայերը հավատարիմ մնացին քրիստոնեությանը, բայց Առաջին աշխարհամարտի տարիներին վայրագորեն մորթվեցին»⁴⁷:

1960–1970-ական թթ. բրիտանական պոեզիայի վերածննդի կարևոր դեմքերից մեկը համարվող անգլիացի բանաստեղծ *Լի Հարվուդի* (1939–2015) ժառանգության մեջ կարևոր տեղ ունի «Երկար սև քողը կամ Հայաստանի երազները» չափածո ստեղծագործությունը: Հեղինակն իր տողերն ընդմիջելով հանդերձ եղեռնի վերաբերյալ պատմական տվյալների շարադրանքով՝ նշում է, որ իր բանաստեղծությունն առավելապես իր պատկերացրած Հայաստանի գովերգն է: Ավելին, այն սիրային բանաստեղծություն է, որտեղ հեղինակը դիմում է կյանքի ընկերուհուն՝ ասելով, որ «Սա կարող էր կատարվել քեզ հետ, իմ սեր, և մեր որդու հետ», այսպիսով շեշտելով հայոց ողբերգության համամարդկային բնույթը և կրկին հաստատելով այն վաղեմի ճշմարտությունը, որ ուրիշի վիշտ չի լինում:

45 Sam J. Lundwall. *Frukost bland ruinerna* (Stockholm: Fakta & fantasi, 1990).

46 Այս վեպերի մասին մանրամասն տե՛ս մեր «Հայաստան-Սկանդինավիա. պատմամշակութային առնչություններ» գրքում (Երևան, ԳԱԹ հրատ., 2003), 89-92:

47 Artsvi Bakhchinyan, “John Updike (1932–2009) and the Armenians,” *Հայկագեան հայագիտական հանդես* 42/2, (2022), 573-574.

Միանշանակ կարելի է ասել, որ Հայոց եղեռնի թեմայով լավագույն գրական ստեղծագործություններից է ամերիկյան թատերագիր *Ռիչարդ Կալինոսկիի* (ծն. 1950) «Գազանը լուսնի վրա» պիեսը (1995), որը թարգմանվել է 17 լեզվով, հաջողությամբ բեմադրվել աշխարհի 35 երկրում: Նշենք, որ հետաքրքրական զուգադիպությամբ (օրինաչափությամբ) Հայոց ցեղասպանությանն առնչվող երեք լավագույն գրական գործերի հեղինակները հրեաներ են. Կալինոսկիից բացի նկատի ունենք նաև Ֆրանց Վերֆելին և «Վերջին մտքի հեքիաթը» վեպի հեղինակ *Էդգար Հիլզենրաթին* (1926–2018):

Ցեղասպանությանն անդրադարձող պատմվածքներ կան սիրիացի գրող Ֆաուադ Մըզէյեթի «Հայկական հարսանիքը» պատմվածքում (Հալեպ, 1993)⁴⁸: Կանադացի թատերագիր և բեմադրիչ *Ռոբերթ Ասթլը* «Պարոն Զենոբի գլխարկները» թատերախաղում (1998) ներկայացրել է եղեռնից մագապուրծ, այնուհետև երկրորդ աշխարհամարտի ժամանակ կնոջն ու դստերը կորցրած Վահան Փոլադյանի (1902–1982) ճակատագիրը: Այդուամենայնիվ, պիեսը ոչ այնքան ողբերգության, որքան մարդկային ստեղծագործ մտքի զորության մասին է:

Անդրադարձները 21-րդ դարում

21-րդ դարում ևս Հայոց ցեղասպանության, վերապրողների և հիշողության թեման շարունակում է հուզել տարբեր ազգությունների հեղինակների: Բրիտանական ճանաչված գրող *Լուի դը Բերնիերը* (ծն. 1954) Թուրքիայի իրականությունը պատկերող «Թներ չունեցող թռչուններ» վեպում չէր կարող թեկուզ թռուցիկ չանդրադառնալ հայոց կոտորածներին: Դարձյալ սիրված և «գործող» հնարք է կին հերոսի միջոցով պատմության անդրադարձը. կանադուհի *Լինդա Գանն* իր «Սոսի» վեպում (2005) ներկայացրել է ոչ միայն խառնամուսնության զավակի հոգեբանական ապրումները ազգային և մշակութային հողի վրա (հերոսուհին կես հայ, կես թուրք է), այլև համակողմանիորեն պատկերել պատերազմի, ցեղասպանության, գաղթի ողջ դաժանությունը և դրանց ազդեցությունը հետագա սերունդների վրա: Իտալացի *Պաոլո Ռոսսին* (ծն. 1980) թեմային անդրադարձել է պատկերապատումի (գծավեպ, կոմիքս) ձևաչափով. հատորը վերնագրված է հայերեն և իտալերեն՝ «Մեծ եղեռն. մեծ չարիք» (2007. թարգմանաբար լույս է տեսել Ֆրանսիայում, Իսպանիայում, Կորեայում և Նիդեռլանդներում): Նույն հեղինակը հրատարակել է նաև «Արարատ՝ առեղծվածի լեռը» վեպը, որի հերոս Ազատ Վարդանյանը վերելք է կատարում Արարատ, իսկ ծեր քուրդ հովիվները նրան առաջնորդում են ամայի ու անհայտ վայրեր, որտեղ 1915 թվականին տեղի են ունեցել հայերի կոտորածները:

Ամերիկացի *Էդուարդ Սենթ-Իվանի* «Սև ասպետի աստվածը. սարսափի անթուղ-գիա» ժողովածուում (2006) կա Հայոց ցեղասպանության վերապրողի հորինովի մի

48 Տե՛ս մի նմուշ՝ Ֆաուադ Մըզէյեթ, «Հայկական հարսանիքը», *Կամար* 6 (2008), 47–49 (թարգմանիչ՝ Հուրի Ազեգեան):

կերպար: Այսպիսով, ցեղասպանության թեման մուտք է գործել նաև սարսափ գրականության ժանր: Ավելի նախընտրելի է կանադուհի գրող *Մարշա Ֆորչուք Սկրիպուչի* (ծն. 1954) ընտրությունը, որը հայոց ողբերգության թեման դարձրել է մասնական գրականության թեմա: Նկատի ունենք նրա՝ նույնպես 2006 թ. հրատարակված «Արամի ընտրությունը» գիրքը, որն, ի դեպ, գլխավորել է Կանադայում երեխաների համար գրված «Տարվա լավագույն գիրք» մրցանակաբաշխությանը ներկայացված ցուցակը: Երկրորդից հինգերորդ դասարանների աշակերտների համար նախատեսված գրքի իրադարձությունները կատարվում են հետցեղասպանության տարիներին՝ 1920–1922 թթ., երբ որոշ հոգատար անհատներ Կանադայում հնարավորություն են ընձեռում Հունաստանի որբանոցներից 8-12 տարեկան 110 անապաստան տղաների տեղափոխելու Կանադա և բնակեցնելու Օնտարիոյի Ջորջթաուն քաղաքում: Այդ որբերը, պատմությանը հայտնի որպես «Ջորջթաունի տղաներ», ուսում են ստացել, մեծացել և դարձել հասարակությանը պիտանի քաղաքացիներ: Նրանցից մեկն էլ գրքի հերոս Արամն է, որն ականատես է եղել Օսմանյան Թուրքիայում շատերի, այդ թվում՝ իր ծնողների սպանությանը և ընկել է որբանոց Հունաստանում:

Էստոնացի գրող *Կալլե Կասպերը* (ծն. 1952) «Հայուհիները» վիպակ-էսսեում, խոսելով հայ կանանց ազգային նկարագրի մասին, կատարել է ուշագրավ ընդհանրացումներ՝ անդրադառնալով նաև Յեղասպանության թողած հետքերին:

Կարծում եմ՝ նման փոխօգնության արմատները հարկ է փնտրել հայերի դժվար ճակատագրի մեջ: Երկրաշարժից առաջ նրանց մեկ անգամ չէ, որ հարվածել է առավել սարսափելի աղետ ի դեմս բարբարոսների՝ օսմանցիների, երիտթուրքերի ու քրդերի: Եթե Էստոնիայում դժվար է գտնել մի ընտանիք, որին չի հասել անցյալ դարի կեսերին մի վրացու կատարած վայրագությունները, ապա հայերը մինչև հիմա ուշքի չեն եկել 1915 թվականի Եղեռնից: Իրականում այդ երկու աղետներն անհարմար է համեմատել, քանի որ Ջուդաշվիլին, չնայած իր գործած հանցանքներին, էստոնացիներին զանգվածային չի ոչնչացրել որպես ժողովուրդ. ուղղորդվելով սոցիալիստական հեղափոխության դոգմաներով, նա ընտրում էր հարուստներին ու հայտնիներին, դասակարգային թշնամիներին՝ իր ահաբեկչությունը քողարկելով անգամ ինչ-որ կեղծ դատարանով, իսկ թուրքերը հայերին սպանում էին առանց ընտրության, բոլորին, անխտիր, բռնաբարում էին կանանց, ողջակիզում, կտրում էին տղամարդկանց վերջույթները... այսինքն՝ վարվում էին ավելի դաժան, քան գերմանացիները հրեաների հետ: Որքան դաժան է անցյալը, այնքան ավելի է միավորում մարդկանց. համենայն դեպս, հայուհիների խոշոր աչքերում մինչ օրս էլ վախ ու տխրություն կա, իսկ նրանց վարքը բացահայտում է կյանքը գնահատելու ու սիրելու ունակությունը⁴⁹:

49 Կալլե Կասպեր, Հայուհիները: Kalle Kasper, *The Armenian Women*, Kalle Kasper, *Le donne armene*: Երևան, «Գրական հայրենիք», 2025, էջ 41 (հայերեն թարգմանությունը՝ Կարինե Խոդիկյանի):

Իսպանիայում Հայոց ցեղասպանության իրողությունը ճանաչել տալու գործում որոշակի դեր են խաղացել կատալոնացի *Մարիա Անխելա Անգլադայի* (1930–1999) «Արամի հուշատետրը» վեպը (1997), որը պատմում է 20-րդ դարի սկզբին մի հայ ընտանիքի ողիսականի մասին⁵⁰ և *Գոնսալո Գուարչի* (ծն. 1945) «Հայոց կտակը» ու «Հայկական տոհմաժառը» վեպերը (2008): Այս ստեղծագործությունները հայերեն և ռուսերեն թարգմանությունների շնորհիվ որոշակի ճանաչում ունեն հայ ընթերցողի շրջանում: Գուարչի վեպերի գործողությունները կատարվում են 1915–1916 թվականներին, ներկայացված հանգամանքները, դրվագները, վայրերը և փաստերը ճշմարտացիորեն արտացոլում են Ցեղասպանության պատմությունը և դարաշրջանը, թեև հերոսները հորինված են:

Գեղարվեստական գրականության մեջ արտացոլվել է նաև 1988–1990 թթ. Ադրբեջանի հայերի հանդեպ իրականացված ցեղասպանությունը: Ադրբեջանցի գրող *Աբրահամ Այլիսլիի* (ծն. 1937) «Քարե երագներ» ռեպլիեմ-վիպակը (2007) պատմում է 1919 թվականին Ագուլիսում և 1989 թվականին Բաքվում ադրբեջանցիների կազմակերպած հայկական ջարդերի մասին: Հայտնի է, որ այդ պատճառով 2013 թվականին Ադրբեջանի նախագահի հրամանագրով Այլիսլին զրկվել է «Ադրբեջանի ժողովրդական գրող» կոչումից և պետական կենսաթոշակից: Ռուս գրող *Իգոր Անգլերի* (ծն. 1964) «Լսող սիրտը» վեպի առաջին հատորում (Մոսկվա, 2020) հիշատակվում է Բաքվի մի հայ ընտանիք, որը փորձում էր փախչել 1990 թ. ջարդից: Վեպի հերոսներից է Էդուարդ Հովսեփյանը, որի ճակատագրին է հաղորդակցվում ընթերցողը: *Արկադի Մաքսիմովը* (ծն. 1934) մի շարք ստեղծագործությունների հեղինակ է, որոնք շոշափում են հայ ժողովրդի ճակատագիրը: «Խենթություն» պատմվածքում նա փորձ է արել վերլուծել և գեղարվեստորեն ըմբռնել հայ-ադրբեջանական հակամարտությունը, թե ինչպես է այս ազգամիջյան աղետը ազդել բնիկ բաքվեցիների՝ հայերի և ադրբեջանցիների ճակատագրի վրա: Իսկ «Սև կոռունկներ» վեպ-առակում Մաքսիմովը պատմում է 1915 թվականի ցեղասպանության մասին: Վեպում մատնանշվում են նաև 20-րդ դարի այլ ազգամիջյան հակամարտություններ, որոնք արյունոտ անիվի պես անցել են Եվրոպայով: Վեպում արտացոլված է նաև Կոմիտասի ճակատագիրը (Մաքսիմովը նաև կոմպոզիտոր է, որ գրել է «Շեփորի կոնցերտ. Շնորհակալություն, Հայաստան» ստեղծագործությունը):

21-րդ դարում սույն թեմայի զարգացման մի նոր աստիճան են նշանավորում մի շարք թուրք գրողների երկերում հայոց հանդեպ իրենց նախնիների կատարածի վերաբերյալ երբեմն հպանցիկ, երբեմն՝ ուղղակի հիշատակումները: Սույն թեմայով կատարված հետազոտությունների մեջ թուրքական արդի գրականության հանրահայտ անունների կողքին (*Օրհան Փամուք*, *Էլիֆ Շաֆաք*) մոռացվում է հիշատակել ազգությամբ քուրդ արձակագիր Սերդարին (ծն. 1961), որն առաջինն է թուրք արդի գրականության

50 Վարդան Մատթեոսեան, «Թէ ինչպէ՛ս Դ. Վարուժանի որդին հասաւ... Սպանիա», *Յաւաջ*, 10.02.1998: Տե՛ս նաև նույնի, *Գրական-քանասիրական ուսումնասիրություններ* (Անթիլիաս, տպ. Անթիլիասի կաթողիկոսարանի, 2009), 351-353: Վեպը լույս է տեսել իտալերեն և ֆրանսերեն թարգմանությամբ, վերջինից էլ Գրիգոր Ջանիկյանը կատարել է հայերեն թարգմանությունը (Մարիա Անխելա Անգլադա, *Արամի հուշատետրը*, Երևան, 2008):

մեջ հանդես եկել Հայոց ցեղասպանությանը նվիրված առանձին հատորով: Եղեռնապարծ հայուհի տառից լսած 13 պատմությունները Սերդարն ամփոփել է «Տատիկիս հեքիաթները» գրքում (1991, Ստամբուլ), որը նվիրված է «հայ զոհերի հիշատակին»: Գերմանաբնակ թուրք այլախոհ գրող (գերմանագիր և թուրքագիր) *Դոդան Աքսնլըն* (1957–2021), բազմիցս բարձրաձայնել է Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտության մասին: Այդ թեմաները շոշափված են նրա «Աննայի լուրջությունը» պիեսում, «Մադոննայի վերջին երազանքը» և «Ահեղ դատաստանի դատավորները» վեպերում⁵¹: «Աննայի լուրջությունը» Սաբիհա անունով թուրքական ազգայնական շարժման ակտիվիստ մի աղջկա մասին է, որը մոր մահից հետո բացահայտում է իր հայկական արմատները և պայքարում է՝ հարմարվելու համար իր նոր ինքնությանը: Հրանտ Դինքի սպանությունը նրան առաջնորդում է բացահայտել 1915-ի ցեղասպանությունը:

Վերջին տասնամյակում ասպարեզ իջած գեղարվեստական գրականության նմուշներից հիշենք հետևյալները: Գերմանացի գրող *Յոխեն Մանգելսենը* (ծն. 1942) հեղինակ է «Օֆելյայի երկար ուղևորությունը դեպի Բեռլին» և «Հայաստան մոլորակ» (2011) գրքերի: Առաջին վեպը⁵² հիմնված է հեղինակի հայ կնոջ նախնիների եղեռնյան փորձառության վրա: Ըստ գրողի՝ հայերի մասին իր առաջին գիրքը գրելու դրդապատճառն այն է եղել, որ իր երկրում շատ է խոսվում Հոլոքոսթի մասին, բայց խոր լուրջություն է տիրում 1915 թ. ցեղասպանության շուրջ, որի մեջ, ըստ գերմանացի գրողի, պատասխանատվություն է կրում նաև Թուրքիայի դաշնակից Գերմանիան: 2004 թ. ազգությամբ ուկրաինացի *Վիտալի Յանկոն* ԱՄՆ-ում հրատարակել է «Խոստում ծովում» անգլերեն վեպը՝ Ցեղասպանությունը պատկերելով տարածված հնարանքով՝ հայ ընտանիքի ճակատագրի միջոցով: Նույնը վերաբերում է «Նեմեսիսի օրերը» վեպին⁵³ (2014), որի հեղինակը՝ գերմանացի գրող և երաժիշտ *Մարթին ֆոն Արնթոր* (ծն. 1968), Ցեղասպանության մասին պատմում է քաղաքական թրիլերի ժանրով: Հերոսը խուզարկու Անդրեաս Էքարթն է, որը զբաղվում է «Նեմեսիս» գործողության հետախուզմամբ: 2011 թ. Բի Բի Սի 4 ռադիոկայանը հեռարձակել է ավստրալացի թատերագիր *Լուիս Նովրայի* (ծն. 1950) «Խավարի լույսը» թատերախաղը, որը ներկայացնում է Առաջին աշխարհամարտի տարիներին Խարբերդի ամերիկյան հյուպատոս, Եղեռնի ականատես Լեալի Դեյվիսի գործունեությունը և Խարբերդի պատմությունը: Ֆրանսիացի դերասան և գրող *Միշել Ռենոն* (ծն. 1959), որ հանդես է գալիս Միշել Երևան բեմական անվամբ, հրատարակել է «Դեր-Զորի ճանապարհներին. հայկական հուշագրություն» գիրքը (2008)⁵⁴, իսկ գերմանացի բանաստեղծուհի *Հայդե Ռիքլ* Մեծ եղեռնի թեմայով գրել է «Իմ հյուրանոցն աստղ չունի» բանաստեղծությունը:

51 Տե՛ս հայերեն թարգմանությունը՝ Դոդան Աքսնլը, *Ահեղ դատաստանի դատավորները* (Երևան, «Նոյան տապան» հրատ., 2017, թարգմանիչ՝ Սոնա Զաքարյան):

52 Տե՛ս հայերեն թարգմանությունը՝ Յոխեն Մանգելսեն, *Օֆելյայի երկար ուղևորությունը դեպի Բեռլին* (Երևան, «Հայաստան» հրատ., 2003, թարգմանիչ՝ Ռուզան Յորդանյան):

53 Տե՛ս Martin von Arndt, *Tag der Nemesis* (Ars Vivendi Verlag Cadolzburg, 2014):

54 Տե՛ս Michel Reynaud, *Sur les chemins de Dér Zor : Mémoire arménienne* (Paris, Éditions de l'Amandier, 2008):

2015 թ. Ցեղասպանության 100-ամյակի առթիվ ի հայտ են եկել նոր գրական գործեր, որոնցից հիշենք հետևյալները: Անգլուիի *Իվ Մաքիսի* «Ուրցե նամակները»⁵⁵ վեպի հերոսուհի Կատերինան իր Մարիամ տատիկի մահից հետո ժառանգում է նրա համեմունքների փայտե տուփը, որը պարունակում է հայերեն նամակներ և օրագրեր: Ծանոթանալով դրանց ողբերգական բովանդակությանը՝ Կատերինան ճամփորդում է Կիպրոս և այլ վայրեր՝ փորձելով գտնել տատիկի կենսագրության պակասող մասերը: Իռլանդուիի *Մարտինե Մադենի* «Անուշ» վեպը⁵⁶ (2014) զինվորական հոսպիտալում աշխատող հայուհու և նրան փրկած թուրք սպայի սիրավեպի մասին է: Նմանատիպ սիրավեպ է առկա նաև հույն գրող *Յորդոս Բասնթիպոս Տրոխուպուլոսի* «Je suis armenien» («Ես հայ եմ», 2021) ֆրանսերեն վերնագրով վեպում: Առաջին գլուխը վերաբերում է Սողոմոն Թեկլիրյանի դատավարությանը, երկրորդը՝ Աբդուլ Համիդ Բ-ի դեմ 1905 թվականի հուլիսին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած մահափորձին: Այնուհետև վեպը զարգանում է օսմանյան բանակի թուրք սպայի և հայուհու սիրո պատմությամբ:

Հայկական թեմային անդրադարձել է նաև շվեյցարացի գրող, մի շարք մանկապատանեկան վեպերի հեղինակ *Ռոլան Գոդելը* (ծն. 1958)⁵⁷ կես հայազգի բանաստեղծ Վահե Գոդելի որդին՝ «Անուշի աչքերի մեջ. Հայաստան-1915»⁵⁸ (2015) վեպով: Խորվաթ բանաստեղծ *Նիկոլա Շիմիչ-Տոնինը* (ծն. 1962) գրել է «Հշմարտության ձեռքերը» ծավալուն բանաստեղծությունը «Ապրիլի 24-ի Հայոց ցեղասպանության հիշատակի օրվան» ենթավերնագրով⁵⁹: Ամերիկացի հոգեբան *Ջերի Մ. Բրոդերը* (ծն. 1955) 2019 թ. լույս է ընծայել իր առաջին վեպը՝ «1915-ի ստվերները», որը քննում է Եղեռնի ազդեցությունը վերապրողների կյանքում: Գործողությունները տեղի են ունենում 1953 թ., Քալիֆորնիայում, Ցեղասպանությունը վերապրածի որդիների և քուլեջի թուրք ուսանողների հանդիպումը ստիպում է գլխավոր հերոսներից յուրաքանչյուրին դժվար որոշումներ կայացնել: Հերոսը՝ Միհրան Սերոբյանը, փորձում է հաղթահարել անցյալի հիշողությունները և ընդհանուր լեզու գտնել թուրքերի հետ: Թեման կրկին շաղախված է հայի և օտարի սիրո պատմությամբ՝ ինքնության, տարագրության, նոր միջավայրին հարմարվելու խնդիրների արձարծումներով:

Թուրք հեղինակ *Մուրաթ Աթաշի* (ծն. 1971) «Արմինե» վեպը⁵⁹ (2017) պատկերում է 20-րդ դարի սկզբին Սեբաստիայի շրջանի գյուղերից մեկի հայերի տարագրության, գաղթի ճանապարհին պատահած սահմոկեցուցիչ իրադարձությունների դրվագները՝ մարդկային խեղված ճակատագրերի ողբերգական պատմություններով: Գլխավոր հերոսները Արմինեն ու նրա սիրեցյալ Ջիվանն են, որոնց սերը Ցեղասպանության

55 St'u Eve Makis, *The Spice Box Letters* (Dingwall: Sandstone Press Ltd, 2015):

56 Հայերեն թարգմանությունը՝ Մարտինե Մադեն, *Անուշ. արգելված սիրո պատմություն* (Երևան, «Գիտանք» հրատ., 2016, թարգմանիչ՝ Ալեքսանդր Աղաբեկյան):

57 St'u Roland Godel, *Dans les yeux d'Anouch: Arménie* (Paris: Gallimard Jeunesse, 2015):

58 Տե՛ս Լիլիթ Ղազարյանի՝ անգլերենից կատարած թարգմանությունը՝ Նիկոլա Շիմիչ-Տոնին, «Հշմարտության ձեռքերը», *ԳեղArm* 63 (2019), 64-67:

59 Հայերեն թարգմանությունը՝ Մուրաթ Աթաշ, *Արմինե* (Երևան, «Անտարես» հրատ., 2022, թուրքերենից թարգմանությունը՝ Նարինե Թադևոսյանի):

հետևանքով մնում է անավարտ: Վեպում Աթաշը հակադրում է փաստերը թուրքական իշխանությունների պաշտոնական պատմագրության այն թեզին, որ իբր թուրքերը մեղավոր չեն հայերի կոտորածների համար, որոնք իբր զոհվել են տեղահանության դժվարությունների ու պատերազմի հետևանքով: Հեղինակը բացահայտել է պատմական ճշմարտությունը և, ինչպես հայտնել է «Հուրիեթ» օրաթերթին, ճշմարտությունը որոնելիս հանդիպել է Ցեղասպանությունը վերապրած սփյուռքահայերի հետ ու լսել նրանց պատմությունները:

Քննվող թեման շարունակում է հետաքրքրել նաև թատերագիրներին: Ֆրանսիացի *Լանսլոտ Համելեն* (ծն. 1972) «Հայաստանի մեղուն» թատերախաղում⁶⁰ (2017) նրբանկատորեն և ճշգրտորեն իրականացրել է նոր սերնդի հանդիսականին Հայոց ցեղասպանության վերաբերյալ իրազեկումը: Իտալացի գրող, բեմադրիչ *Տուչո Գուիչարդինին* (ծն. 1966) «Դատապարտյալը մեղավոր չէ» թատերախաղը գրել է՝ ներշնչված Սողոմոն Թեկլիրյանի դատավարությունից: Ամերիկացի *Ալեքսանդր Դինելարիսի* (ծն. 1968) «Կարմիր շունը ռոնում է» պիեսում (2011) հայ հերոսուհի Ռոուզը տիպիկ զոհ է, անցյալի գերի վերապրած ականատես, որին տանջում է թուրք զինվորների կողմից կտտանքների ենթարկված լինելու հիշողությունը:

Ամերիկացի *Գլեն Չեսնաթը* «Մենք՝ հայերս, վերապրեցինք. 1920-ի Մարաշի մարտերը» գիրքը և գրական ժառանգությունն ամփոփող հատորը բազմաթիվ պատմություններ են պարունակում հայերի (և ոչ միայն) վերապրելու կամքի մասին: Չեսնաթի հայկական հետաքրքրությունների աղբյուրը կյանքի ընկերուհին է՝ ամերիկահայ Էլենը: Ռուսագգի ֆրանսիացի գրող *Անդրեյ Մակինը* (ծն. 1957) «Հայ ընկերը» (2021) վեպում պատմում է Սիբիրում ապրող հայ և ռուս դեռահասների բարեկամության մասին: Հերոսը՝ Վարդանը, ցավագին դիտում է 1913 թվականին արված ընտանեկան լուսանկարները, որոնցում պատկերված են կոտորված և տեղահանված երկու ընտանիքների լուսանկարները: Ցեղասպանությանն անդրադարձ կա նաև ֆրանսիացի *Ժիլ-բեր Սինտեի* (ծն. 1947) «Երևան» վեպում (առաջաբանը՝ Շառլ Ագնավորի):

Դանիացի *Հենրիկ Նորբրանդթի* (ծն. 1945) «Հայաստան» (1982) և կիպրահույն *Յորդոս Մոլեսկիսի* (ծն. 1947) «Իմ քարե սեր (Հայաստան)»⁶¹ բանաստեղծական շարքերն անցնում են հայ ժողովրդի պատմության միջով՝ հատուկ անդրադառնալով նաև 1915 թվականի ցեղասպանությանը:

Պաղեստինցի բանաստեղծ *Նաջվան Դարվիշը* (ծն. 1978) գրել է «Ո՛վ է հիշում հայերին» բանաստեղծությունը (ներկայացնում ենք մեր թարգմանությամբ)՝

Ես հիշում եմ նրանց
 ու վարում եմ մղձավանջային ավտոբուսը նրանց հետ
 ամեն գիշեր
 և իմ սուրճն այս առավոտ ես խմում եմ նրանց հետ

60 Sté Lancelot Hamelin, *Une abeille d'Arménie* (Paris: Quartett éditions, 2017):

61 Հայերեն թարգմանությունը՝ Գևորգ Էմին, *Գիրք թարգմանությանց* (Երևան, «Սովետական գրող» հրատ., 1984), 85-89:

Դ՛ն՛, մարդասպան.
Իսկ ռ՛վ է հիշում քե՛զ:

2010 թվականին իտալական թատրոնում բեմադրվել է «Նոյի կատուն» պիեսը (հեղինակի անունը չենք պարզել) Հայոց ցեղասպանության վերաբերյալ՝ մերօրյա նշանավոր դերասան Միքելե Մոռոնեի գլխավոր դերակատարմամբ:

Օտարազգիների գրած հայապատում վերջին ստեղծագործություններից հիշենք նաև հույն *Օմիրոս Մավրիդիսի* «Ազնիվ. Հայաստանից արմատախիլ արվածը Հունաստանում»⁶², իտալա-հայկական ծագումով ֆրանսիացի *Ժան-Կլոդ Բելֆորեի* (ծն. 1955) «Ես՝ Ազի Քեմալս, սպանել եմ հայերին» վեպը (2013), իտալացի Մաուրո Բալեստրայի «Հայուհի Հուդիթը. մի ապստամբության պատմությունը» (2015), լեհ-բրիտանական ծագումով ֆրանսիացի *Ալեքսի Միխայլիկի* (ծն. 1982) «Հեռու» վեպը (2019, կա հայ հերոս, հիշվում է Ցեղասպանությունը), ամերիկոսի *Էմմա Սանչեսի* «Սպանդի դաշտերի լույությունը» վիպակը (2019, պատկերում է Ցեղասպանության ժամանակ մի հայուհու առևանգման և թրքացման պատմությունը):

Անգլիացի բանաստեղծ *Փիթեր Սաթոնը* լոնդոնաբնակ հայազգի բանաստեղծուհի Լիանա Հայրապետյանի հետ 2019 թ. հրատարակել է «Հայկական պատերազմի և խաղաղության պոեմներ» 37 ստեղծագործությունից բաղկացած ժողովածուն: Այն անդրադառնում է հայ և բրիտանացի հեղինակների տեսակետներին Ցեղասպանության և ազգային ինքնության վերաբերյալ: Ֆրանսիացի *Ժան Վիրլմենի* «Մայրանուշը» մանկական գրքույկը (2020), որը համանուն տիկնիկի պատմությունն է, սկսվում է 1915 թ. ձմռան վերջից՝ Վանում և հասնում մինչև կոտորածների ու տեղահանության պատմությանը: 2003–2006 թթ. Հայաստանում Ֆրանսիայի դեսպան *Անրի Կյունի*ի «Մահ գոյություն չունի. Կոմիտաս» վեպը (2021) ներկայացնում է Կոմիտաս Վարդապետի երևակայական հուշերը՝ Ցեղասպանության վկայակոչումներով⁶³: 2021 թ. ԱՄՆ-ում բեսթսելեր է համարվել *Մայքլ Բոսլանդի* «Ոչնչացում. Հայոց ցեղասպանության մի պատմություն» վեպը: Հերոսուհին 13-ամյա Ռոսմերտա Պետրոսյանն է, որն անցնում է Եղեռնի մղձավանջներով: Ցեղասպանության թեման մեծ տեղ է գրավում եգիպտացի *Ահմեդ Մագդի Համմաի* (ծն. 1983) «Կազմակերպված մահ» վեպում (2021), սակայն այն մեծ մասամբ պատկերում է մի եգիպտահայ տիկնոջ կյանքն ու վախճանը՝ անցնելով նրա արյունալի անցյալի միջով (որը ողջ հայության անցյալն է) ու հասնելով ներկային (որը միայն իրենն է): Ըստ Համմաի՝ «վեպս մի գրական ճիչ է ընդդեմ ոճրագործության, ահաբեկչության և անհանդուրժողականության: Որպես նման մի վեպի գլխավոր տիպար՝ ինձ համար ամենաահարմարը եղավ հայ հերոսուհին»⁶⁴:

2010–2020-ական թթ. կրկին ստեղծվել են նաև եղեռնապատում թատերախաղեր:

62 Տե՛ս հայերեն թարգմանությունը՝ Օմիրոս Մավրիդիս, *Ազնիվ. Հայաստանից արմատախիլ արվածը Հունաստանում* (Երևան, «Գրաբեր» հրատ., 2012, թարգմանիչ՝ Սիմոն Կրկյաշարյան):

63 Անրի Կյունի, *Մահ գոյություն չունի. Կոմիտաս* (Երևան, հեղինակային հրատ., 2023, թարգմանիչ՝ Արմեն Բաղդասարյան):

64 Արծվի Բախչինյան, «Ահմեդ Մագդի Համմա. Իմ վեպը գրական մի ճիչ է ընդդեմ ոճրագործության», *Ազգ* 10.12.2021:

2015 թ. ապրիլին Լոնդոնի Ֆինբորոու թատրոնում ներկայացվել է բրիտանացի թատերագիր Նիլ ՄքՖերսոնի (ծն. 1969) «Ես երգելով կուգեմ մեռնիլ. ձայներ Հայոց ցեղասպանությունից» վավերագրական թատերախաղը: Երբ ամերիկացի թատերագիր Մարք Էդելմանին 2021-ին խնդրել են ստեղծել մի պիես՝ «Օսվեցիմ. ոչ շատ վաղուց, ոչ շատ հեռու» ցուցահանդեսի հետ ներկայացնելու համար, նա սկզբնապես որպես հիմք որոշել է օգտագործել Հոլոքոսթը, ապա որոշել է ընդգրկել նաև մյուս ցեղասպանությունները և ծանոթացել Հայաստանում, Կամբոջայում և Սարանյում ապրած երիտասարդների օրագրերին: Արդյունքում ստեղծվել է «Չորս երեխա. ցեղասպանությունն իրենց խոսքերով» թատերախաղը, որը ներկայացնում է հատվածներ Դավիդ Սիերակովյակի (Լեհաստան), Վահրամ Տատրյանի (Հայաստան), Նադյա Հալիբեգովիչի (Սարանո) և Չանրիթի Հիմի (Կամբոջա) օրագրերից և հուշերից՝ պատմելով նրանց սարսափելի փորձառությունների և քաջության ու վճռականության մասին: Իտալացի թատերագիր և բեմադրիչ Ջուզեպպե դի Բելլոյի (ծն. 1975) «Կարո. հայկական պատմություն» թատերախաղի (2022) գործողությունները կատարվում են 1915 թ., հայկական Շևան գյուղում, որտեղ, ինչպես հարևան բնակավայրերում, ուրվագծվում է երիտթուրքերի իշխանության խելագար սպառնալիքը, որը հանգեցնում է ցեղասպանության ծրագրմանն ու իրականացմանը: Գլխավոր հերոսը երիտասարդ Կարապետ Սյուրմելյանն է, որի ընտանիքի կյանքը լեռնային փոքրիկ գյուղում հոսում է ժամանակի և հնագույն ազգային ծեսերի հետ, մինչև որ պայթում է Մեծ աղետը...

Այս շրջանի գործերը զատորոշվում են որպես հիբրիդային, ոչ զուտ պատմական, հաճախ միախառնված ընտանեկան, սիրային, դեռահասության և այլ պատմություններով:

Հոդվածն ավարտում ենք 2010-ականների սկզբին ամերիկյան գրականության մեջ ասպարեզ իջած և բավական տարածում գտած մի վեպով: *Բոսթոն Թերան* ծածկանունով հանդես եկող մի ամերիկացի գրող, որի ինքնությունը ցայժմ անհայտ է, ի թիվս իր տասնյակ վեպերի, հեղինակել է նաև Հայոց ցեղասպանությանն առնչվող մի ստեղծագործություն: 2011 թ. լույս է տեսել նրա «Վշտի այգիները» վեպը: Քննադատությունն այն համարել է ոչ միայն ուժգին և հուզիչ գրական երկ, այլև Հայոց ցեղասպանության հզոր դատապարտում: Վեպը համեմատել են Էմիլ Զոլայի՝ 1898 թ. ի պաշտպանություն Դրեյֆուսի գրած «Ես դատապարտում եմ» բաց նամակի, Էռնեստ Հեմինգուեյի «Ում մահն է գոժում զանգը» վեպի և Ալեքսանդր Սոլժենիցինի ստեղծագործությունների հետ: Անշուշտ, հայերիս համար նախընտրելի կլինի, եթե մի օր պարզվի, որ Բոսթոն Թերան անվան տակ քողարկված հեղինակն օտարազգի է...

Ամփոփելով՝ կարող ենք նկատել, որ Հայոց ցեղասպանության վերաբերյալ գեղարվեստական երկերի աշխարհագրությունը, ինչպես նաև ժանրային ընդգրկումը բավական լայն է:

Վկայակոչելով օտարազգի հեղինակների՝ մեր գրական շրջանակներին քիչ ծանոթ կամ անհայտ մնացած վերոնշյալ ստեղծագործությունները (կարևոր չեն տարասեռ գրական արժանիքները)՝ սույն հաղորդմամբ մեր գրականագետների և թարգմանիչների ուշադրությունը հրավիրում ենք նաև այդ երկերի վրա:

NOT ONLY FRANZ WERFEL: THE LESSER-KNOWN WORKS OF FOREIGN WRITERS ON THE ARMENIAN GENOCIDE

Artsvi Bakhchinyan

Institute of History, National Academy of Sciences, Armenia

SUMMARY

This paper introduces little-known works of literature of 28 countries around the world that fully or partially address the subject of the Armenian Genocide. It encompasses all types of literature—poetry, prose, drama—and nearly all genres, including historical, psychological, adventure, fantasy, horror, and children's literature, thus raising awareness of the issue among a wide range of readers.

The paper does not mention works by authors of Armenian origin in international literature (with a few exceptions of authors with one-quarter Armenian ancestry).

A wealth of factual material on this topic can be found in the *Armenian Question* encyclopedia published in 1996 (in Armenian), as well as in monographs addressing the theme of the Genocide in the literature of specific countries. Therefore, the paper mainly presents literary works that are not mentioned in these sources, as well as those that appeared after 1996—without claiming to be exhaustive.

The paper primarily focuses on the 1915 Armenian Genocide, although it also includes individual references to the deportations and massacres of Armenians in the Ottoman Empire from 1894 to 1923, as well as the massacres of Armenians in Baku (1905, 1918, 1988, 1990).

Foreign authors writing about the Armenian Genocide have mostly based their works on sources in various languages, primarily on testimonies by non-Armenian eyewitnesses and contemporaries of the Genocide. Many have portrayed the Genocide through the fate of survivors (often using the perspective of a woman or a child), or through emotionally charged romantic plots (often involving a romance between an Armenian woman and a Turk). Some have created fictional characters, while others have made historical figures into protagonists. Various works contain passing references to aspects of the Genocide (Armenian refugees, orphans, Turkish hatred of Armenians).

Among the mentioned authors are both relatively minor writers from various national literatures and prominent figures such as Giosuè Carducci, Ernests Birznieks-Upītis, John Galsworthy, John Cheever, Aldous Huxley, Fazil Iskander, Sam Lundwall, Lee Harwood, John Updike, Richard Kalinoski, Gonzalo Guarch, Yiorgos Moleskis. Also noteworthy are references to the massacres of Armenians in works by Turkish and Azerbaijani authors.

Key-words: Armenian Genocide, 20th-century world literature, 21st-century world literature, representation of the Genocide, image of the Armenian woman, prose, verse, drama.

НЕ ТОЛЬКО ФРАНЦ ВЕРФЕЛЬ: МАЛОИЗВЕСТНЫЕ ПРОИЗВЕДЕНИЯ ЗАРУБЕЖНЫХ ПИСАТЕЛЕЙ О ГЕНОЦИДЕ АРМЯН

Արշի Бахчинян

Институт истории Национальной академии наук, Армения

РЕЗЮМЕ

В данной статье рассматриваются малоизвестные произведения литератур 28 стран мира, которые полностью или частично затрагивают тему Геноцида армян. В неё включены все виды литературных произведений — поэзия, проза, драматургия — и почти все жанры: исторический, психологический, приключенческий, фантастический, ужасы, детская литература, что дает возможность познакомиться с проблемой самые разные слои читателей.

В статье не рассматриваются произведения авторов армянского происхождения, пишущих на иностранных языках (за исключением нескольких авторов с четвертью армянской крови).

По данной теме обширный фактический материал представлен в опубликованной в 1996 году энциклопедии “Армянский вопрос” (на армянском) и в монографиях, посвящённых отражению темы Геноцида в литературе отдельных стран. Поэтому в статье в основном представлены произведения, не упомянутые в указанных источниках, а также появившиеся после 1996 года – без претензии на исчерпывающий охват.

В центре внимания статьи – Геноцид армян 1915 года, однако также затрагиваются депортации и резня армян в Османской империи в 1894–1923 гг., а также резня армян в Баку (1905, 1918, 1988, 1990 гг.).

Иностранные авторы, писавшие о Геноциде армян, при работе над своими произведениями в основном опирались на источники на различных языках, главным образом — на свидетельства неармянских очевидцев и современников событий. Многие описывали Геноцид через судьбы выживших (часто – с точки зрения женщины или ребёнка), либо через трогательные любовные истории (часто – между армянкой и турком). Некоторые создавали вымышленные персонажи, другие делали героями исторических личностей. В ряде произведений кратко упоминаются различные реалии, связанные с Геноцидом (армянские беженцы, сироты, ненависть турок к армянам).

Среди упомянутых авторов – как малоизвестные представители национальных литератур, так и выдающиеся имена: Джозуэ Кардуччи, Эрнест Бирзниекус-Упитис, Джон Голсуорси, Джон Чивер, Олдос Хаксли, Фазиль Искандер, Сэм Лундвалл, Ли Харвуд, Джон Апдайк, Ричард Калиноски, Гонсало Гуарч, Йоргос Молескис. Примечательны также упоминания армянских погромов в произведениях турецких и азербайджанских писателей.

Ключевые слова: Геноцид армян, мировая литература XX века, мировая литература XXI века, отражение Геноцида, образ армянки, проза, стихотворная форма, драма.

REFERENCES

- Akhanli, Doğan, *Ահեղ դատաստանի դատավորները* [The Judges of the Last Judgment]. Yerevan: Noyan Tapan, 2017;
- Amirkhanyan, Mikhail Davidovich. *Русская художественная литература и геноцид армян* [Russian Fiction Literature and the Armenian Genocide]. Yerevan: Ayastan, 1988;
- «Տրապիզոնցի Անթառամ» [Antaram of Trebizond]. *Haratch*, 24 May 1930;
- Auron, Yair. *Անընդունելի անտարբերություն. սիոնիզմը և Հայոց ցեղասպանությունը* [The Unbearable Indifference: Zionism and the Armenian Genocide]. Yerevan: Amaras, 2013;
- Bakhchinyan, Artsvi. *Հայաստան-Սկանդինավիա. պատմամշակութային առնչություններ* [Armenia–Scandinavia: Historical and Cultural Connections]. Yerevan: State Museum of Literature and Art Press, 2003;
- Bakhchinyan, Artsvi. «Ահմեդ Մագդի Համմամ. ‘Իմ վեպը գրական մի ճիչ է ընդդեմ ոճրագործության’» [Ahmed Magdy Hammam: “My Novel is a Literary Cry Against Crime”]. *Azg*, 10 December 2021;
- Bardakjian, Laura. «Բանաստեղծություններ» [Poems]. *Sovetakan Hayastan* 2 (1982);
- Bates, Katharine Lee. «Արմենիա» [Armenia]. *Andin* 4 (2017);
- Cheever, John. *Բուլեթ պարկ* [Bullet Park]. Yerevan: Sovetakan grogh, 1985;
- Cuny Henri. *Մահ գոյություն չունի. Կոմիտաս* [Death Does Not Exist: Komitas]. Yerevan: Author’s Publication, 2023;
- Delarue-Mardrus, Lucie. «Հրայրք» [Fervor]. *Azg*, 17 February 2023;
- Edwards, Emil. «Սիրանոյշը, հայուհին» [Siranoush, the Armenian Woman]. *Hairenik*, 4 January 1925;
- Emin Gevorg. *Գիրք թարգմանությանց* [The Book of Translations]. Yerevan: Sovetakan grogh, 1984;
- Galsworthy, John. *Ասք Ֆորսայթների մասին* [The Forsyte Saga]. vol. 2-3. Yerevan: Hayastan, 1977;
- Gasparyan, David V. «Ցեղասպանության արտացոլումը գեղարվեստական գրականության մեջ» [Reflection of the Genocide in Fiction]. *Ts’eghaspanagitakan handes* 10 (1), 2022;
- Gębarski Bohdan. *Մահվան դատապարտվածները* [The Condemned to Death]. Yerevan: Nairi, 1992;
- Gevorgyan, Arshak. «Հայոց ցեղասպանության արտացոլումը Ահարոն Ռեուվենիի «Մինչև Երուսաղեմ» եռագրությունում» [The Reflection of the Armenian Genocide in Aharon Reuveni’s Trilogy “Until Jerusalem”]. *Arevelagitutyan harcer* 9 (2015);

Grigoryan, Ashot. «Էռնեստ Բիրզնիեկս-Ուպիտիսը 1905 թ. Բաքվի և շրջակայքի հայոց ջարդերի մասին» [Ernests Birzniesks-Upitis on the 1905 Massacres of Armenians in Baku and Environs, online article]. [http://art-collage.com/post/%D4%B7%D5%BC%D5%B6%D5%A5%D5%BD%D5%BF-%D4%B2%D5%AB%D6%80%D5%A6%D5%B6%D5%AB%D5%A5%D5%AF%D5%BD-%D5%88%D6%82%D5%BA%D5%AB%D5%BF%D5%AB%D5%BD%D5%A8-1905-%D5%A9.-%D4%B2%D5%A1%D6%84%D5%BE%D5%AB-%D6%87-%D5%B7%D6%80%D5%BB%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D6%84%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81-%D5%BB%D5%A1-%D6%80%D5%A4%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6](http://art-collage.com/post/%D4%B7%D5%BC%D5%B6%D5%A5%D5%BD%D5%BF-%D4%B2%D5%AB%D6%80%D5%A6%D5%B6%D5%AB%D5%A5%D5%AF%D5%BD-%D5%88%D6%82%D5%BA%D5%AB%D5%BF%D5%AB%D5%BD%D5%A8-1905-%D5%A9.-%D4%B2%D5%A1%D6%84%D5%BE%D5%AB-%D6%87-%D5%B7%D6%80%D5%BB%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D6%84%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81-%D5%BB%D5%A1-%D6%80%D5%A4%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6;);

Harutyunyan, Sona. *Հայոց ցեղասպանության թեման իտալական գրականության մեջ* [The Theme of the Armenian Genocide in Italian Literature]. Yerevan: Yerevan State University Press, 2015;

Henri-Bordeaux Paul, «Տրապիզոնցի Անթառամ» [Antaram of Trebizond]. *Houssaber*, 9 August–6 December 1930;

Hovhannisyan, Astghik. «Հայոց ցեղասպանությունը 19-րդ դարի վերջի և 20-րդ դարասկզբի ճապոնական մամուլում» [The Armenian Genocide in the Japanese Press of the Late 19th and Early 20th Centuries]. *Azg*, 23 April 2021;

Iskander, Fazil. *Сандро из Чегема* [Sandro of Chegem]. Moscow: Sovetski' pisatel', 1991;

Kikodze, Archil. *Մոդեռն տապանաքարին* [The Lizard on the Tombstone]. Yerevan: Vernatun Media, 2024;

Laxness, Halldór. *Лилья* [Lily]. Moscow: Biblioteka “Ogonek,” 1955;

Limonov, Eduard. “Это я – Эдичка” [It's Me—Edichka]. *Kovcheg* 1–2 (1978);

Makaryan, Albert A., Safaryan, Liana A. «Տխուր հայր: Հատվածներ Էլիաս Կանետտի ինքնակենսագրական հիշողությունից» [The Sad Armenian: Excerpts from Elias Canetti's Autobiographical Memories]. *Vem* 2 (2011);

Malumyan, Tigran. *Հայոց Մեծ եղեռնը ամերիկյան գրականության մեջ* [The Armenian Genocide in American Literature]. Dissertation, Yerevan State University, 2005;

Mangelsen Jochen, *Օֆելյայի երկար ուղևորությունը դեպի Բեռլին* [Ophelia's Long Journey to Berlin]. Yerevan: Hayastan, 2003;

Matossian, Vartan. *Թէ ինչպէս Դ. Վարուժանի որդին հասաւ... Սպանիա* [How D. Varujan's Son Reached... Spain]. *Haratch*, 10 February 1998;

Matossian, Vartan. *Գրական-քանասիրական ուսումնասիրություններ* [Literary and Philological Studies]. Antelias, Publishing House of the Catholicosate of the Great House of Cilicia, 2009;

Madden, Martine. *Անուշ. արգելված սիրո պատմություն* [Anoush: A Forbidden Love Story]. Yerevan: Gitank, 2016;

Mavridis Omiros, *Ազնիվ. Հայաստանից արմատախիլ արվածը Հունաստանում* [Azniv: Uprooted from Armenia, in Greece]. Yerevan: Graber, 2012;

Melkonyan, Ruben. *Հայոց ցեղասպանության թեման արդի թուրքական գրականության մեջ* [The Theme of the Armenian Genocide in Contemporary Turkish Literature]. Yerevan: VMV-Print, 2010;

Melkonyan, Ruben; Poghosyan, Naira. «Հայոց ցեղասպանության թեման ժամանակակից թուրք գրականության մեջ. համառոտ ակնարկ», *Անցյալի ապագան* [“The Theme of the Armenian Genocide in Contemporary Turkish Literature: A Brief Overview” in *The Future of the Past*]. Yerevan: Yerevan State University Press, 2015;

Mezeiyek, Fawaz. «Հայկական հարսանիքը» [The Armenian Wedding]. *Kamar* 6 (2008);

Minasyan, Mihran. «Հայոց ցեղասպանութեան թեման արաբական գրականութեան մեջ», *Հայոց ցեղասպանություն–100. Ճանաչումից՝ հատուցում. Միջազգային գիտաժողովի նյութեր* [“The Theme of the Armenian Genocide in Arabic Literature,” in *Armenian Genocide–100: From Recognition to Reparation*. Proceedings of the International Conference]. Yerevan: Gitutyun, 2016;

Mughdusyan, Mariam. «Հայոց ցեղասպանության թեման իսպանական արձակում», [The Theme of the Armenian Genocide in Spanish Prose]. *Անցյալի ապագան* [The Future of the Past]. Yerevan: Yerevan State University Press, 2015;

Otian, Yervand. *Թիւ 17 խաֆիէն* [Spy No. 17]. Yerevan: Literature and Art Museum Press, 2000.

Փառքի ճամբան [Path of Glory]. *Ardzaganq Parisi*, 25.11.1917;

Petkevičaitė-Bitė, Gabrielė. «Տիգրան Երկաթ. արդարության հավատացյալը» [Dikran Yergat: A Believer in Justice]. *Andin* 4 (2017);

Shnaps, Charles H. *Արշակը, փոքրիկ հայը* [Arshak, the Little Armenian]. *Grakan tert*, 23 April 2021;

Sharuryan, Haykanush A. «Հայոց եղեռնապատումը ամերիկացի գրողների երկերում» [Depictions of the Armenian Genocide in American Authors' Works]. *Vem* 2 (2015);

Šimić-Tonin, Nikola. «Ճշմարտության ձեռքերը» [The Hands of Truth]. *GeghArm* 63 (2019);

Surenyan Karpis. *Ճիշտը կյանքն է* [Life itself is the Truth]. Yerevan: Amrots grup, 2001;

Van Dyke, Henry. «Գութ Հայաստանին» [Mercy for Armenia]. *Mshak*, 11 February 1917;

Գիտե՞ս երկիրն այս. բանաստեղծություններ [Do You Know This Country? Poems]. Yerevan: Hayastan, 1970;

«Իտալացի հայասեր բանաստեղծ մը» [An Italian Armenophile Poet]. *Baika*, 27 February 1931;

Հայկական հարց հանրագիտարան [Encyclopedia of the Armenian Question]. Yerevan: Armenian Encyclopedia, 1996.

Հեղինակի մասին
About the Author
Об авторе

Արծվի Բախչինյան, բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ հայ գաղթավայրեր և Սփյուռք, մշակույթի պատմություն, հայագգի ականավոր գործիչներ:

Էլ. փոստի հասցե՝ artsvi@yahoo.com

Artsvi Bakhchinyan, PhD in Philology, Senior Researcher, Institute of History, National Academy of Sciences, Armenia.

Research fields – history of Armenian communities and Diaspora, history of art, eminent figures of Armenian origin.

E-mail: artsvi@yahoo.com

Арцви Бахчинян, кандидат филологических наук, старший научный сотрудник Института истории Национальной академии наук Республики Армения.

Область исследований: история армянских общин и диаспоры, история искусства, знаменитые деятели армянского происхождения.

Эл. почта: artsvi@yahoo.com

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Հեղինակների համար

- Հոդվածը պետք է ներկայացնել «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն՝ հեղինակի և բոլոր համահեղինակների(երեւ գրված է համահեղինակությամբ) մասին տեղեկատվությամբ:
- Հոդվածը պետք է լինի բացառապես հեղինակի/համահեղինակների կողմից կատարված ուսումնասիրություն. խստիվ արգելվում է գրագողությունը:
- Հոդվածը չպետք է նախկինում նույնությամբ տպագրված լինի որևէ լեզվով՝ բացառությամբ առանձին դեպքերի՝ խմբագրի համաձայնությամբ:
- Հոդվածը չպետք է միաժամանակ հանձնված լինի տպագրության կամ դիտարկման մեկ այլ տեղում:
- Հոդվածը պետք է բարեխղճորեն շարադրված լինի՝ պահպանելով «Ցեղասպանագիտական հանդեսի» սահմանած կանոնները:
- Հոդվածի շրջանակում կատարված ուսումնասիրությունը պետք է հիմնված լինի ստույգ տվյալների վրա:
- Հոդվածը պետք է ունենա գիտական նորույթ և արդիականություն:
- Հոդվածում (հղման տեսքով) թույլատրելի է երախտագիտություն հայտնել ուսումնասիրությանը որևէ կերպ աջակցած անձանց:
- Հեղինակը պարտավոր է համագործակցել խմբագրակազմի հետ, կատարել անհրաժեշտ փոփոխությունները, հավելումները կամ կրճատումները, ինչպես նաև շտկել սխալները:
- Հեղինակն իրավունք չունի վիճարկելու խմբագրության՝ հոդվածը չտպագրելու որոշումը կամ գրախոսության բացասական կարծիքը՝ առանց հիմնարար փաստարկների:

Գրախոսների համար

«Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածները գրախոսվում են առկա մեկ գրախոսի կողմից: Գրախոսությունը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքի հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ:

Գրախոսը պետք է՝

- նյութը գրախոսի՝ անկախ անձնական հետաքրքրություններից ու շահերից՝ դրսևորելով բացառապես գիտական անաչառ մոտեցում,
- լրացնի գրախոսման համար նրան ուղարկված ձևաթուղթը հնարավորինս սեղմ ժամկետներում,
- շահերի բախման առկայության դեպքում այդ մասին տեղեկացնել խմբագրությանը:

Գրախոսված ձևաթուղթը պահվում է «Ցեղասպանագիտական հանդեսի» արխիվում, չի տրամադրվում որևէ մեկին՝ այդ թվում՝ հեղինակին, և այն հրապարակման ենթակա չէ: Գրախոսման արդյունքների, առաջարկների ու դիտարկումների մասին հեղինակին տեղեկացվում է տրամադրված էլ. փոստի միջոցով:

Խմբագրակազմի համար

Խմբագրակազմը պարտավորվում է՝

- կազմակերպել «Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածների պատշաճ գրախոսությունը,
- հոդվածը «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն հանձնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, հեղինակին տեղեկացնել խմբագրական խորհրդի որոշման վերաբերյալ,
- հետևել պարբերականի հրատարակչական էթիկետին և երաշխավորել հրատարակվող աշխատանքների գիտական բարձր մակարդակը,
- չհրապարակել հեղինակի և գրախոսի անձնական տվյալները և չտրամադրել դրանք երկու կողմերին:

Խմբագրությունն իրավունք ունի մերժելու հոդվածի տպագրությունը, եթե այն չի համապատասխանում խմբագրության կողմից սահմանված պահանջներին:

Խմբագրությունը նյութերի տպագրության կամ մերժման որոշումը կայացնում է՝ հիմնվելով գրախոսների կատարած առաջարկների ու դիտարկումների վրա՝ հանդեսի տեխնիկական պահանջներին բավարարելու դեպքում:

Գրախոսման փուլի ավարտից և հեղինակի կողմից կատարված շտկումներից հետո հոդվածները խմբագրվում են «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրական մոտեցումներին համաձայն:

Հեղինակային իրավունք

Հրատարակված նյութերի հեղինակային իրավունքը (©) պատկանում է «Ցեղասպանագիտական հանդեսին»: Տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո հեղինակը պարտավորվում է լրացնել և ստորագրել հեղինակային իրավունքի փոխանցման վերաբերյալ ձևաթուղթը:

Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութեր

Հեղինակի պատասխանատվությունն է հեղինակային իրավունքով պաշտպանված ցանկացած նյութի (լուսանկար, տեքստ, պատկեր, աղյուսակ, դիագրամ և այլն) տպագրության կամ վերատպության համար գրավոր թույլտվություն ստանալը (ում պատկանում է հեղինակային իրավունքը): Դրանք պետք է տրամադրվեն «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրությանը (տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո): Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի համար ձևաթուղթը կտրամադրվի խմբագրության կողմից:

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ

Ցեղասպանագիտական հանդեսում հրատարակման համար կարող են ներկայացվել գիտական հոդվածներ, գրախոսություններ, ինչպես նաև, առանձին դեպքերում խմբագրության որոշմամբ, մշակված անտիպ հուշագրություններ:

Ցեղասպանագիտական հանդեսում հրատարակման ներկայացվող հոդվածները լինելու են հիմնականում հայերենով (արևելահայերեն, արևմտահայերեն), իսկ առանձին դեպքերում՝ խմբագրության համաձայնությամբ՝ նաև օտար լեզուներով:

Ներկայացվող հոդվածները նախ դիտարկվում և հավանության են արժանանում խմբագրակազմի կողմից, ապա՝ թեմատիկ, որակական և տեխնիկական պահանջների

բավարարման դեպքում միայն՝ ուղարկվում գրախոսության:

Ցեղասպանագիտական հանդեսին ներկայացված հոդվածները գրախոսվում են առնվազն մեկ գրախոսի կողմից, գործընթացը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքների հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ: Խմբագրությունն իրավունք ունի անմիջապես մերժել ներկայացված նյութը՝ Ցեղասպանագիտական հանդեսի տեխնիկական և գիտական պահանջներին չբավարարելու դեպքում:

Ցեղասպանագիտական հանդեսում հոդվածների տպագրությունը կատարվում է անվճար հիմունքով:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Ծավալը՝ մինչև 30 էջ (ավելի մեծ ծավալի դեպքում՝ խմբագրության որոշմամբ):
2. Հայերեն տեքստը կազմել «Sylfaen» տառատեսակով, լատինատառ և սլավոնատառ տեքստերը՝ «Times New Roman» տառատեսակով, 12 տառաչափով, իսկ հղումները՝ 10 տառաչափով:
3. Առաջին էջում գրել հոդվածի հեղինակ(ներ)ի անունը, հայրանվան սկզբնատառը, ազգանունը, գիտական աստիճանը:
4. Հոդվածի վերնագիրը գրել ՄԵԾԱՏԱՌ-ԵՐՈՎ, թավատառ, հավասարեցնել կենտրոնում:
5. Հաջորդ տողում գրել «Բանալի բառեր — » արտահայտությունը և կցել նվազագույնը 5 հանգուցային բառ կամ արտահայտություն՝ 10 տառաչափով:
6. Հոդվածի բնագրի լեզվով գրել կարճ ներածական հատված (Abstract)՝ 150-200 բառ:
7. Անհրաժեշտության պարագայում բուն տեքստից անմիջապես հետո հասցեագրել երախտագիտություն անհատներին և/կամ կազմակերպություններին (acknowledgment):
8. Հոդվածի բուն տեքստից հետո (եթե կա երախտագիտության խոսք, ապա դրանից հետո) գրել նախ անգլերեն, ապա՝ ռուսերեն ամփոփումը: Անգլերեն հոդվածի դեպքում գրել նախ հայերեն, ապա՝ ռուսերեն ամփոփում, իսկ ռուսերեն հոդվածի դեպքում՝ նախ հայերեն, ապա՝ անգլերեն ամփոփում:
Յուրաքանչյուր լեզվով ամփոփման վերնագրից հետո կցել համապատասխան լեզվով բանալի բառեր (բանալի բառերը բոլոր լեզուներով տրվող ամփոփումներում պետք է լինեն նույնը):
9. Ամփոփումներից հետո ներկայացնել ոչ լատինատառ գրականության ցանկն այբբենական կարգով՝ նշելով նյութի վերնագիրը բնագրով, իսկ [] փակագծերում տալ համարժեք անգլերեն թարգմանությունը: Հղման այլ մանրամասները (հեղինակի անուն, ազգանուն, հրատարակչության անունը, վայրը, ամսագրի վերնագիրը և այլն) տալ լատինատառ՝ ներկայացված տառադարձմամբ, օրինակ՝

Marut'yan, Harut'yun. *Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* [Iconography of Armenian Identity. Vol. 1: The Memory of Genocide and the Karabagh Movement]. Yerevan: Gitut'yun, 2009;

Սուրիական տարեցոյց [Syrian Almanach]. Cairo: Zareh Pe'rpe'rean, 1924;

Ցավի, հիշողության և պայքարի կրթողներ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կրթողներ [Memorials of Sorrow, Remembrance and Struggle]. Yerevan: Ministry of Diaspora, 2010;

Sahakyan, Vera. «Հատուկ կազմակերպության (Թեշքիլաթը Մախսուսե) ձևավորման նախադրյալները», *Հայոց ցեղասպանություն – 100. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու* [“Prerequisites of the Formation of Special Organization (Teşkilât-ı

Mahsusa)” in Armenian Genocide -100. Collection of Papers of the International Conference]. Yerevan: Gitut’yun, 2016, 198-212.

Marutyan, Harutyun. «Ինքնության «ամրացման» երկու հնարաւորութիւններ Հայաստան-Սփիւք յարաբերութիւնների համատեքստում», *Սփիւք եւ ինքնութիւն* (խմբ.՝ Շահան Գանտահարեան) [“Two ‘possibilities’ of strengthening Identity in the Context of Armenia-Diaspora Relations,” in Diaspora and Identity (ed. Shahan Kandaharian)]. Antelias-Lebanon: Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2018, 219-233.

Margaryan, Narine. «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915-1918 թթ.)» [Turkification of Armenian Children in the Ottoman Empire’s State Orphanages (1915-1918)]. *Ts’eghaspanagitakan handes* 4 no. 1 (2016): 25-43;

Antonyan, Aram. «Տօքս. Ալթունյան» [Dr. Alt’unyan]. *Veratsnund* (Paris), 27 May, 1919, no. 12.

10. Ներկայացնել նաև հեղինակի մասին տվյալներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով՝ գրել նաև պաշտոնը և աշխատավայրը, ուսումնասիրությունների ոլորտը, էլ. փոստի հասցեն:

ՀՂՈՒՄՆԵՐ

11. Ցեղասպանագիտական հանդեսի հղումները ձևավորել համաձայն *The Chicago Manual of Style Online 17th Edition*-ի:

Հղումները պետք է համարակալվեն սկզբից մինչև վերջ: Անկախ լեզվից յուրաքանչյուր աղբյուր, եթե շարունակաբար հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից պետք է օգտագործվի՝

Նույն տեղում: (եթե էջը նույնն է)

Նույն տեղում, ...: (եթե էջը փոխվում է)

Ա. Գրքեր (մենագրություններ կամ համահեղինակությամբ աշխատություններ)

1) Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը (ամբողջությամբ), հեղինակի ազգանունը, վերնագիրը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Բոլոր գրքերի վերնագրերը գրել շեղատառ:

Անգլերեն վերնագրերի բոլոր բառերը (բացառությամբ նախդիրների, հոդերի կամ շաղկապների) գրել մեծատառ: Օր.՝

1. Սարգիս Թորոսյան, *Դարդանելից մինչև Պաղեստին* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013), 55:

2. Валерий Тунян, *Россия и Армянский вопрос* (Ереван: Музей-институт Геноцида армян, 1998), 55.

3. Vahagn Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence - Oxford: Berghahn Books, 1995), 55.

2) Եթե նույն հոդվածում գիրքը հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից և անկախ լեզվից պետք է նշվի կրճատ տարբերակը՝ հեղինակի ազգանունը, գրքի շեղատառ վերնագիրը (կարճ վերնագրերի դեպքում) կամ վերնագրի առաջին մի

քանի բառը (երկար վերնագրի դեպքում): Օր.՝

Թորոսյան, *Դարդանելից մինչև Պաղեստին*, 55:

Тунян, *Россия и Армянский вопрос*, 55.

Dadrian, *The History of the Armenian Genocide*, 55.

4) Մեկից ավելի հեղինակների դեպքում, գրել առաջին երկու հեղինակների անունները և ազգանուններն ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», “и др.”, “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

Բ. Թարգմանված գրքեր

Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը, ազգանունը, գրքի վերնագիրը, թարգմանողի ամբողջական անունը և ազգանունը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Գրքի վերնագիրը պետք է գրել շեղատառ:

1. Jhumpa Lahiri, *In Other Words*, trans. Ann Goldstein (New York: Alfred A. Knopf, 2016), 146.

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում), շեղատառ, էջը: Օր.՝

1. Lahiri, *In Other Words*, 184.

Գ. Թվային գրքերի (ebook)

Թվային գրքերի օգտագործման դեպքում գրել գրքի տվյալները վերոնշյալ սկզբունքներով, ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը: Եթե գրքի էջերը առկա չեն, ապա պետք է նշել բաժնի կամ գլխի համարը և դիտման ժամանակը: Օր.՝

1. Herman Melville, *Moby-Dick; or, The Whale* (New York: Harper & Brothers, 1851), 627, <http://mel.hofstra.edu/moby-dick-the-whale-proofs.html>, դիտվել է 17.07.2019:

2. Philip B. Kurland and Ralph Lerner, eds., *The Founders' Constitution* (Chicago: University of Chicago Press, 1987), chap. 10, doc. 19, <http://press-pubs.uchicago.edu/founders/>, դիտվել է 17.07.2019:

3. Brooke Borel, *The Chicago Guide to Fact-Checking* (Chicago: University of Chicago Press, 2016), 92, ProQuest Ebrary.

4. Jane Austen, *Pride and Prejudice* (New York: Penguin Classics, 2007), chap. 3, Kindle.

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) շեղատառ, էջը կամ բաժնի կամ գլխի համարը: Օր.՝

1. Melville, *Moby-Dick*, 722–723.

2. Kurland and Lerner, *Founders' Constitution*, chap. 4, doc. 29.

3. Borel, *Fact-Checking*, 104–105.

4. Austen, *Pride and Prejudice*, chap. 14.

Դ. Ժողովածուներ

1) Ժողովածուները պետք է հղվեն՝ նշելով հեղինակի անունը, ազգանունը ամբողջական,

հողվածի կամ գլխի վերնագիրը չակերտների մեջ, ամբողջ ժողովածուի վերնագիրը, խմբագիր(ներ)ը կամ կազմող(ներ)ը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Օր.՝

1. Vahakn Dadrian, "Ottoman Archives and Denial of the Armenian Genocide," in *The Armenian Genocide: History, Politics, Ethics*, ed. Richard G. Hovannisian (New York: St. Martin's Press, 1992), 280.
2. Վերթինե Սվազյան, «Հայոց ցեղասպանությունը ըստ ականատես վերապրողների վկայությունների», *Հայոց Մեծ եղեռն 90*, հողվածների ժողովածու (Երևան, ԵՊՀ հրատ., 2005), 471:
3. Сурен Манукян, "Наказание за верность." От Эрзурумского конгресса до Сарыкамышского сражения," *Первая мировая война: взгляд спустя столетие: доклады и выступления участников V Международной научно-практической конференции* (М.: Изд-во МНЭПУ, 2016), 648.

2) Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հողվածի կամ գլխի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Dadrian, "Ottoman Archives," 471.
2. Սվազյան, «Հայոց ցեղասպանությունը», 471:
3. Манукян, "Наказание за верность," 648.

Ե. Հողվածներ

1) Հողվածներ հղելիս նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հողվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Առկայության դեպքում ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը, նաև `DOI-ն (Digital Object Identifier): Օր.՝

1. Rouben P. Adalian, "Comparative Policy and Differential Practice in the Treatment of Minorities in Wartime: the United States Archival Evidence on the Armenians and Greeks in the Ottoman Empire," *Journal of Genocide Research* 3, no. 1 (2001): 35.
- Shao-Hsun Keng, Chun-Hung Lin, and Peter F. Orazem, "Expanding College Access in Taiwan, 1978–2014: Effects on Graduate Quality and Income Inequality," *Journal of Human Capital* 11, no. 1 (2017): 9–10, <https://doi.org/10.1086/690235>
3. Peter LaSalle, "Conundrum: A Story about Reading," *New England Review* 38, no. 1 (2017): 95, Project MUSE.
4. Շուշան Խաչատրյան, «Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը. հրովարտական, հրահանգներ ու կոչեր», *Ցեղասպանագիտական հանդես* 6, թիվ 2 (2014), 40:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հողվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Adalian, "Comparative Policy and Differential Practice," 35.
2. Keng, Lin, and Orazem, "Expanding College Access," 23.
6. Խաչատրյան, «Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը», 40:

Զ. Համահեղինակությամբ հողվածներ

Երեքից ավել համահեղինակ ունեցող հոդվածներում նշել առաջին հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», “и др.”, “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

Է. Մամուլ

Մամուլի հոդվածներ հղելիս պետք է նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հոդվածի վերնագիրը չափերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Նշել նաև հանդեսի տպագրության վայրը: Օր.՝

1. Գալստյան Սուսանա, «Երվանդ Օտյանը և ազգային տոնը», *Ազգ օրաթերթ* (Երևան), 24 ապրիլի 2010, 13:
2. Rebecca Mead, “The Prophet of Dystopia,” *New Yorker*, April 17, 2017, 43.
3. Farhad Manjoo, “Snap Makes a Bet on the Cultural Supremacy of the Camera,” *New York Times*, March 8, 2017, <https://www.nytimes.com/2017/03/08/technology/snap-makes-a-bet-on-the-cultural-supremacy-of-the-camera.html>.
4. Խմբագրական, *Ազատամարտ* օրաթերթ (Կ.Պոլիս), 31 հոկտեմբեր/13 նոյեմբեր 1914, 1:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չափերտների մեջ, էջը: Օր.՝

1. Գալստյան, «Երվանդ Օտյանը», 13:
2. Mead, “The Prophet of Dystopia,” 43.
3. Manjoo, “Snap.”
4. Խմբագրական, 1:

Ը. Թեգեր և ատենախոսություններ

Թեգերը և ատենախոսությունները հղելիս պետք է նշել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, թեգի կամ ատենախոսության վերնագիրը չափերտների մեջ, պաշտպանության վայրը, տարեթիվը, էջը: Օր.՝

1. Cynthia Lillian Rutz, “King Lear and Its Folktale Analogues” (PhD diss., University of Chicago, 2013), 99–100.
2. Նարեկ Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Ռաֆայել Լեմկինի կողմից» (ատեն., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2017), 77:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, թեգի կամ ատենախոսության վերնագիրը՝ ամբողջությամբ կամ կրճատ, շեղատառ, չափերտների մեջ, պաշտպանության վայրը և տարեթիվը, էջը:

1. Rutz, “King Lear,” 158.
2. Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը», 77:

Թ. Համացանց

Համացանցային նյութերը հղելիս՝ գրել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ (եթե նշված է), նյութի վերնագիրը (եթե նշված է), ապա՝ համացանցային հասցեն և նյութից օգտվելու ամսաթիվը: Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton,” <http://www.genocidewatch.org/genocide/tenstagesofgenocide.html>, դիտվել է 17.07.2019:

2. Նարինե Մարգարյան, «Օսմանյան Կայսրության Պետական Որբանոցներում Կիրառվող Թրքացման Մեթոդները», <http://www.genocide-museum.am/arm/05.02.2019-MargaryanNarine.php>, դիտվել է 17.07.2019:

3. Katie Bouman, “How to Take a Picture of a Black Hole,” filmed November 2016 at TEDxBeaconStreet, Brookline, MA, video, 12:51, https://www.ted.com/talks/katie_bouman_what_does_a_black_hole_look_like, դիտվել է 17.07.2019:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք նշել հեղինակի ազգանունը և/կամ նյութի վերնագիրը(երկար վերնագրերի դեպքում՝ կրճատ): Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton.”

2. Մարգարյան, «Օսմանյան Կայսրության»:

3. Bouman, “Black Hole.”

12. Անձնական հաղորդակցություններ

Անձնական հաղորդակցությունները, ներառյալ էլեկտրոնային և տեքստային նամակները (messages), ինչպես նաև սոցիալական ցանցերի միջոցով ուղարկվող հաղորդագրությունները հղելիս, պետք է նշել հետևյալ կերպ.

1. Պետրոս Տեր-Մաթոսյան, Ֆեյսբուքյան նամակ հեղինակին, 1 օգոստոսի 2017 թ.:

2. Պետրոս Տեր-Մաթոսյան, Էլեկտրոնային նամակ հեղինակին, 15 մարտի 2017 թ.:

13. Ամսաթվերի գրելաձև

1. Խոսքին քերականորեն չկապվող ամսաթվերում նախադաս թվանշանը գրել առանց չակերտի և առանց հոդի, իսկ ամսանունը՝ սեռական հոլովաձևով: Պահպանել ամսաթիվ-ամսանուն-տարեթիվ հերթականությունը: Ամսանունը գրել փոքրատառ: Այսպես՝ 15 մայիսի 2018 թ. կամ 15.05.2019:

Թույլատրելի է նաև ամսանվան ուղիղ ձևով գրությունը: Օրինակ՝ 15 մայիս 2018 թ.: Շարադասության փոփոխության դեպքում ամսանունը կարող է գրվել նաև սկզբում: Օրինակ՝ մայիսի 15 2018 թ.:

1. Ամիս-ամսաթիվը և տարեթիվն իրարից ստորակետով չանջատել: Օրինակ՝ 3 հունվարի 2019 թ.կամ 2019 թ. փետրվարի 1:

2. Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերում գործածել միջակետ: Օրինակ՝ 25.01.2019:

3. «Թվական» բառի համառոտագրությունը՝ «թ.»-ն, գրել թվանշանից առանձին՝ թողնելով բացատ: Օրինակ՝ 31 հունվարի 2019 թ.: Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերից հետո «թ.»-ն չգրել՝ համարելով ավելորդ:

14. Տառադարձություն

Հայերեն

Ա ա - A a
 Բ բ - B b
 Գ գ - G g
 Դ դ - D d
 Ե ե - E e
 Չ զ - Z z
 Է է - E' e'
 Ը ը - Ë ë
 Թ թ - T' t'
 Ժ ժ - Zh zh
 Ի ի - I i
 Լ լ - L l
 Խ խ - Kh kh
 Ծ ծ - Ts ts
 Կ կ - K k
 Հ հ - H h
 Ձ ձ - Dz dz
 Դ դ - Gh gh
 Ճ ճ - Ch ch
 Մ մ - M m
 Յ յ - Y y
 Ն ն - N n
 Շ շ - Sh sh
 Ո ո - Vo vo (բառամիջում գրել օ ձևով)
 Չ չ - Ch' ch'
 Պ պ - P p
 Զ շ - J j
 Ռ ռ - R' r'
 Ս ս - S s
 Վ վ - V v
 Տ տ - T t
 Բ բ - R r
 Յ գ - Ts' ts'
 Ու ու - U u
 Փ փ - P'p'
 Ք կ - Q q
 Եվ է Ev ev
 Օ օ - O' o'
 Ֆ ֆ - F f

Ռուսերեն

А а - A a
 Б б - B b
 В в - V v
 Г г - G g
 Д д - D d
 Е е - E e
 Ё ё - Io io
 Ж ж - Zh zh
 З з - Z z
 И и - I i
 Й й - İ ï
 К к - K k
 Л л - L l
 М м - M m
 Н н - N n
 О о - O o
 П п - P p
 Р р - R r
 С с - S s
 Т т - T t
 У у - U u
 Ф ф - F f
 Х х - Kh kh
 Ц ц - Ts ts
 Ч ч - Ch ch
 Ш ш - Sh sh
 Щ щ - Shch shch
 Ъ ъ - “
 Ы ы - Y y
 Ь ь - ‘
 Э э - E' e'
 Ю ю - Iu iu
 Я я - Ia ia

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Տպագրությունը՝ օֆսեթ, թուղթ՝ օֆսեթ,
տպաքանակը՝ 100:

Համակարգչային ձևավորումը՝ Բրիստինե Վարդանյանի

Տպագրությունը՝